

Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից

Իրականացնող՝ Իրավաբանների իրավաբանների ասոցիացիա


Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Իրականացնող՝ «Օրենքը՝ հանուն իրավունքի գերակայության» ՀԿ

## «ՕՐԵՆՔԸ՝ ՀԱՆՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

### «ՄԱՏՉԵԼԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՄՈՏԵՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

#### ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



«Մատչելի կրթություն՝ առանց կոռուպցիոն ռիսկերի և տարբերակված մոտեցման» երկամսյա ծրագիրն իրականացրել է «Օրենքը՝ հանուն իրավունքի գերակայության» հասարակական կազմակերպությունը՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 547 740 (հինգ հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ: Ծրագրի տևողությունն է՝ 2016թ. հոկտոմբերի 1-ից մինչև 2016թ. նոյեմբերի 30-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ-ի կողմից:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է ՕՀԻԳ ՀԿ-ի կողմից, որի բովանդակության համար պատասխանատու են միմիայն հեղինակները և այն պարտադիր չէ, որ արտահայտի աջակցող կազմակերպությունների տեսակետները: Սույն հաշվետվությանը կից կազմվել է նաև «Մատչելի կրթություն՝ առանց կոռուպցիոն ռիսկերի և տարբերակված մոտեցման» ծրագրի Զեկույցը, որում տեղ գտած կարծիքները ևս պատկանում են ՕՀԻԳ ՀԿ-ին:

ք. Կապան,  
2016թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**«Մասշեղի կրթություն՝ առանց կոռուպցիոն ռիսկերի և տարբերակված մոտեցման» ծրագիր (բովանդակային հաշվետվություն)**

**1. Ծրագրի նպատակը.....3**

2. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները.....3

3. Ծրագրով կիրառված մեթոդաբանությունը.....4

4. Ծրագրով առաջարկված գործողությունները.....4

5. Ծրագրից ակնկալվող արդյունքները.....4

6. Ծրագրով իրականացված գործողությունները.....5

7. Ծրագրի արդյունքները.....6

7.1. Նախաբանի փոխարեն.....6

7.1.1. Իրավիճակային նկարագիրն ըստ ՏԻՄ-ի զարգացման ծրագրի՝ 2012թ դրությամբ.....9

7.1.2. Իրավիճակային նկարագիրն ըստ ՔՀԿ սեկտորի՝ 2015-2016թթ. դրությամբ.....12

7.1.2.1. Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի դիտարկումներից.....12

7.1.2.2. «Թրանսփարենսի ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության դիտարկումներից.....14

**7.2. Մեր՝ ՕՀԻԳ ՀԿ-ի կողմից իրականացվող Ծրագրի արդյունքները.....14**

7.2.1. Ներկայանալիություն, տեսանելիություն, մասշեղիություն, թափանցիկություն.....15

7.2.1.1. Կապանի քաղաքապետարանի պաշտոնական կայք <http://kapan.am>.....15

7.2.1.2. Մյունիքի մարզպետարանի պաշտոնական կայք <http://syunik.mtad.am>.....17

7.2.1.3. ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայք <http://edu.am>.....17

7.2.1.4. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն [www.minsportyouth.am](http://www.minsportyouth.am).....18

7.2.1.5. Համացանցային հարթակներ.....18

7.2.1.5.1. Ֆեյսբուկ (facebook) <https://www.facebook.com>.....18

7.2.1.5.2. Համացանցային այլ հարթակներ.....19

7.2.1.6. «Պաշտոնական հայտարարություններ»-կայք <https://www.azdarar.am/>, [www.gnumner.am](http://www.gnumner.am).....19

7.2.1.7. Հաստատությունների անվանումներով (նշումով) ցուցանակներ.....19

7.2.2. Երեխաների հերթագրում, հաշվառում, ցուցակագրում, պայմանագրեր.....19

7.2.2.1. Ուսումնասիրությունների արդյունքներ.....19

7.2.2.2. Հարցումների արդյունքներ.....20

7.2.3. Կադրերի ընտրություն, փոփոխություն.....20

7.2.3.1. ՏԻՄ ընտրությունների հետևանքների մասին.....20

7.2.3.2. Ավագանու նիստեր և որոշումներ.....22

7.2.3.3. Թափուր հաստիքների և դրանց համալրման վերաբերյալ տեղեկատվություն.....22

7.2.3.4. Հարցումների արդյունքներ.....23

7.2.4. Շենքային պայմաններով և անհրաժեշտ գույքով ապահովվածությունը (հարցում, դիտարկում).....24

7.2.5. Բյուջե, ծնողական և ուսումնառության վարձավճարներ, դրամահավաքություն.....30

7.2.5.1.1. Բյուջետային հատկացումներն՝ ըստ Կապանի համայնքապետարանի կայքի.....30

7.2.5.1.2. Բյուջետային հատկացումներն՝ ըստ Մյունիքի մարզպետարանի կայքի.....31

7.2.5.2. Ծնողական և ուսումնառության վարձավճարներ.....32

7.2.5.3. Դրամահավաքության դեպքեր (հարցումների և դիտարկման արդյունքներից).....35

7.2.6. Մատակարարներ, սնունդ, խոհանոց.....38

7.2.7. Տեղեկատվության տրամադրումը՝ որպես գործելառճ և կարիքների գնահատման գործիք.....38

7.2.7.1. Տարբերակված մոտեցում.....38

7.2.7.2. Անպատասխան մնացած գրություններ՝ չտրամադրված տեղեկատվություն.....39

7.2.7.2.1. Կապանի համայնքապետարան հասցեագրված.....39

7.2.7.2.2. Կապանի ՆՈւՀ-եր հասցեագրված.....40

7.2.7.2.3. Կապանի ԱԿՀ-ներ հասցեագրված.....41

8. Եզրակացություն.....42

9. Առաջարկություններ.....44

10. Հաշվետվությունը և Ձեկույցը՝ ըստ հասցեականության.....47

**«Մատչելի կրթություն՝ առանց կոռուպցիոն ռիսկերի և տարբերակված մոտեցման» ծրագիր  
(բովանդակային հաշվետվություն)**

Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսավորմամբ և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի (ԵԱՀԿ) կողմից համաֆինանսավորմամբ ու «Իրավաբանների հայկական ասոցիացիա» (ԻՀԱ) և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» (ԻԱԿ) հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված «Մատչելի կրթություն՝ առանց կոռուպցիոն ռիսկերի և տարբերակված մոտեցման» երկամսյա ծրագիրն (այսուհետ նաև՝ *Ծրագիր*) իրականացվել է «Օրենքը՝ հանուն իրավունքի գերակայության» հասարակական կազմակերպության (այսուհետ նաև՝ *ՕՀԻԳ ՀԿ*) կողմից:

**I. Ծրագրի նպատակը**

Ծրագիրը կոչված է եղել նվազեցնելու կրթության ոլորտի կոռուպցիոն ռիսկերը, նպաստելու՝ կրթության մատչելիության ապահովմանը և հնարավորինս բացառելու՝ տարբերակված մոտեցումը երեխաների, ծնողների և կրթության ոլորտի կադրերի ընտրության հարցում: Իսկ մասնավորապես, Կապանի համայնքապետարանի և համայնքապետարանի ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական (այսուհետ նաև՝ *ՆՈւՀ*) և արտադպրոցական կրթական (կրթադաստիարակչական-մարզատումնական, այսուհետ նաև՝ *ԱԿՀ*) հաստատությունների, Կապանի մանկական կենտրոնի (այսուհետ նաև՝ *ՄԿ*) կրթության ոլորտում ունեցած դերակատարության, գործառույթների, ինչպես նաև տվյալ ոլորտում առկա հիմնախնդիրների վեր հանման, բարձրաձայնման և լուծման տարբերակներ առաջարկելուն է կոչված եղել ծրագիրը: Նախատեսվել է, որ Ծրագրի շրջանակներում մշտադիտարկումը (*մոնիթորինգը*) և իրազեկումը, առաջարկությունները և պատկան մարմինների միջամտությունը կանխարգելող ազդեցություն կունենան նաև:

**II. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները**

Ծրագրի ուղղակի շահառուներն են թիրախային կազմակերպությունները և տարածաշրջանի բնակչությունը, այդ թվում՝ Կապանում գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններ (թիվ 1,2,4,5,6,7,8,9,10,11,12,13 ՆՈւՀ-երը, ընդհանուր՝ 12, այդ թվում՝ Կապանի թիվ 8 մանկապարտեզի «Կավարտ» մասնաճյուղը), արտադպրոցական կրթական (կրթադաստիարակչական-մարզատումնական) հաստատություններ («Կապանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն», «Դավիթ Համբարձումյանի անվան Կապանի մանկապատանեկան մարզադպրոց», «Կապանի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց», «Կապանի թիվ 2 երաժշտական դպրոց», «Կապանի թիվ 3 երաժշտական դպրոց», «Կապանի արվեստի մանկական դպրոց», «Կապանի գեղարվեստի մանկական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները (ՀՈԱԿ), «Կապանի քաղաքապետարանի մշակույթի կենտրոն», «Կապանի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց», «Կապանի մարմնամարզության մարզադպրոց» համայնքային բյուջետային հիմնարկները (ՀԲՀ), ընդհանուր՝ 10) և «Կապանի մանկական կենտրոն» ՀՈԱԿ՝ հաճախող ու ինչ-ինչ պատճառներով այդօրինակ կրթությունից (ընդունելությունից, հաճախումից, ծառայություններ ստանալուց) դուրս մնացած երեխաները (*սաներ, աշակերտներ, մարզիկներ և այլք*), նրանց ընտանիքները, նշված հաստատությունների աշխատողները (այդ թվում՝ տնօրեններ, մանկավարժներ,

<sup>1</sup> 2011 թվականին ստեղծվել է «Կապանի մանկական կենտրոն» ՀՈԱԿ-ը, որի նպատակը կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական, մանկավարժական, իրավական պաշտպանության աջակցության ծրագրերի իրականացումն է:

դաստիարակներ, խմբակավարներ, մարզիչներ և այլք), ինչպես նաև Կապանի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ ՏԲՄ, հիմնականում կրթության, մշակույթի և սպորտի բաժնի) համապատասխան բաժինների աշխատողները:

**Ծրագրի անուղղակի շահառուներ են** մեր և գործընկեր կազմակերպությունների ֆեյսբուկյան (facebook) հարթակի (պրոֆիլներ, էջեր, խմբեր, կայքեր) լսարանն ամբողջացնող օգտատերերը (խմբակիցներ, հետևորդներ, ընկերներ և այլք), ԶԼՄ-ները («Խուստուփ թիվի» և «Սոսի» հեռուստատեսությունները, «Մյունիք օնլայն», և այլ լրատվական կայքերը, «Մյունյաց երկիր» և այլ թերթերը) և այլք:

**Ծանոթություն:** Թյուրիմացաբար, սկզբնապես՝ Ծրագրի հայտում, «Կապանի մանկական կենտրոն» ՀՈԱԿ-ը չի նշվել թիրախային կազմակերպությունների ցանկում, իսկ «Կապանի թիվ 8 ՆՈւՀ» ՀՈԱԿ-ի «Կավարտ» մասնաձյուղը չի դիտարկվել որպես թիրախային առանձին կազմակերպություն, սակայն նշված կազմակերպություններում նույնպես (լրացուցիչ կերպով) իրականացվել են սոցիոլոգիական հարցումներ, դիտարկումներ և ուսումնասիրություններ՝ նկատի առնելով Ծրագրի ամբողջականության ապահովման սկզբունքն ու այդ կառույցները որպես առանձին թիրախ կազմակերպություններ դիտարկելու անհրաժեշտությունը (հակառակ դեպքում՝ տարբերակված մոտեցում կլինէր): Ըստ այդմ՝ հարցումների համար կազմվել են ոչ թե 3 (երեք), այլ 4 (չորս) տարբեր հարցադրումներով հարցաթերթեր, սակայն ՄԿ գրություն չի հասցեագրվել, քանի որ Ծրագրի ավարտի ժամկետի շրջանակներում հնարավոր չէր լինի պահպանել գրավոր տեղեկատվություն ստանալու «առավելագույն»՝ մեկամսյա ժամկետը:

### III. Ծրագրով կիրառված մեթոդաբանությունը

Ընտրվել են կարիքների գնահատման որակական և քանակական մեթոդներ, մոնիթորինգ (ուսումնասիրություն-հետազոտություն, հարցումներ, վերլուծություններ, այդ թվում՝ SPSS ծրագրով), դեղուկցիա (մասնավորից դեպի ընդհանուրը եզրահանգումների բխեցում, ընդհանրացում):

### IV. Ծրագրով առաջարկված գործողությունները:

Նախատեսվել էր.

1. ձևավորվել մոնիթորինգային փորձառու հարցազրուցավարների 3 (երեք) հոգանոց խումբ և խմբի անդամների համար հարցումների վերլուծաբան/դասընթացավարի և ծրագրի ղեկավար/դասընթացավարի միջոցով կազմակերպել լրացուցիչ վերապատրաստման եռօրյա դասընթաց՝ հարցումներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով,
2. պատրաստել տեղեկատվական թերթոն (1000 /մեկ հազար/ հատ տպաքանակով)՝ Ծրագրի ամբողջ ընթացքում բնակչությանը (այդ թվում՝ հարցումներին մասնակցած) բաժանելու նպատակով,
3. փորձագետների օգնությամբ տեղեկատվություն ստանալու և թիրախային կազմակերպություններ հարցումներ կատարելու նպատակով կազմել 24 (քսանչորս) գրություն ու 4 (չորս) տարբեր հարցադրումներով հարցաթերթ (ընդհանուր՝ 244 հարցաթերթ)՝ հիմքում նախադպրոցական ուսումնական հաստատություններ (այդ թվում՝ ք.Կապանի թաղ. Կավարտում գործող), արտադպրոցական կրթական հաստատություններ (հարցաթերթի դեպքում՝ ներառյալ մանկական կենտրոնը), համայնքապետարան և բնակչություն բաժանումը,
4. կազմակերպել հանրային քննարկման ձևաչափով հանդիպում-քննարկում և առաջարկությունների փաթեթ՝ պատկան մարմիններ ներկայացնելու նպատակով՝ ապահովելով ծրագրի ամբողջական լուսաբանումը ԶԼՄ-ներով,
5. Կազմել ամփոփ հաշվետվություն, առանձին՝ զեկույց (տպաքանակը՝ 30 օրինակից):

### V. Ծրագրից ակնկալվող արդյունքները



Մշտադիտարկումը ներառել է ոչ միայն կրթության (*հիարկե՝ մասամբ*) ոլորտը, այլ նաև տեղական ինքնակառավարման մարմնի (*ՏԻՄ*) գործելակերպը (*հիարկե՝ մասամբ, հիմնականում՝ կրթության ոլորտի*) և ՏԻՄ ընտրությունների կադրերի ընտրության և/կամ փոփոխության տեսանկյունից ազդեցության գնահատումը: Ծրագիրը տարածվել է Ծրագրային Թիմի (*6 հոգի*), թիրախային 24 կրթական (*նախադպրոցական ուսումնական, արտադպրոցական (կրթադաստիարակչական-մարզաուսումնական)*) հաստատության և մանկական կենտրոնի, համայնքապետարանի (*244 հարցվածների՝ ըստ հարցաթերթիկների, 1000 տեղեկատվական թերթոն ստացած քաղաքացու նկատմամբ*), իսկ ընդհանրապես՝ Կապանի և հարակից բնակավայրերի բնակչության զգալի մասի և համացանցի օգտատերերի նկատմամբ: Ամբողջացվել են կրթության ոլորտի թիրախային նշանակության առկա հիմնախնդիրները, կազմվել են տեղեկատվական թերթոններ, հաշվետվություն, զեկույց և առաջարկությունների փաթեթ՝ պատկան մարմիններ ներկայացնելու նպատակով՝ ապահովվելով Ծրագրի լուսաբանումը տեղական ՋԼՄ-ներով:

### VI. Ծրագրով իրականացված գործողությունները

Ծրագրի գործողությունների համաձայն՝ 2016թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին իրականացվել են հետևյալ գործողությունները՝ ըստ ժամանակացույցի.

Շաբաթ	Գործողություն
1-2-րդ	<ul style="list-style-type: none"> <li>❖ Ծրագրային թիմի հետ կնքվել են ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր:</li> <li>❖ Անհրաժեշտ նյութերի ձեռքբերման նպատակով գրեեսնյակային և մթերային ապրանքներ վաճառող (<i>իրացնող, մատակարարող</i>), միջքաղաքային ու ներքաղաքային ուղևորափոխադրումներ իրականացնող տաքսի ծառայությունների, տախի սարքերի կատրիջներ լիցքավորող, բրոշուրներ (<i>զեկույց</i>) տպագրելու հնարավորություն (<i>անհրաժեշտ սարքավորումներ, նյութեր</i>) ունեցող անհատ ձեռնարկատերերի հետ ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ:</li> <li>❖ Ծրագրի լուսաբանման նպատակով պատրաստվել է տեղեկատվական թերթոն, նյութեր են զետեղվել համացանցում, իրականացվել է նախնական իրազեկում:</li> <li>❖ Անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով ոլորտի իրավակարգավորմանը կոչված իրավական նորմերի վկայակոչմամբ կազմվել են ՏԻՄ, ՆՈւՀ-եր և ԱԿՀ-ներ (<i>Ժամանակի տրոջան պատճառով ՄԿ գրություն չի ուղարկվել, քանի որ ՄԿ-ն որպես թիրախ կազմակերպություն է դիտարկվել հարցումներ իրականացնողների առաջարկությամբ՝ հոկտեմբերի կեսերին</i>) հասցեագրված գրություններ ու դրանք կից փաստաթղթերով փոստային ծառայության միջոցով 13.10.2016թ. ուղարկվել են հասցեատերերին:</li> <li>❖ Հարցումների վերլուծաբանի կողմից կազմվել են 4 (<i>չորս</i>) տարբեր հարցաթերթեր (<i>ի տարբերություն Ծրագրով սկզբնապես նախատեսված 3 տեսակի հարցաթերթի</i>)՝ ըստ թիրախային կազմակերպությունների (<i>ՏԻՄ, ՆՈւՀ, ԱԿՀ, ՄԿ</i>) և հարցվողների «խմբավորման»: Հարցաթերթերն այնպես են կազմվել, որպեսզի ՏԻՄ-ի աշխատողների հետ լրացվի 7 (<i>ոթ</i>), ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների և ՄԿ-ի աշխատողների հետ՝ 3 (<i>երեք</i>)-ական (<i>ընդհանուր՝ 72 հարցաթերթ</i>), ՆՈւՀ-եր, ԱԿՀ-ներ հաճախող և ՄԿ-ի ծառայություններից օգտվող երեխաների ծնողների (<i>ու նաև 16 տարեկանը լրացած երեխաների, կամ մարզիչի կամ ծնողի ներկայությամբ՝ երեխայի մասնակցությամբ</i>) հետ՝ 4 (<i>չորս</i>)-ական հարցաթերթ (<i>ընդհանուր՝ 96 հարցաթերթ</i>), իսկ բնակչության հետ՝ 69 (<i>վաթսուհինը</i>) հարցաթերթ, այսինքն՝ հանրագումարային՝ 244 (<i>երկու հարյուր քառասունչորս</i>) հարցաթերթ:</li> <li>❖ Հոկտեմբերի 14-16-ին Կապանի քաղաքացիական-երիտասարդական կենտրոնում</li> </ul>

	<p>Ծրագրի հարցազրուցավարների համար Ծրագրի ղեկավարի, հարցումների վերլուծաբանի և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվեց եռօրյա դասընթաց՝ թիրախային կրթական կազմակերպություններում ուսուցումը կազմակերպելուն և գործունեությունը կանոնակարգելուն կոչված իրավական ակտերի, հարցումների ընթացքում հարցվողին ներկայանալու, հարցադրումները ճիշտ և նպատակային հնչեցնելու, դիտարկումն անկաշկանդ իրականացնելու և հարցաթերթիկները հարցվողի տեսանկյունից լրացնելու կարևորության մասին: Դասընթացին հնչեցված հարցերի և առաջարկությունների քննակումը հարցաթերթերի հարցերի վերանայման և մեկ այլ՝ նոր հարցաթերթ, կազմելու անհրաժեշտությունն առաջացրեց, իսկ հարցվողի և հարցում կատարողի դերերի բաշխմամբ կազմակերպված «դերային խաղ»-ը հնարավորություն տվեց հստակ պատկերացում կազմել նախատեսվող մոնիթորինգի մասին: Դասընթացի վերջում Հարցազրուցավարներին տրվեցին պեյջեր (<i>ներկայանալիությունն ապահովելու նպատակով</i>), ոլորտի կարգավորմանը կոչված իրավական ակտերի և այլ անհրաժեշտ տեղեկություններ ներառող թղթային նյութեր (<i>փաթեթներ</i>)՝ ձեռքի տակ ունենալու և հարկ եղած դեպքում օգտվելու համար:</p>
3- 4-րդ	<p>❖ Ծրագրի հարցազրուցավարները թիրախային կազմակերպություններում և բնակչության շրջանում իրականացրել են հարցումներ, դիտարկումներ և, միաժամանակ, բաժանվել են տեղեկատվական թերթյուններ (թերթիկներ): Հարցումներ իրականացնել չի հաջողվել միայն երկու թիրախային կազմակերպություններում՝ «Կապանի քաղաքապետարանի մշակույթի կենտրոն» և «Կապանի մարմնամարզության մարզադպրոց» ՀԲՀ-ներում, քանի որ նշված կազմակերպությունների տնօրենները արգելեցին հարցազրուցավարներին շենքի ներսում մոնիթորինգ իրականացնել, իսկ աշխատակիցները՝ տնօրենների կողմից արգելված լինելու պատճառաբանությամբ չցանկացան մասնակցել անանուն հարցումներին:</p>
4-5-րդ	<p>❖ Ծրագրի հարցումների վերլուծաբանի կողմից հարցումներին զուգընթաց իրականացվեց լրացված հարցաթերթիկների և հարցազրուցավարների կողմից հարցաթերթերից դուրս՝ հարցման ու դիտարկման միջոցով ստացած տեղեկատվության վերլուծություն (<i>SPSS ծրագրով</i>):</p> <p>❖ ԻՀԱ-ին ներկայացվեց միջանկյալ բովանդակային հաշվետվություն:</p>
6-րդ	<p>❖ Նոյեմբերի 11-ին կազմակերպվեց հանրային քննարկման ձևաչափով հանդիպում-քննարկում՝ ծրագրի նախնական արդյունքների ներկայացման նպատակով: Հրավիրվել էին Կապանի համայնքապետարանի և համայնքապետարանի ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների, ՄԿ-ի մեկական ներկայացուցիչներ, սակայն ներկայացել էին ոչ բոլորը: Հանդիպում-քննարկումը լուսաբանելու նպատակով ներկա էին «Խուստուփ թիվի» և «Սոսի» հեռուստատեսությունների ներկայացուցիչներ:</p>
7-րդ	<p>❖ Ստացված տեղեկատվության ամփոփում, վերլուծություն (<i>թիրախային կազմակերպություններ հասցեագրված մեր բոլոր գրությունները մնացել են անպատասխան, ուստի որպես «արդյունք» այդ է դիտարկվում նաև</i>):</p>
8-րդ	<p>❖ Ձեկույցի (<i>գունավոր, 30 օրինակ</i>) և առաջարկությունների փաթեթի կազմում:</p> <p>❖ Հաշվետվության պատրաստում և ներկայացում:</p>

## VII. Ծրագրի արդյունքները

### 7.1. Նախաբանի փոխարեն



2010թ. դրությամբ՝ կրթությունը ամենակոռուպացված երեք ինստիտուտներից մեկն էր համարվում Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ)՝ համաձայն «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն»-ի տնային տնտեսությունների հետազոտության<sup>2</sup>:

«Այ Փի Էս Սի» կազմակերպության՝ 2011 և 2013 թթ իրականացրած սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների համաձայն (2013թ. հունիսին)՝ հարցվածների 17.8%-ը համարել է, որ կրթության և գիտության ոլորտում առավել շատ անօրինականություններ են տեղի ունենում (համեմատած այլ ոլորտների հետ): Թերևս, 2011թ. հունիսին նույն կարծիքն է ունեցել հարցվածների 16.9%-ը: 2011թ. հարցվածները խնդիրների շարքում առաջինը նշել են կաշառակերության մասին<sup>3</sup>:

«Թրանսփարենսի ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության (ԹԻ) կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿՀՀ) 2014 թվականի տվյալների համաձայն՝ Հայաստանը չի բարելավել իր դիրքը 175 երկրների շարքում: Հայաստանում ԿՀՀ-ն 2012 թվականի՝ 34-ից 2013 թվականին դարձել է 36, իսկ 2014թ.-ին՝ 37: 2012-2014թթ. ընթացքում համաթվի նման աննշան աճը առաջընթացի վկայություն համարվել չի կարող<sup>4</sup>:

Թերևս, զգալի փոփոխություններ դեռևս չկան (Հայաստանը 98-95-րդ հորիզոնականներում է<sup>5</sup> և մասամբ այդ են վկայում կառավարության կազմում ներկայումս կատարվող կադրային փոփոխությունները (սկսած վարչապետի փոփոխությունից), տարբեր ամբիոններից բարեփոխումների իրականացման անհրաժեշտության մասին հայտարարությունները<sup>6</sup>, կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ տարբեր համացանցային հարթակների անդրադարձը<sup>7</sup> և կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով ՀՀ-ին դրամաշնորհներ տրամադրելը<sup>8</sup>:

<sup>2</sup> Կոռուպցիայի բնույթը ՀՀ-ում, դրա հասարակական ընկալումները և ազդեցությունը մարդկային զարգացման վրա: Թադևոսյան Ա., Երևան, 2009, <http://goo.gl/h4iP1B>, էջեր 12-13:

<sup>3</sup> ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները և զարգացման ռազմավարական առաջարկները. սոցիոլոգիական հետազոտություն GS Index-2/13 / «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, IPSC, հուլիս 2013, <http://goo.gl/iwcEqH>, նաև՝ ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները և զարգացման ռազմավարական առաջարկները. սոցիոլոգիական հետազոտություն GS Index-3/11 / «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, IPSC, հոկտեմբեր 2011, <http://goo.gl/3fDXQN>

<sup>4</sup> Կոռուպցիայի ընկալման համաթիվ. ԹԻ-ի 2014-ի տվյալներով՝ Հայաստանի գնահատականն ավելի բարձր է հարևանների համեմատությամբ / Մառա Խոջոյան, ԱրմենիաՆաու, <http://goo.gl/4qhCnb>

<sup>5</sup> CIVILNET, 27 հունվար, 2016 12:30 <http://www.civilnet.am/news/2016/01/27/corruption-perception-index-2015-armenia-ranking/285746>, ինչպես նաև՝ Հայաստանի հանրային ռադիո (armradia.am), 17:52, 27 նոյ 2016, Արմեն Վարդանյան--Ըստ ԹԻ-ի՝ Հայաստանում կոռուպցիան «կայուն» դիրքերում է <http://www.armradio.am/hy/2016/01/27>

<sup>6</sup> NEWS.am ինտերնետային կայքի 03.11.2016թ «Վարչապետ. մեկ ամսում պետք է կոռուպցիայի դեմ նոր օրինագիծ պատրաստել» խորագրով հրապարակումը՝ <https://news.am/arm/news/355158.html>

<sup>7</sup> «Թրանսփարենսի ինթերնեշնլ» կազմակերպության ինտերնետային կայքի 26.09.2014թ «Մանկապարտեզում տեղ չկա» խորագրով հրապարակումը (<http://transparency.am/hy/cases/view/5430>) վերաբերում է նման դեպքերից մեկին, ըստ որի՝ «...Երևանյան մանկապարտեզում երեխային տեղավորելու համար, երբ ծնողը դեմ է առնում երկար հերթացուցակի, անհրաժեշտ է կլորիկ գումար՝ 200.000 դրամ: Գումարն էլ տրվում է ոչ թե մանկապարտեզի տնօրենին, այլ քաղաքապետարանի կրթության վարչության աշխատակիցներին: Իսկ տվյալ վարչության պետն էլ Գայանե Սողոմոնյանն է՝ վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարյանի կինը: Այն Զաքարյանի, ով բացահայտում է պետական բյուջեի վատնումներն ու այլ չարաշահումներ: Կաշառքի պահանջին բախվել է 2,5-ամյա Արեգի մայր Սյուզաննա Պողոսյանը, երբ փորձել է նրան տեղավորել Կենտրոնի թիվ 17 մանկապարտեզում: Պարզվել է, որ Արեգը դիմողների ցուցակում 720-րդն է, նրա հերթը կհասներ 48 տարի անց, իսկ որպեսզի վերջինիս մայրը այդքան չսպասեր՝ նրան «լուսավորել» են, որ պետք է դիմի վերընշված գումարի օգնությամբ: Հեղինակ՝ Աննա Ջախարյան »:

<sup>8</sup> <http://newsarmenia.am/> -ի 24.12.2015թ «Կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով USAID-ին ՀՀ կառավարությանը 750 հազար դոլարի դրամաշնորհ կտրամադրի» խորագրով հրապարակումը՝ [http://newsarmenia.am/am/news/econo\\_my/-usaid-750-hakakorupcia\\_cragir/](http://newsarmenia.am/am/news/econo_my/-usaid-750-hakakorupcia_cragir/), ինչպես նաև՝ Newsinfo-ի «ԱՄՆ-ն աջակցում է ՀՀ 2015-2018 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը» խորագրով [b24.am02/5/2016](http://www.newsinfo.am/arm/article/view/V1xhYlu6K1), 6:00 հրապարակումը՝ <http://www.newsinfo.am/arm/article/view/V1xhYlu6K1>, ըստ որի՝ ստորագրվել է համաձայնագիր՝ ՀՀ կառավարության և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջև 2013 թ. սեպտեմբերի 28-ին կնքված օժանդակության համաձայնագրի ներքո իրականացվող «Օժանդակություն Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը» ծրագրի վերաբերյալ:



Ըստ Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) արդյունքների՝ ՀՀ-ում 2013թ. կրթական համակարգը 58 %-ով տեղ է գտել առավել կոռուպացված ոլորտների շարքում<sup>9</sup>:

2014թ. ապրիլի 10-ի նիստում ՀՀ կառավարությունը հաստատեց «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգ»-ը<sup>10</sup>:

2014թ. աշնանը հրապարակվեց ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծը (*այսուհետ նաև՝ Ռազմավարություն*), որում առանձնացված էին հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման չորս ոլորտներ՝ կրթություն, առողջապահություն, պետական եկամտունների հավաքագրում և ոստիկանություն: Որոշ ժամանակ անց ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում արդեն տեղադրվեց Ռազմավարության իրականացման 2015-2018 թթ միջոցառումների ծրագիրը (*այսուհետ նաև՝ Միջոցառումների ծրագիր*):

**Մ**իջոցառումների ծրագրի կրթության ոլորտի հետ կապված հիմնական խնդիրներն են.

1. վերհանել ՀՀ կրթության ոլորտում առավել տարածված<sup>11</sup> կոռուպցիոն խնդիրներն ու կոռուպցիոն վարքի ինստիտուցիոնալ և նորմատիվ առանձնահատկությունները,
2. վերլուծել հակակոռուպցիոն նոր ռազմավարությունն ու միջոցառումների ծրագիրը տարբեր դիտանկյուններից՝ հիմնախնդիրների և միջոցառումների տրամաբանական կապի առկայություն, միջոցառումների անհրաժեշտություն, հիմնավորվածություն և փոխկապակցվածություն, և այլն,
3. առաջարկել կրթության ոլորտում հակակոռուպցիոն պայքարի վերաիմաստավորման այլընտրանքային մոտեցումներ/հայեցակետեր...

**Մ**ինչդեռ, ի թիվս բազմաթիվ բացթողումների, բազմիցս բարձրաձայնվել է նաև Ռազմավարության՝ «Կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները» հատվածում **նախադպրոցական, արտադպրոցական, նախնական** (*արհեստագործական*) և միջին մասնագիտական, ինչպես նաև հետբուհական **կրթության կոռուպցիոն խնդիրների** ու դրանց համար առաջարկվող լուծումների (*հակակոռուպցիոն միջոցառումների*) հստակ **արտացոլված չլինելը**<sup>12</sup>, թեև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ն բազմաթիվ միջազգային պարտավորություններ է ստանձնել<sup>13</sup>:

**Կ**րթության կառավարման և վերահսկողական լիազորություններ ունեցող մարմիններում՝ Կրթության և գիտության նախարարությունում (*ԿԳՆ*), Կրթության պետական տեսչությունում (*ԿՊՏ*), Լիցենզավորման գործակալությունում (*ԼԳ*) և այլ կառույցներում առկա կոռուպցիոն խնդիրները Ռազմավարության մեջ քննարկված չեն: Թեև, անժխտելի է, որ կառավարման գործառույթներ իրականացնող, հսկողության և վերահսկողության լիազորություններ ունեցող, տարատեսակ «սանկցիաների» կիրառման իրավասություն ունեցող ցանկացած կառույցում նման ռիսկերը բացառված չեն, ավելին՝ առկա են նպաստավոր բազմաթիվ գործոններ:

9 Կոռուպցիայի բնույթը ՀՀ-ում, դրա հասարակական ընկալումները և ազդեցությունը մարդկային զարգացման վրա / Թադևոսյան Ա., Երևան, 2009, <http://goo.gl/h4iP1B>, էջեր 12-13:

<sup>10</sup> ՔՀԿ-ներն ու հասարակության լայն շերտեր անընդունելի են համարել առանց հանրային քննարկումների «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի» հայեցակարգի ընդունումը / 168 ժամ, <http://goo.gl/LHIqSD>

<sup>11</sup> Ընդգծումը մերն է՝ սակայն իմաստային ձևակերպումը թույլ է տալիս նշել, որ կրթության ոլորտում կոռուպցիոն խնդիրների առկայությունը պետության կողմից էլ է արձանագրվում և դրանցից առանձնացվում՝ առավել տարածվածների վերհանումն ու լուծումներ առաջարկելու անհրաժեշտությունը:

<sup>12</sup> «Հակակոռուպցիոն քաղաքականությունը ՀՀ կրթության ոլորտում» հետազոտություն, 2015թ., Ավետիք Մեջլումյան (Բաց հասարակության հիմնադրամների աջակցությամբ):

<sup>13</sup> 2004 թ. հունվարին Հայաստանն անդամակցել է ԿԴՊՊԽ-ին, իսկ 2004 թ. հունիսին և դեկտեմբերին, ստորագրել ու վավերացրել է Եվրախորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիա»-ն և «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիա»-ն: 2005 թ. ՀՀ-ը ստորագրել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան, որը 2006 թ. վավերացվել է ՀՀ ԱԾ-ի կողմից: 2012 թ. ապրիլի 17-ին Հայաստանը միացել է Բաց կառավարման համա-գործակցությանը:



Հակակոռուպցիոն քաղաքականության հաջորդ մակարդակը, դա նախարարության մակարդակն է, այս դեպքում՝ ԿԳՆ կողմից մշակվող և/կամ գործարկվող հակակոռուպցիոն ծրագրերը: ԿԳՆ պաշտոնական կայքի ուսումնասիրությունից հետևում է, որ կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի՝ ԿԳ նախարարության կողմից տարբեր ժամանակահատվածների համար հաստատված ծրագրեր են իրականացվել(-վում) և դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվություն-տեղեկանքներ են հրապարակվել(-վում) ԿԳՆ կայքում: Թերևս, մեր համոզմամբ ևս՝ այդ առումով, ԿԳՆ հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման ընթացքը շատ ավելի հաշվետվողական ու թափանցիկ է, քան Կառավարության հաստատած հակակոռուպցիոն ռազմավարությունների ու միջոցառումների ծրագրային իրագործումը, գուցե և այն պարզ պատճառով, որ դրանք մի աստիճանով ավելի մոտ են արդյունքները կրողներին՝ հանրությանը: Սակայն, այդ մակարդակում ևս շատ հարցեր մնում են դեռևս անտեսված կամ զգալի չափով այլ՝ ավելի «ցածր» օղակներում գտնվող մարմինների (*համայնքներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, քոլեջներ, դպրոցներ, մանկապարտեզներ և այլ*) լիազորություններին թողնված, իսկ վատագույն դեպքում՝ ոչ հասցեականացված: Ահա, այդպիսի մի իրավիճակի ենք բախվում, երբ փորձում ենք հակակոռուպցիոն միջոցառումների և խնդիրների լուծման վերոնշյալ տեսանկյունից դիտարկել նախադպրոցական և արտադպրոցական կրթական համակարգն ու ոլորտային խնդիրները, որոնք մեր դեպքում՝ առավելապես թողնված են Կապանի համայնքապետարանին (*դրանք մասամբ արտացոլված են նաև համայնքի զարգացման ծրագրերում*):

Փաստորեն, այն հիմնախնդիրները, որոնք առկա են և կարող են առկա լինել նախադպրոցական և/կամ արտադպրոցական կրթության (*կրթական ծառայությունների ոլորտ*) ոլորտում ու համակարգում, ինչպես նաև դրանց լուծումներ փնտրելու և պատասխանատու որոշումներ կայացնելու պարտականությունները բոլոր այն համայնքներում, որտեղ նշված հաստատությունները համայնքապետարանի ենթակայությամբ են գործում՝ թողնված են առավելապես ՏԻՄ-երին<sup>14</sup>:

Իհարկե, որոշ համայնքներ իրենց այդ գործառույթն իրականացնում են տեսանելի, թափանցիկ, մատչելի ու հնարավորինս արդյունավետ, իսկ որոշ համայնքների դա դեռևս չի հաջողվում՝ պայմանավորված տարբեր պատճառներով, այդ թվում՝ ֆինանսական միջոցների բացակայությամբ կամ սղությամբ<sup>15</sup>:

### ***7.1.1. Իրավիճակային նկարագիրն ըստ ՏԻՄ-ի զարգացման ծրագրի՝ 2012թ դրությամբ***

*(2016թ. նույնական պատկերը կարող էր կազմվել, եթե թիրախային կազմակերպությունների կողմից տրամադրված լինեին մեր՝ տեղեկատվություն ստանալուն ուղղված գրությունների պատասխանները կամ արդեն իսկ կազմված լինեին նոր՝ հնգամյա համայնքային զարգացման ծրագիրը, սակայն, այդուհանդերձ նշված զարգացման ծրագրով ՏԻՄ-ի կողմից են արձանագրվել հիմնախնդիրներ, որոնք ըստ մեր Ծրագրի արդյունքների՝ ցայսօր լուծված չեն-դրանցից առավել կարևորները մենք կընդգծենք)*

«Կապան համայնքի սոցիալ-տնտեսական 2013-2016թթ քառամյա զարգացման ծրագիր»-ի (*հաստատվել է՝ համայնքի ավագանու 28.12.2012թ. թիվ 106-Ն որոշմամբ, այսուհետ նաև՝ Զարգացման ծրագիր*) գերակա ուղղություններից են նաև.

- ❖ որակյալ, մատչելի և հարմարավետ նախադպրոցական հաստատությունների համակարգի կայացումը,
- ❖ հասարակության մշակութային մակարդակի բարձրացումը և ազգային մշակութային ավանդույթների պահպանումը,
- ❖ սպորտի զարգացման և մասսայականացման նպաստավոր պայմանների ստեղծումը...

<sup>14</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

<sup>15</sup> Տե՛ս նաև՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից 2015-2016թթ. ՀՀ տարբեր քաղաքներում իրականացված «Թափանցիկ նախադպրոցականներ» ծրագիրն ու ծրագրային հրապարակումները <http://www.asparez.am/> կայքում:

Զարգացման ծրագրի «Մշակույթի և երիտասարդության հարցեր» բաժնում որպես հիմնախնդիրներ են նշվել.

- ❖ մշակութային շենքերի վերանորոգում,
- ❖ մշակութային հաստատությունների ջեռուցման համակարգերի ներդրման խնդիրներ...

Զարգացման ծրագրի «Նախադպրոցական ուսումնական հաստատություններ» բաժնում որպես հիմնախնդիրներ են նշվել.

- ❖ նախակրթարանները ապահովված են հիմնականում հին գույքով և շենքերի մեծ մասն ունեն վերանորոգման կարիք,
- ❖ նախակրթարանների շենքերի մասնակի վերանորոգումներ,
- ❖ գույքի ձեռքբերում,
- ❖ անողի մատակարարման կանոնակարգում, կենտրոնացում և վերջինիս անվտանգության խնդիրների վերահսկում,
- ❖ տնօրենների և դաստիարակների մասնագիտական կրթության համապատասխանության ստուգում, ատեստավորումների անցկացման անհրաժեշտություն և աշխատանքի ընդունման համար մրցույթների կազմակերպում,
- ❖ դաստիարակչական գործընթացներում արդիական մեթոդների կիրառում՝ երեխայի ֆիզիկական, բարոյական, մտավոր զարգացման հիմքերի ստեղծման, մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովման ուղղությամբ:

Զարգացման ծրագրի «Նախադպրոցական ուսումնական հաստատություններ» բաժնի «Նախատեսվող ծրագրային միջոցառումներ» մասում նշված է հետևյալը.

- ❖ համացանցի հաստատում կրթության բաժնում և բաժին-մանկապարտեզ կապի համակարգում,
- ❖ նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգման աշխատանքների կազմակերպում,
- ❖ նոր մանկապարտեզների հիմնադրում,
- ❖ նախադպրոցական կրթական գրականության ապահովում,
- ❖ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածության ապահովում,
- ❖ նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների վերապատրաստում,
- ❖ երեխաների խնամքին ուղղված ծառայությունների որակի բարելավում,
- ❖ մանկավարժների գործունեության խրախուսում, մրցույթների անցկացում,
- ❖ ուսումնասիրաստիարակչական գործընթացում ինտերակտիվ մեթոդների կիրառման ապահովում,
- ❖ նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառավարման համակարգի բարելավում:

Ըստ Զարգացման ծրագրի՝ համայնքում գործում է 12 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Նախակրթարաններ հաճախում են 1447 երեխաներ: Աշխատում են 390 աշխատակիցներ: Կապան համայնքի նախադպրոցական կրթության ոլորտում 12 մանկապարտեզները համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ են:

Զարգացման ծրագրի «Ֆիզկուլտուրա և սպորտ» բաժնում որպես հիմնախնդիրներ են նշվել.

- ❖ բնակչության մեջ արմատավորված չէ ֆիզիկական կուլտուրան և առողջ ապրելակերպը,
- ❖ այսօրվա դրությամբ քաղաքի մարզադպրոցների բազաները գտնվում են չափազանց անմխիթար վիճակում և ունեն նորոգման և կահավորման խնդիր, որը մեծ խոչընդոտ է նոր սաների ընդգրկմանը և մարզումների պատշաճ ծանրաբեռնվածության ապահովմանը,
- ❖ համայնքում չունենք նաև մրցումային դահլիճ, որտեղ հնարավորություն լինի կազմակերպելու համայնքային մրցումներ:

Զարգացման ծրագրի «Ֆիզկուլտուրա և սպորտ» բաժնի «Նախատեսվող ծրագրային միջոցառումներ» մասում նշված է հետևյալը.

- ❖ մարզադպրոցների համար մարզական գույքի ձեռքբերում,
- ❖ մարզադպրոցների շենքերի և մարզադաշտերի վերանորոգում,
- ❖ մարզադպրոցների ջեռուցման համակարգերի կառուցում և վերանորոգում,
- ❖ մարզադպրոցների ցնցուղների վերանորոգում և կառուցում,
- ❖ մարզադպրոցների տարածքների բարեկարգում,
- ❖ մասնագիտացված նոր մարզադահլիճների կառուցում,
- ❖ պարի և սպորտային պարերի մարզադահլիճի ստեղծում:

Ըստ Զարգացման ծրագրի՝ քաղաքապետարանի 3 մարզադպրոցներում աշխատում են 59 մարզիչ - մանկավարժներ, հաճախում՝ 377 սաներ: Պատերազմից հետո քաղաքի սպորտային բնագավառը ժառանգեց կիսով չափ ավերված, առանց մարզական գույքի խարխուլ տնտեսություն: Համայնքապատկան մարզադպրոցները չունեն ջեռուցման համակարգ, որի պատճառով նվազում է ձմեռային սեզոնում մարզումների որակն ու արդյունավետությունը, սաների հաճախումները: Մարզադպրոցներում օգտագործվող մարզագույքի մեծամասնությունն ունի 30 –ամյա վաղեմություն:

Ըստ Զարգացման ծրագրի՝ քաղաքապետարանի ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերաբերյալ նշվել է հետևյալը

	Համայնքի նախադպրոցա կան ուսումնական հաստատություններ	Նախագծով նախատեսված տեղերի թիվը		Փաստացի խմբերի թիվը	Մաների թիվը ցուցակային	5 տարին լրացած սաների թիվը	Մանկավարժների թիվը	Շենքի առկա վիճակը՝ 2012թ.
		պետական	փաստացի					
1	Թիվ 1 ՆՈւՀ	140	160	6	156	45	17	մասնակի
2	Թիվ 2 ՆՈւՀ	140	126	5	126	28	15	մասնակի
3	Թիվ 4 ՆՈւՀ	180	173	7	174	48	21	մասնակի
4	Թիվ 5 ՆՈւՀ	140	96	4	84	25	13	մասնակի
5	Թիվ 6 ՆՈւՀ	180	168	6	168	45	18	մասնակի
6	Թիվ 7 ՆՈւՀ	140	146	6	145	38	15	մասնակի
7	Թիվ 8 ՆՈւՀ	140	125	5	109	31	16	մասնակի
8	Թիվ 9 ՆՈւՀ	120	151	6	152	56	18	մասնակի
9	Թիվ 10 ՆՈւՀ	140	90	4	87	20	14	չի կատարվել
10	Թիվ 11 ՆՈւՀ	25	15	1 խառը	13	2	3	մասնակի
11	Թիվ 12 ՆՈւՀ	115	105	5	104	35	15	մասնակի
12	Թիվ 13 ՆՈւՀ	208	123	4	116	33	13	խոհանոցը վերանորոգված չէ
13	Թիվ 8 ՆՈւՀ Կավարտ մ/ճ	80	13	1 /խառը/	13	4	3	չի վերանորոգվել

Ըստ Զարգացման ծրագրի՝ քաղաքապետարանի ենթակայությամբ գործող արտադպրոցական ուսումնական (կրթական) հաստատությունների վերաբերյալ նշվել է հետևյալը

Հ/Հ	Հաստատության անվանումը	Մաների թիվը	Մանկավարժների թիվը	Շենքի առկա վիճակը	Մանրություն
1	Թիվ 1 երաժշտական դպրոց	230	52	չի վերանորոգվել	
2	Թիվ 2 երաժշտական դպրոց	135	22	մասնակի	



3	Թիվ 3 երաժշտական դպրոց	94	16	վերանորոգված	
4	Արվեստի դպրոց	119	15	չի վերանորոգվել	
5	Գեղարվեստի դպրոց	52		մասնակի	
6	Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն	300	45	մասնակի	
7	Աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց	126	9	մասնակի	
8	Մարմնամարզության դպրոց	133	9	չի վերանորոգվել	
9	Մանկապատանեկան մարզադպրոց	118	6	մասնակի	

Ծանոթություն: Ցանկում ներառնված չէ «Կապանի քաղաքապետարանի մշակույթի կենտրոն» ՀԲՀ-ն:

Կապանի համայնքապետարանը նոր՝ հնգամյա (2017-2021թթ) զարգացման ծրագիր կազմելու և ծրագրի կազմմանը այլ շահագրգիռ կողմերին մասնակից դարձնելու նպատակով ա/թ հոկտեմբերի 10-ին հայտարարություն է տարածել<sup>16</sup>, իսկ զարգացման ծրագրի վերաբերյալ նախնական քննարկումը նախատեսվում է դեկտեմբերի 15-ին<sup>17</sup>:

**7.1.2.Իրավիճակային նկարագիրն ըստ ՔՀԿ սեկտորի՝ 2015-16թթ. դրությամբ**

(տվյալներ, որոնք ընդունելի են այնքանով, որքանով ներկայացվել են մեզ համար հեղինակավոր քաղաքացիական հասարակական կազմակերպության<sup>18</sup> կողմից, սակայն նշված տվյալները ՕՀԲԳ ՀԿ-ի կողմից իրականացվող Ծրագրի և Ծրագրի շրջանակներում կազմված Զեկույցի համար շատ չնչին մասով են եղել կիրառելի, հաշվի առնելով, որ դրանցում առկա տեղեկատվությունը հիմնականում վերաբերում է 2014-2015թթ և, միաժամանակ, տվյալ ծրագրի հարցադրումները մեր ծրագրային հարցադրումներից այլ ասպեկտով են, հետևաբար հնարավոր չէ դրանք դիտարկել մեր հարցադրումների համար որպես պատասխաններ, այսինքն՝ ակնհայտ է, որ նշված՝ ԺԱԱ-ի ծրագիրն ունեցել է այլ նպատակներ և ուղղվածություն, քան մեր՝ ՕՀԲԳ ՀԿ-ի կողմից իրականացվող Ծրագրի ուղղվածությունն ու նպատակներն են):

**7.1.2.1.Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի դիտարկումներից.**

Ա/թ հոկտեմբերի կեսերին՝ Կապանի համայնքապետարանից տեղեկացանք, որ դեռևս 2015թ. ԱՄՆ պետական դեպարտամենտի Փոքր դրամաշնորհների ծրագրի դրամաշնորհային աջակցությամբ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի (այսուհետ նաև՝ ԺԱԱ) կողմից իրականացված (մինչև 2016թ. ապրիլ, սակայն հաշվետվությունների ուսումնասիրությունները վկայում են, որ մոնիթորինգների տվյալները հիմնականում վերաբերում են 2014-2015թթ., ուստի ակնհայտ է, որ կա՛մ ծրագիրը չի ունեցել «խորացված» հարցադրումներ, կա՛մ տեղեկատվությունն է տրամադրվել ոչ ճիշտ և ամբողջական, որն ըստ մեզ՝ ավելի հավանական է) «Թափանցիկ նախակրթարաններ» ծրագրի (ծրագիրը ներառել է ՀՀ մի շարք քաղաքներ,

<sup>16</sup> Կապանի համայնքապետարանի կայքի 10.10.2016թ. Հայտարարության (<http://www.kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=482>) համաձայն. «Հարգելի՛ կապանցիներ Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են ընդգրկվել «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի» նախագծի մշակման նախապատրաստական աշխատանքների կառավարման հանձնաժողովում /խորհուրդ/, կարող են դիմել Կապանի քաղաքապետարան /հեռախոս 52039, 22666/:

Հանձնաժողովում կարող են ընդգրկվել համայնքային ծառայողներ, ավագանու անդամներ, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատողներ, համայնքի քաղաքացիական հասարակության և մասնավոր /բիզնես/ հատվածի ներկայացուցիչներ, փորձագետներ, բնակիչներ և այլ շահագրգիռ անձինք: Վերջնաժամկետ՝ 29/12/2016թ.»:

<sup>17</sup> Կապանի համայնքապետարանի կայքի 01.12.2016թ. հայտարարության (<http://www.kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=494>) համաձայն. «2016 թվականի դեկտեմբերի 15-ին՝ ժամը 15:00-ին, համայնքապետարանի նիստերի դահլիճում կազմակերպվելու է Կապան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հանրային լսում: Բոլոր շահագրգիռ անձանց հրավիրում ենք մասնակցելու հանրային քննարկմանը: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 22666 հեռախոսահամարով կամ այցելել Կապանի համայնքապետարանի ծրագրերի եւ արտաքին կապերի բաժին, հասցեն՝ Ա. Մանուկյան 5ա.»:

<sup>18</sup> Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը <http://www.asparez.am/>

սակայն ուսումնասիրությունը վկայում է, որ այն առավելապես ընդգրկում և վերաբերում է Գյումրի և Վանաձոր քաղաքներին, իսկ Կապանում ուսումնասիրություններին մասնակից չէր դարձվել ԺԱԱ-ի Կապանի գրասենյակը) արդյունքում կազմված զեկույցի (այսուհետ նաև ԺԱԱ Ձեկույց) համաձայն.

- ✚ համայնքային ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երում սաների ուսումնառության տեղերի թվով Կապանում 29,5 բնակչին մեկ սանի տեղ է բաժին ընկնում,
- ✚ մեկ աշխատողը միջին հաշվով սպասարկում է 5,23 սանի,
- ✚ յուրաքանչյուր սանի կրթության համար տարեկան միջին հաշվով ծախսը կազմել է 254,291 ՀՀ դրամ/սան հարաբերակցությունը,
- ✚ ընդհանուր աշխատողների աշխատավարձը կազմել է 280 177 500 ՀՀ դրամ,
- ✚ սննդի ծախսը՝ 69 128 950 ՀՀ դրամ, կոմունալ վճարումները՝ 27 858 700 ՀՀ դրամ, այլ՝ 16 477 491 ՀՀ դրամ,
- ✚ Կապանի համայնքապատկան մանկապարտեզների ընդհանուր բյուջեն ըստ ծնողական վարձավճարների և համայնքի կողմից հատկացված գումարների եղել է հետևյալ հարաբերակցությամբ՝ 74 304 000 ՀՀ դրամը ծնողական վարձավճարներ, իսկ 319 338 641 ՀՀ դրամը՝ համայնքային բյուջեից (համայնքի բյուջեի 28,34%-ը) հատկացված գումար (տես՝ Ձեկույցի 3-11րդ էջերը),
- ✚ Կապանում 1500-ից ավելի երեխայից միայն 45-69-ն է օգտվում վարձավճարների զեղչերից (տես՝ Ձեկույցի 12-րդ էջը),
- ✚ Կապանի մանկապարտեզներին սննդամթերք և այլ ապրանքներ մատակարարող կազմակերպությունները 2015թ. դրությամբ եղել են «Զանգեզուր-Հասկ» ՍՊԸ-ն (հաց), «Կամպատ» ՍՊԸ-ն և «ՄԱՍ ԱԲ» ՍՊԸ-ն (հաց և այլ սննդամթերք), որոնք ապրանքներ են մատակարարել Կապանի թվով 12 ՆՈւՀ-երի (տես՝ Ձեկույցի 22-րդ էջը),
- ✚ Կապանի մանկապարտեզներում հաստիքացուցակների արձանագրված շեղումները եղել են հետևյալ կերպ.
  - ✓ Կապանի թիվ 5 մանկապարտեզ. 4 խումբ ունի. սահմանված է 0,5 դրույքով մեթոդիստ, սակայն հաստիքացուցակով կա մեթոդիստի 1 հաստիք. սահմանված է գլխավոր-հաշվապահ և հաշվետար-գանձապահ՝ մեկական դրույքով, բայց առկա չեն:
  - ✓ Կապանի թիվ 12 մանկապարտեզ. ունի 5 խումբ. սահմանված է գլխավոր-հաշվապահ և հաշվետար-գանձապահ՝ մեկական դրույք, բայց հաստիքացուցակում առկա չեն:
  - ✓ Կապանի թիվ 9 մանկապարտեզ. ունի 6 խումբ. սահմանված է գլխավոր-հաշվապահ և հաշվետար-գանձապահ՝ մեկական դրույքով, բայց առկա չեն:

Ըստ նույն Ձեկույցի՝ Կապանի մանկապարտեզների տնօրենները տեղեկացնում են, թե մանկապարտեզները հաստիքացուցակով չունեն հաշվապահ, հաշվետար-գանձապահ, որովհետև այդ աշխատակիցներն աշխատում են կենտրոնացված համակարգով (տես՝ Ձեկույցի 27-28-րդ էջերը):

Նշված Ձեկույցով ներկայացվել են առաջակություններ (նաև Կապանի քաղաքապետարան և քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզների տնօրեններին), մասնավորապես հետևյալ ձևակերպմամբ (տես՝ Ձեկույցի 30-36-րդ էջերը).

«Ղեկավարվելով՝ «Տեղեկավորության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի դրույթներով՝ սահմանված ժամկետներում համայնքների պաշտոնական կայքերում, մանկապարտեզների կայքերում (եթե մանկապարտեզն ունի պաշտոնական կայք),

մանկապարտեզների ցուցատախտակներին տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները.

- ❖ հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները,
- ❖ բյուջեն,
- ❖ գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,

- ❖ *հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,*
- ❖ *աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը,*
- ❖ *շրջակա միջավայրի վրա ներգործությունը,*
- ❖ *հասարակական միջոցառումների ծրագրերը,*
- ❖ *քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը,*
- ❖ *աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),*
- ❖ *տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը,*
- ❖ *ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը,*
- ❖ *սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները,*
- ❖ *սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները...»:*

ԺԱԱ ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ 16.02.2016թ. հրապարակված «Հավելված 3» թերթում նշված է, թե Կապանի բոլոր մանկապարտեզները, բացի Կավարտում գործողի՝ լոկալ ջեռուցման համակարգով են ջեռուցվում, իսկ Կավարտում գործողը՝ փայտե վառարանով:

Իսկ 17.03.2016թ. հրապարակված «Հավելված 5» թերթում նշված է, թե Կապանի մանկապարտեզներ հաճախող թվով 1500 երեխաներից միայն 46-ն է օգտվում զեղչից, որից 11-ը 100 % -ով, իսկ 35-ը՝ 50 %-ով, ընդ որում դա այն դեպքում, երբ նախորդ տարվա դրությամբ զեղչից օգտվող երեխաների թիվը 69 էր: «Հավելված 5» թերթի 4-րդ էջում տեղ գտած հոդվածում նշվել է, թե վերջին չորս տարիների ընթացքում Կապանի մանկապարտեզներում տնօրենների փոփոխություն չի եղել, իսկ մանկապարտեզներում առաջացած թափուր տեղերը համալրվում են մանկապարտեզների տնօրենների կողմից *(նշվածը չի համապատասխանում իրականությանը թեկուզ այն պարզ պատճառով, որ նախորդող տարիների ընթացքում են առնվազն փոխվել թիվ 5 ՆՈւՀ-ի (Ջուլիետա Մինասյանի փոխարեն՝ Նոնա Գալստյանն է) և թիվ 12 ՆՈւՀ-ի (Գայանե Գրիգորյանի փոխարեն՝ Լիլիկ Մարգարյանն է) տնօրենները, իսկ կադրերի ընտրությունը և կրճատումները, իհարկե, իրականացվում են համայնքապետարանի կողմից-ՕՀԻԳ ՀԿ-ի Ծրագրային Թիմի տեսակետը):*

ԺԱԱ ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ 31.03.2016թ հրապարակված «Հավելված 6» թերթում նշված է Կապանի քաղաքապետարանի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետ Ավետիք Համբարձումյանի կողմից տրված տեղեկությունն այն մասին, թե, արդեն երկու տարի է, ինչ համայնքի բյուջեից 15-ական մլն. ՀՀ դրամ է հատկացվում Կապանի թիվ 1 դպրոցի մասնաշենքերից մեկը վերանորոգելու և մանկապարտեզի վերափոխելու համար, սակայն գործն ավարտելու համար նախատեսվել է, որ անհրաժեշտ կլինի 150 մլն. ՀՀ դրամ և 5 տարի: Նոր մանկապարտեզի առկայությունը կթեթևացնի Կապանի Ռաֆայել Մինասյան, Աշոտավան, Արփիկ, Լենհանքեր, Դավիթ-Բեկ թաղամասերի բնակիչների հոգսը և նրանք ստիպված չեն լինի բավական ճանապարհ անցնել՝ երեխաներին մանկապարտեզ տանելու:



համար: Ըստ ԺԱԱ ուսումնասիրությունների՝ Կապանի թվով 12 ՆՈւՀ-երը չեն ունեցել նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու լիցենզիա<sup>19</sup>:

### **7.1.2.2.«Թրանսփարանսի ինթերնեշ» կազմակերպության դիտարկումներից.**

Կապանի մանկապարտեզներում առկա հիմնախնդիրները «Թրանսփարանսի ինթերնեշ» կազմակերպության ուշադրությանն են արժանացել նաև<sup>20</sup>, որից հետևում է, որ Կապանի մանկապարտեզներում առկա հիմնախնդիրները լայն արձագանք են ստացել:

## **7.2.Մեր՝ ՕՀԻԳ ՀԿ-ի կողմից իրականացվող Ծրագրի, արդյունքները**

Ծրագրային ԹԻՄԻ կողմից մշակվեցին (*ընտրվեցին*) մի քանի չափանիշներ (*դեկլարար դրույթներ*), որոնց միջոցով պետք է պարզվեին թիրախային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների, մեր դեպքում՝ կրթության կազմակերպման որակը, մատչելիությունը, կոռուպցիոն ռիսկերի և տարբերակված մոտեցման առկայությունը կամ բացակայությունը, և, ընդհանրապես՝ նախադպրոցական և արտադպրոցական կրթության ոլորտում առկա խնդիրները:

Ընտրված չափանիշներն են.

- ❖ ներկայանալիություն, տեսանելիություն, մատչելիություն, թափանցիկություն,
- ❖ կադրերի ընտրություն, փոփոխություն (*ընտրություններ, կուսակցական պատկանելություն և այլ*)
- ❖ երեխաների հերթագրում և հաշվառում, պայմանագրեր,
- ❖ շենքային պայմաններով և անհրաժեշտ գույքով ապահովվածությունը,
- ❖ բյուջե, ծնողական վճար, ուսումնառության վարձավճար, դրամահավաքության դեպքեր,
- ❖ մատակարարներ, սնունդ, խոհանոց և այլ...
- ❖ տեղեկատվության տրամադրումը՝ որպես գործելաճ և կարիքների գնահատման գործիք (այն առանձնացվել է մեր կողմից՝ հաշվի առնելով, որ մեր կողմից հայցվող տեղեկատվությունը չի տրամադրվել թիրախային կազմակերպությունների կողմից):

### **7.2.1.Ներկայանալիություն, տեսանելիություն, մատչելիություն, թափանցիկություն<sup>21</sup>**

<sup>19</sup> ԺԱԱ-ի 28 Հուլիս, 2016թ. 13:07 «Մանկապարտեզներում կրթության բնագավառի հերթական խախտումներն են արձանագրվել» խորագրով հրապարակումը (<http://www.asparez.am/news-hy/mankapartez-xaxtumer-hy/>), ըստ որի՝ «Որոշ հաստատություններ՝ այդ թվում Արթիկի թվով 4, Վանաձորի թվով 20, Կապանի թվով 12 մանկապարտեզներ չեն ունեցել նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու լիցենզիա՝ համապատասխան թույլտվություն, նշված մանկապարտեզների կանոնադրությունը չի համապատասխանել օրինակելի կանոնադրության պահանջներին, մանկապարտեզների հաստիքացուցակով եւ պաշտոնային դրույքաչափերով մանկավարժական աշխատողներին հատկացվել է (կամ չի հատկացվել) սահմանված նորմից պակաս հաստիքային միավոր»:»

<sup>20</sup> ԹԻ ինտերնետային կայքի 17.12.2010թ. «Կաշառակերության անհաջող փորձ» խորագրով հրապարակումը (<http://transparency.am/hy/cases/view/4135>) վերաբերում է Կապանի թիվ 1 մանկապարտեզից ստացված տեղեկությանը, ըստ որի. «Կապանի թիվ 1 մանկապարտեզի տնօրեն Քրիստինե Սողոմոնյանը շախմատի պարապմունքներ անցկացնող մանկավարժից պահանջել է ամսական աշխատավարձից 5000 դրամ որպես «օտկատ» պարբերաբար տալ իրեն: Մանկավարժ Մարատ Հարությունյանը հրաժարվել է դա անելուց, բայց այդ հրաժարումից հետո «պարզվել» է, որ մանկապարտեզի սաներին շախմատ ուսուցանելու ժամանակ ինքը «խախտել» է ՀՀ մի շարք օրենքներ: Մ. Հարությունյանը փորձել է փաստի վերաբերյալ հաղորդել Կապանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Սվետա Արզումանյանին, բայց վերջինս կտրել է նրա խոսքը, ասելով, թե Մ. Հարությունյանը չունի ուսուցման իրավունք: Բնականաբար, «ուսուցման իրավունք չունենալը» ծագել է այն ժամանակ, երբ մանկավարժը հրաժարվել է կաշառք տալուց, իսկ այնուհետև բարձրաձայնել է դրա մասին: Հեղինակ՝ «Բողոքի գիրք»»:»

<sup>21</sup> Նշված հասկացությունները մեր կողմից օգտագործվում են, որպես հանրությանը ներկայանալի լինելու, գործելակերպը տեսանելի դարձնելու, ներկայանալիությամբ և տեսանելի գործելակերպով մատչելի ու թափանցիկ

### 7.2.1.1. Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայք

Կապանի համայնքապետարանն ունի պաշտոնական կայք (<http://kapan.am/>)՝ համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (*այսուհետ նաև՝ ՇԿՏ կամ կայք*), որից օգտվելու կամ շահագործելու համար «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից մշակվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարության աջակցությամբ 2010թ. հրատարակվել է ուղեցույց (*ձեռնարկ*): Ձեռնարկը տպագրվել է ՀՀ պետական հատվածի արդիականացման ծրագրի «Տեղական ինքնակառավարման կարողությունների զարգացում» ենթաբաղադրիչի շրջանակներում և պարունակում է մանրամասն տեղեկություններ ՇԿՏ բաղադրիչների, դրանց գործառնական հնարավորությունների և շահագործման առանձնահատկությունների վերաբերյալ:

Այդուհանդերձ, կայքի և ձեռնարկի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կայքը չունի այնպիսի հնարավորություններ, որոնցով հնարավոր լինի տեղեկատվություն ստանալ համայնքային ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների, ՄԿ-ի անվանման, գտնվելու վայրի, էլ.փոստի հասցեի, տնօրենի, հաստատություններում առկա խնդիրների, երեխաների հերթագրման, խմբերի (*խմբակներ, բաժիններ*) ու դրանցում ընդգրկված երեխաների թվաքանակի և այլնի վերաբերյալ, որը շատ անհրաժեշտ ու ցանկալի է և ավելի հավաստի կհամարվի կայքի «այցելու»-ի համար, քան այլ տեղեկատվական հարթակներում նշվածները: Բացի այդ, համայնքապետարանի կայքը ս/թ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում բազմիցս անհասանելի է եղել<sup>22</sup> և գործել է խափանումներով:

Կապանի համայնքապետարանի կայքի «Տեղեկատուներ» բաժնի «Հաճախակի տրվող հարցեր» պատուհանից կարելի է ընտրել «Ինչպես ընդունել երեխային երաժշտական դպրոց» և «Ինչպես ընդունել երեխային մանկապարտեզ» հարցերը ու գտնել ...տեղեկատվություն, որը Չարենցավան համայնքի ՆՈւՀ-երի և ԱԿՀ-ների մասին է (*լրացված և խմբագրված դեռևս կայքի ստեղծման ժամանակ՝ 08.02.2006թ. և 19.03.2006թ.*) և տեղին կլինեք, եթե այն «թարմացվեր» Կապան համայնքի վերաբերյալ տեղեկություններով:

#### Ինչպե՞ս ընդունել երեխային երաժշտական դպրոց

Ստեղծման ամսաթիվ	08/02/2006	Վերջին խմբագրման ամսաթիվ	19/03/2006
Թեմա	Կրթություն և մշակույթ		
Պատասխանատու կազմակերպություն			
Պատասխանատու անձ	Օ		
Պատասխան	Երեխային երաժշտական դպրոց ընդունելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ 1. <b>Դիմում ծնողի կամ խնամակալի կողմից, ուղղված Երաժշտական դպրոցի տնօրենին;</b> 2. <b>Երեխայի ծննդյան վկայականի պատճեն;</b> 3. <b>Տեղեկանք համապատասխան համառոտությունից, բնակության վայրի մասին:</b> Ընդունելության համար կարելի դիմել մայիսի 20-ից մինչև հունիսի 10-ը: <i>Չարենցավան</i>		

աշխատելաձև ունենալու իմաստով (իհարկե չենք բացառում այլ գործիքակազմեր և մեխանիզմներ, որոնք կարող են մեկնաբանվող նպատակներին հասնելու միջոց կամ եղանակ լինել):

<sup>22</sup> Կապանի համայնքապետարանի մամուլ քարտուղար Արմինե Ավագյանի ([Armine Avagyan](mailto:Armine.Avagyan@kapan.am)) ֆեյսբուկյան պրոֆիլի միջոցով տարածված տեղեկատվության համաձայն՝ կայքը մեկ շաբաթ չի գործի (սկսած՝ ս/թ նոյեմբերի 7-ից), իսկ մինչ այդ կայքի՝ ս/թ հոկտեմբերի վերջին շաբաթվա ընթացքում, խափանման կամ այսպես ասած՝ սերվերի հետ կապված խնդրի մասին գրառում է կատարել <http://www.37-38.com/> լրատվական կայքի Արտյոմ Սարգսյանը ([Aprem Sargsyan](http://www.37-38.com/))՝ ի պատասխան ֆեյսբուկում Կապանի համայնքապետարանի կայքի խափանման մասին մեր գրառման (այլ մեկնաբանությունները ևս բացակայում են): Թերևս, իրապես գնահատելի է, որ ֆեյսբուկյան հարթակում գրառումների միջոցով Կապանի համայնքապետարանի կայքի խափանման մասին փորձ է արվում հանրությանն էլ իրազեկել: Սակայն մտահոգիչ է այն, որ կայքը հաճախակի անհասանելի է դառնում (փաստորեն 2 ամսվա ընթացքում՝ մոտ կես ամիս):

	<p>համայնքի երաժշտական դպրոցի ծնողական վարձավճար է սահմանված ամսական հետևյալ չափով - դաշնամուրային բաժին 3000 դրամ - ջութակի բաժին 2000 դրամ - կիթառ և ակորդեոն 3000 դրամ - քանոն, շվի, դուդուկ, դեռլ, շեփոք 2000 դրամ - թառ, ուր, քամանչա, մարիմբա, թավջութակ 1500 դրամ - կլարնետ, սաքսոֆոն 3000 դրամ - վոկալ 2000 դրամ</p> <p>Վճարը հավաքվում է յուրաքանչյուր ամսվա 25-ից մինչև 30-ը: Գումարը փոխանցվում է տեղական բյուջե, քաղաքապետարանի հաշվի համարին: Երաժշտական դպրոցում սահմանված է ժողովրդական նվագարանների 20 անվճար տեղեր: <b>Չարենցավան համայնքի երաժշտական դպրոցի հասցեն է 6-րդ թաղամաս, Պոռչյան փողոց, հեռախոս՝ 4-12-13, 4-16-38, տնօրեն՝ Էդուարդ Տարախյան:</b></p>
Իրավական հիմքը	ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի Չարենցավան համայնքի ավագանու 20.01.2005թ թիվ 3 (1/3) - Ն որոշում:
Պահանջվող փաստաթղթերը	
Փաստաթղթերի նմուշներ	

### Ինչպե՞ս ընդունել երեխային մանկապարտեզ

Ստեղծման ամսաթիվ	08/02/2006	Վերջին խմբագրման ամսաթիվ	19/03/2006
Թեմա	Կրթություն և մշակույթ		
Պատասխանատու կազմակերպություն			
Պատասխանատու անձ	<b>Օ</b>		
Պատասխան	<p>Երեխային մանկապարտեզ ընդունելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ 1. <b>Օտոդիկալ խնամակալի կողմից դիմում, ուղղված մանկապարտեզի տնօրենին;</b> 2. <b>Երեխայի ծննդյան վկայականի պատճեն;</b> 3. <b>Տեղեկանք պոլիկլինիկայից՝ 26 ձև;</b> 4. <b>Տեղեկանք Հիգիենիկ և Հակահամաճարակային Հսկողության Կենտրոնից (ՀՀՀԿ):</b> Ընդունելության համար կարելի է դիմել ցանկացած աշխատանքային օր (երկուշաբթիից մինչև ուրբաթ, ժամը 10-00-ից մինչև 16-00-ը), դիմումի պատասխանը կարող էր ստանալ նույն օրը: <b>Օտոդական միջոցների վարձավճարը մեկ օրվա համար սահմանված է 150 դրամ:</b> Վճարը հավաքվում է յուրաքանչյուր ամսվա 25-ից մինչև 30-ը: Գումարը փոխանցվում է տեղական բյուջե, քաղաքապետարանի հաշվի համարին: <b>Չարենցավան համայնքն այժմ ունի հինգ գործող մանկապարտեզներ: Թիվ 1 մ/մանկապարտեզ (հասցե՝ 2-րդ թաղամաս, հեռախոս՝ 4-31-42, տնօրեն՝ Զեմֆիրա Ավետիսյան); Թիվ 3 մ/մանկապարտեզ (հասցե՝ 3-րդ թաղամաս, հեռախոս՝ 4-17-92, տնօրեն՝ Գայանե Գրիգորյան); Թիվ 5 մ/մանկապարտեզ (հասցե՝ 4-րդ թաղամաս, հեռախոս՝ 4-49-69, տնօրեն՝ Սոնյա Սարգսյան); Թիվ 6 մ/մանկապարտեզ (հասցե՝ 5-րդ թաղամաս, հեռախոս՝ 4-18-51, տնօրեն՝ Ժեյա Գևորգյան); Թիվ 8 մ/մանկապարտեզ (հասցե՝ 6-րդ թաղամաս, հեռախոս՝ 4-34-12, տնօրեն՝ Մարիետա Գևորգյան):</b></p>		
Իրավական հիմքը	ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի Չարենցավան համայնքի ավագանու 20.01.2005թ թիվ 3 (1/3) - Ն որոշում:		
Պահանջվող փաստաթղթերը			
Փաստաթղթերի նմուշներ			

*Առկա են նաև լուսանկարները*

### **7.2.1.2.Մյունիքի մարզպետարանի կայքից**

Կապանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն առկա է (*ՄԿ-ի մասին՝ չկարողացանք գտնել*) Մյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում (<http://syunik.mtad.am>), որի «Կազմակերպություններ» բաժնի «կրթական հաստատություններ» ենթաբաժնի «նախադպրոցական կրթական հաստատություններ» (<http://syunik.mtad.am/educational/>) ու «մշակութային և սպորտային հաստատություններ» կետերում (<http://syunik.mtad.am/culture-sport/>) կարելի է գտնել տեղեկատվություն նաև Կապանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող կրթական հաստատությունների վերաբերյալ: Սակայն, Մյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում զետեղված այդ տեղեկատվությունը թարմացված չէ ու տեղեկատվությունը վերաբերում է 2014-2015թթ ուսումնական տարվան, հետևաբար դրանցում առկա տվյալները չեն համապատասխանում ներկային (*այդ թվում՝ տնօրենների, խմբերի, երեխաների, աշխատողների թվաքանակի և այլ փոփոխությունների մասին*): Ի հավելումս դրա՝ ոչ ճիշտ են նշված «Կապանի թիվ 4 ՆՈւՀ» և «Կապանի թիվ 8 ՆՈւՀ» ՀՈԱԿ-ների հասցեները (*մի դեպքում՝*

ք. Կապան, Շահումյան 42-ի փոխարեն լրացված է՝ ք. Կապան, Շահումյան 41, իսկ մյուս դեպքում՝ ք. Կապան, Հ. Ավետիսյան 3-ի փոխարեն նշված է ք. Կապան, Հ. Ավետիսյան 8ա), թեև դրանք կայքում լրացվելու ժամանակից ցայսօր ըստ հասցեականության (գտնվելու վայրի) չեն փոփոխվել:

Սյունիքի մարզպետարանի կայքում նշված չէ նաև Կապանի Կավարտ թաղամասում (նախկինում՝ բանավան) գործող մանկապարտեզի մասին, որը «Կապանի թիվ 8 ՆՈւՀ» ՀՈԱԿ-ի մասնաճյուղն է: Չկա տեղեկատվություն Կապանի մանկական կենտրոնի մասին, թեև ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ համայնքային ենթակայությամբ գործող այդօրինակ կազմակերպության նման ևս մեկը չկա ՀՀ-ում:

Ի լրումն դրա, Սյունիքի մարզպետարանի կայքում բավականաչափ տվյալներ կան նաև ըստ բաժինների հասցեականության՝ Կապանի քաղաքապետարան դիմելու համար, մասնավորապես.

3301, ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Արամ Մանուկյան փող., 5ա շենք  
Հեռ. (+374 285 52036)

Կայք՝ <http://kapan.am>

Էլ. փոստ՝ [kapan.syuniq@mta.gov.am](mailto:kapan.syuniq@mta.gov.am)

**Կապանի քաղաքապետարանում գործող էլեկտրոնային փոստի հասցեներ.**

Քաղաքապետ - [mayor@kapan.am](mailto:mayor@kapan.am)

Մամուլի քարտուղար - [info@kapan.am](mailto:info@kapan.am)

Ծրագրերի և արտաքին կապերի բաժին - [programs@kapan.am](mailto:programs@kapan.am)

Ֆինանսարդյունաբերության բաժին - [finance@kapan.am](mailto:finance@kapan.am)

Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին - [tax@kapan.am](mailto:tax@kapan.am)

Վարչախրավական բաժին - [legal@kapan.am](mailto:legal@kapan.am)

Կրթության, մշակույթի և սպորտի բաժին - [edu@kapan.am](mailto:edu@kapan.am)

Քաղաքաշինության բաժին - [architecture@kapan.am](mailto:architecture@kapan.am)

Ընդհանուր բաժին - [secretariat@kapan.am](mailto:secretariat@kapan.am)

### **7.2.1.3. ՀՀ կրթության և գիտության նախարարության կայքում**

ՀՀ Կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում (<http://edu.am/index.php/am/about/view/105>) **ՀՀ ԱՄՆԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**-ը ներբեռնելու դեպքում Կապանի ՆՈւՀ-երը նշված են թիվ 1-14, այսինքն՝ ըստ այդ ցուցակի Կապանի ՆՈւՀ-երը թվով 14 հատ են՝ համապատասխանաբար 1-14 համարներով, իսկ հեռախոսահամարները թարմացված չեն և հասցեները նշված չեն (նշված է միայն՝ ք. Կապան): Համոզված ենք՝ կարիք չկա նշելու, որ Կապանի ՆՈւՀ-երը թվով տասներկուսն են և թիվ 3 ՆՈւՀ-ը 2007թ. չի գործում, ընդ որում, այդ մասին անդրադարձել են անգամ ԶԼՄ-ները<sup>23</sup>, իսկ Կավարտում գործող մանկապարտեզը թիվ 8 մանկապարտեզի մասնաճյուղն է: Այլ հարց է Կապանի թիվ 1 դպրոցի մի մասնաշենքը ՆՈւՀ-ի վերածելու հարցը:

Ինչ վերաբերում է Կապանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող արտադպրոցական կրթական հաստատությունների վերաբերյալ ՀՀ ԿԳՆ կայքում տեղեկություններ գտնելուն, ապա հարկ է նշել, որ կայքում գտանք միայն **ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**-ը, որտեղ հասկանալի պատճառներով բացակայում են տվյալներ Կապանի ԱԿՀ-ների մասին:

### **7.2.1.4. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կայքում**

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պաշտոնական կայքում (<http://www.minsportyouth.am/>) «Սպորտ» բաժնի «Մարզադպրոցներ» ենթաբաժնում (<http://www.minsportyouth.am/marzagprocner.html>) երևակվող ՀՀ քարտեզի վրա հնարավոր է

<sup>23</sup> ԱՐՄԵՆՊՐԵՍԻ 25.01.2007թ հրապարակումը (<https://armenpress.am/arm/news/435744/petrvaric-kmiavorven-kapani-tiv-3-ev-tiv-4-nakhakrtarannery.html>, սեփ. թղթ., քաղաքապետարանի մամուլի քարտուղար Գոհար Իսախանյան), ըստ որի՝ 2007թ. փետրվարի 1-ից թիվ 3 և թիվ 4 ՆՈւՀ-երը միավորվեցին և այդուհետ գործում էին թիվ 4 ՆՈւՀ-ի անվան ներքո:



ընտրել «Մյունիքի մարզ»-ը և մարզում գործող օլիմպիական ու ոչ օլիմպիական մարզաձևերի ցանկում (<http://www.minsportyouth.am/mar zadprocner.html>) գտնել Կապան քաղաքի «Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց», «Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» «Կապանի քաղաքի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ (ՀԲՀ)-ների վերաբերյալ տեղեկություններ (*հասցեներ, տնօրենների անուն-ազգանուն, հեռախոսահամարներ*):

### **7.2.1.5. Համացանցային հարթակներում**

**7.2.1.5.1. Ֆեյսբուկ (facebook)** <https://www.facebook.com> ---Իրենց գործունեության տեսանելիությունը, ներկայանալիությունը, թափանցիկությունը և մասշտաբային ապահովելու նպատակով Կապանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երը, ԱԿՀ-ներն ու ՄԿ-ն ունեն (**23.10.2016թ. դրությամբ**) իրենց պրոֆիլները (և/կամ խմբերը, էջերը) ֆեյսբուկյան հարթակում (*որոնք ունենալը պարտադիր չէ*).

Կապանի թիվ մեկ Նախակրթարան <https://www.facebook.com/anna.saahakyan?fref=ts>

Կապանի թիվ երկու Նուհ <https://www.facebook.com/aram.karen?fref=ts>

Tiv Chors Mankapartez Palatik <https://www.facebook.com/tivchorsnuh.zaqaryan>

Կապանի թիվ 4 ՆՈՒՀ <https://www.facebook.com/pages/>

Կապանի թիվ հինգ Նուհ <https://www.facebook.com/profile.php?id=100013868792813&sk=about>

Kapani Hing Nuh Mankapartez <https://www.facebook.com/profile.php?id=100008696529561>

Կապանի թիվ վեց Նախակրթարան <https://www.facebook.com/kapani.naxaktaran>

Կապանի թիվ Յոթ նուհ <https://www.facebook.com/profile.php?id=100006633011403>

Kapani Tiv UT Mankapartez <https://www.facebook.com/kapanitivut.mankapartez?fref=ts>

Капан Манко <https://www.facebook.com/profile.php?id=100007992997543&sk=about> (թիվ 9 ՆՈւՀ)

Կապանի թիվ 11 ՆՈՒՀ <https://www.facebook.com/KapaniTiv11Nuh/about/>

Tiv Tasnereq Nuh Aregak <https://www.facebook.com/aregak.nuh?fref=ts>

Կապանի թիվ 13 ՆՈՒՀ <https://www.facebook.com/groups/565086206909798/> (խումբ)

Կապանի երկրորդ երաժշտական դպրոց <https://www.facebook.com/profile.php?id=100010544349070> (միայն հեռախոսահամար՝ 093 904789)

Kapani tiv 2 eradztakan dproc <https://www.facebook.com/Kapani-tiv-2-eradztakan-dproc-801132536663810/?fref=ts>

Tiv Ereq Erazhshtakan Dproc <https://www.facebook.com/profile.php?id=100008236065488&sk=about>

Капани Арвести Манкакан Дпроц <https://www.facebook.com/profile.php?id=100008369437884&fref=ts>

Կապանի Մանկական Գեղարվեստի Դպրոց <https://www.facebook.com/kapanigexarvesti.dproc/about>

Կապանի մանկապ. ստեղծագ. կենտրոն <https://www.facebook.com/profile.php?id=100012401379085> (միայն հեռախոսահամար՝ 055 033120)

Манкакан Кентрон <https://www.facebook.com/lilit.sogomonyan.10?fref=ts>

Փաստորեն, թիրախային կազմակերպություններից որոշները մեկի փոխարեն ունեն երկու պրոֆիլ կամ ն՝ պրոֆիլ, ն՝ խումբ և/կամ էջ (*որոշներն ընդհանրապես չունեն և ներկայացված չեն*) համացանցի ֆեյսբուկյան հարթակում, սակայն դրանցից որևէ մեկի «տեղեկություններ» բաժնում նշված չէ գտնվելու վայրի հասցե, էլեկտրոնային փոստի հասցե կամ տնօրենի և աշխատողների կամ այլնի վերաբերյալ տեղեկություններ (*միայն երկու դեպքում նշված են եղել բջջային հեռախոսահամարներ*):

### **7.2.1.5.2. Համացանցային այլ հարթակներ**

Որոշ թիրախային կրթական հաստատություններ գրանցված են նաև այլ սոցիալական կայքերում:

### **7.2.1.6. «Պաշտոնական հայտարարություններ»-ի կայքեր**

Կապանի ՆՈւՀ-երի և ԱԿՀ-ների վերաբերյալ տեղեկություններ (*անվանում, հասցե, էլ. փոստ և այլն*) հնարավոր է գտնել նաև «Ազդարար»-ի՝ <https://www.azdarar.am> կայքում տեղադրված հայտարարություններում (*օրինակ՝* <https://www.azdarar.am/announcements/org/312/>, *Կապանի*

համայնքապետարանի կողմից «ՀՀ-ՄՄԿՀ-ՊԸԱՇՁԲ-16/5» ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարությունը [https://www.azdarar.am/announcements/org/42/001\\_95477/](https://www.azdarar.am/announcements/org/42/001_95477/), Կապանի քաղաքապետարանի թիվ 4 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի կարիքների համար «ՀՀ-ՄՄԿԲ-4ՆՈՒՀ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի մասին հայտարարությունը՝ <https://www.azdarar.am/announcements/cat/42/00058642/> և այլն): Սակայն հարկ է նկատի ունենալ, որ անհրաժեշտ տեղեկատվության այդօրինակ որոնումն իր բազմաթիվ դժվարություններն ունի:

Կապանի ՆՈւՀ-երի և ԱԿՀ-ների մասին տեղեկություններ կարելի է գտնել նաև ՀՀ ֆինանսների նախարարության «ՀՀ գնումների համակարգ» կայքում <http://www.gnumner.am/>, սակայն այդտեղ ևս առկա են բավականաչափ դժվարություններ՝ անհրաժեշտ տվյալները գտնելու հարցում (ամենաթարմացված հայտարարությունը «Կապան» բանալի բառով՝ Կապանի քաղաքապետարանի կարիքների համար էլեկտրոնային գրադարանի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ-ՄՄԿԲ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգի հայտարարություն և հրավեր/հրավերի փոփոխություն/ձեռք-եր՝ հրապարակված 03/09/2014 -ից մինչև 13/10/2014 ժամը 10:00 ներառյալ):

### **7.2.1.7. Հաստատությունների անվանումներով (նշումով) ցուցանակներ**

Կապանի որոշ ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների և ՄԿ-ի գտնելու վայրը պարզելու համար, անգամ գտնվելով տվյալ հաստատության հարևանությամբ, պետք է հարցուփորձ անել անցորդների կամ ծանոթների կամ ներս մտնել հաստատության բակ (տարածք), քանի որ տվյալ կազմակերպությունների անվանումները «հուշող» (գրառված, վկայակոչած) ցուցանակները (ցուցատախտակ) փակցված են միմիայն շենքերի մուտքերի մոտ և տեսանելի չեն առանց նշված հաստատությունների տարածք մտնելու ու շենքի մուտքին մոտենալու (օրինակ թիվ 2, 6, 8, 13 և այլ ՆՈւՀ-երը, ՄԿ-ն): Բնարկե, որոշ հաստատություններ գտնելու համար էլ ընդհանրապես փնտրել պետք չէ, քանի որ մուտքը, որի մոտ փակցված է հաստատության անվանումը կրող ցուցանակը, գտնվում է այնպիսի դիրքով, որ տեսանելի է, թե դա որ հաստատությունն է (օրինակ թիվ 1, 12 ՆՈւՀ-երը, բազմաթիվ ԱԿՀ-ներ):

## **7.2.2. Երեխաների հերթագրում, հաշվառում, ցուցակագրում, պայմանագրեր**

### **7.2.2.1. Ուսումնասիրությունների արդյունքներ**

Կապանի մանկապարտեզներում (և, ինչու չէ՝ արտադպրոցական կրթական հաստատություններում ու մանկական կենտրոնում), երեխաների հերթագրման և հաճախելիության հաշվառման էլեկտրոնային համակարգ չկա, ուստի ակնհայտ է, որ այդ գործընթացները հեռու են տեսանելի լինելու և թափանցիկ որակվելու բնորոշումներից, հետևաբար, իրապես չի բացառվում կոռուպցիոն ռիսկերի ու տարբերակված մոտեցման առկայության հնարավորությունը:

Դրան հակառակ, երեխաների հերթագրման և հաճախելիության հաշվառման էլեկտրոնային համակարգի(-երի) ներդրումը կարող է հնարավորություն տալ, ոչ միայն հնարավորինս նվազեցնել իր երեխային ամեն կերպ հերթագրել փորձող ծնողի ու տվյալ հաստատության միջև հերթագրման հետ կապված կոռուպցիոն ռիսկը և/կամ տարբերակված մոտեցումը (օր.՝ համաձայնությամբ հերթն առաջ տալը), այլև բացառել, օրինակ՝ ՆՈւՀ-երում երեխաների կրկնակի հերթագրման հնարավորությունը: Միաժամանակ, դա հնարավորություն կտա կանխատեսել, թե երեխաների ընդունման որքան հնարավորություն (տեղ) կա և որքան խումբ պետք է ստեղծվի կամ փակվի՝ դրանից բխող բոլոր հետևանքներով հանդերձ (այդ թվում՝ բյուջեի հատկացումների և ծախսային մասի նախատեսման մասով): Այսինքն՝ այդ դեպքում կբացառվի նաև հերթագրվածների թվերի ուռճացումը (կպարզվի, որ օրինակ՝ նույն երեխան հերթագրվել է քաղաքի տարբեր ՆՈւՀ-երում և մանկապարտեզ ընդունվել ցանկացողները ավելի քիչ են, քան



կլինի այն թիվը, որը մանկապարտեզների կողմից քաղաքապետարան ներկայացվելու դեպքում՝ կարձանագրվի):


### **7.2.2.2. Մեր Հարցազրուցավարների կողմից իրականացված հարցումների արդյունքներից**

**Գծապատկեր 1 (14) Երեխային հաստատություն ընդունելու համար դիմելու (հերթագրվել) ժամանակահատվածի պատկերը**




Հարցման մասնակից ծնողների միայն 2,1%-ն է նշել, որ երեխային հաստատություն ընդունելու համար դիմել է (հերթագրվել է) երեխայի ծննդյան վկայականը ստանալուց անմիջապես հետո, 13,5%-ը՝ երեխայի մեկ տարեկանը լրանալուց հետո, 57,3%-ը՝ երեխայի հաստատություն ընդունվելուց անմիջապես առաջ, իսկ 27,1%-ը՝ երեխայի հաստատություն ընդունվելուց 3-ից 6 ամիս առաջ:

**Գծ.2 (15) Պայմանագիր ունենալու պատկերը**



**Գծ.3 (16) Պայմանագիր կնքելու ժամկետի պատկերը**



Հարցված ծնողների 75%-ը նշել է, որ ունի կնքված պայմանագրի հաստատության հետ, իսկ 25%-ը նշել է, որ չունի: Պայմանագիր ունեցող ծնողների 94%-ը նշել է, որ պայմանագիրը կնքել է երեխայի հաստատություն ընդունվելուց անմիջապես առաջ, 1,5%-ը՝ նախքան երեխայի հաստատություն ընդունվելը մեկ տարի առաջ, 3%-ը երեխայի հաստատություն այցելելուց մեկ ամիս անց, իսկ 1,5%-ը՝ երեխայի հաստատություն ընդունվելուց 3-ից 6 ամիս առաջ:

## **7.2.3. Կադրերի ընտրություն, փոփոխություն**

*(քաղաքականություն, ընտրություններ, կուսակցական պատկանելություն և այլ)*

### **7.2.3.1. ՏԲՄ ընտրությունների հետևանքների մասին**

2016թ. հոկտեմբերի 2-ին Կապանում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում Կապան քաղաքային համայնքի ղեկավար վերընտրվեց 2012թ. սեպտեմբերի 9-ին կայացած ընտրություններում համայնքի ղեկավար ընտրված, ՀՀԿ անդամ Աշոտ Գրիշայի Հայրապետյանը:

Փաստորեն, գործող համայնքապետի՝ կրկին համայնքապետ ընտրվելուն հետևում է, որ կադրային փոփոխություն չի կատարվի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող կազմակերպություններում (որպես կանոն, ենթակառուցվածքների աշխատողներն արդեն իսկ մեկ քաղաքական թիմ են լինում կամ դառնում մինչ ընտրությունները, իսկ հակառակ դեպքում՝ ընտրություններին հաջորդում է նոր ընտրված թիմի անդամների՝ «խոստացված աշխատանքի տեղավորման գործընթացը՝ ի հաշիվ ոչ թիմակիցների աշխատանքից ազատման»), թեև նույն

ընտրություններին համայնքի ղեկավարի մեկ այլ թեկնածու՝ ՀՅԴ անդամ Ա.Աթայանը, իր՝ Yerkir.am-ին տված հարցազրույցում այդօրինակ վերաբերմունքի մասին է նշել<sup>24</sup>:

Իհարկե, մինչ վերջին ընտրությունները քաղաքապետարանի և դրա ենթակայությամբ գործող ենթակառուցներում կրճատումների կամ աշխատանքից ազատելու մասին բազմիցս հրապարակումներ եղել են տարբեր ՋԼՄ-ներով, սակայն դրանք կարճ ժամանակ անց հերքվել են նաև<sup>25</sup> (սակայն 07.11.2016թ. ավագանու նիստի օրը զանգվածային՝ 20 % կրճատումների մասին նշեց համայնքի ղեկավարը, և այդ տեղեկատվությունը դեռ չի հերքվել-այդ մասին հղում-մեկնաբանությունների 27-րդ կետը):

Արդարությունը պահանջում է նշել, որ գործող քաղաքապետի՝ դեռևս 2012թ. ընտրվելուց հետո կադրային փոփոխությունների մասին «արձագանքներ» չեն եղել այնպես, ինչպես օրինակ՝ 2009թ. ընտրություններից հետո մամուլն այդ մասին բարձրաձայնեց<sup>26</sup>, իսկ մեկ կամ երկու տնօրենների փոփոխությունը՝ ըստ պաշտոնական և այլ շրջանառվող վարկածների՝ պայմանավորված է եղել կենսաթոշակի տարիքը լրանալու կամ մեկ այլ կազմակերպության տնօրեն նշանակվելու պատճառներով (օրինակ, թիվ 5 ՆՈւՀ-ի տնօրեն Ջ.Մինասյանի դեպքում՝ կենսաթոշակի տարիքը լրանալու կապակցությամբ աշխատանքից ազատվելը, կամ թիվ 12 ՆՈւՀ-ի տնօրեն Գ.Գրիգորյանի՝ Գեղանուշի միջնակարգ դպրոցի տնօրեն նշանակվելու կապակցությամբ աշխատանքից ազատվելը):

2016թ. նոյեմբերի սկզբին, ըստ քաղաքապետարանից ստացված տեղեկությունների՝ իր դիմումի համաձայն աշխատանքից ազատվեց Կապանի թիվ 4 ՆՈւՀ-ի տնօրեն Լուսինե Զաքարյանը, որի կապակցությամբ ափսոսանք են հայտնել ոլորտի պատասխանատուները (մեր Ծրագրի Հարցազրույցավարին այդպես է ներկայացվել): Ս/թ նոյեմբերի 7-ին Կապանի թիվ 4 մանկապարտեզի տնօրենի ժ/պ է նշանակվել Գոհար Մարգարյանը:

Չհաջողվեց պաշտոնական տեղեկություններ ստանալ (պարզել) այն մասին, թե կոնկրետ երբ և ինչ պատճառով են աշխատանքից ազատվել Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցի և Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի նախկին տնօրենները, որոնց փոխարեն տնօրենների լիազորություններն ամիսներ շարունակ ժամանակավոր պաշտոնակատարներն են արդյունավետ կերպով (այդ զնահատականը մեր Ծրագրային թիմին է) իրականացրել (այդ մասին՝ հաջորդ կետը):

24 Երկիր Մեդիա, (<http://www.yerkir.am/news/view/114016.html>)--28 Սեպտեմբերի 2016, 17:35:; «Գնում եմ ընտրությունների՝ կապանցիների մի սովոր զանգվածի պահանջով՝ խորագրով հարցազրույցը, ըստ որի՝ «...Արտուր Աթայանը նշեց, որ մարդկանց սպառնում են՝ աշխատանքից կազատեն, եթե իրեն ընտրեն: «Հիմնական սպառնալիքն այն է, որ մարդկանց աշխատանքից կազատեն, եթե իմանան, որ ինձ են ընտրել: Այդպես են սպառնում: Կա նաև մարզպետի գործոնը, բացի դրանից՝ ընտրական գործընթացին է լծվել Քաջարանի կոմբինատը», - հայտնեց նա:»: Մինչ այդ, նույնաբովանդակ հայտարարությամբ հանդես եկավ նաև ՀՅԴ կուսակցությունը (<http://www.arfd.info/hy/?p=31122>) 13/09/2016, «Անհնազանդներին պարտադրվում է աշխատանքից ազատվելու դիմում գրել» խորագրով հրապարակումը:

25 Սյունյաց երկիր- Թողարկված է՝ 2013-11-15 13:19:47-ին ( [http://syuniacyerkir.am/news\\_view.php?post\\_id=14296](http://syuniacyerkir.am/news_view.php?post_id=14296) ) «Ըստ Կապանի քաղաքապետարանի տարածած տեղեկատվության՝ վերջին շրջանում Կապանում տարածված լուրերն այն մասին, որ քաղաքապետարանում եւ քաղաքապետարանի ենթակա կառույցներում նախատեսվում են զանգվածային կրճատումներ, չեն համապատասխանում իրականությանը: Նման ենթադրության առիթը թերևս այն է, որ քաղաքապետարանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն երկու ամիս առաջ՝ հոկտեմբերի 31-ից, մի շարք աշխատողների ծանուցագրով տեղեկացրել է, որ 2014թ. հունվարի 1-ից դադարեցնելու է 2010թ. դեկտեմբերի 15-ից սկսված աշխատանքային հարաբերությունները: Պատճառն այն է, որ քաղաքապետարանը նախատեսում է ստեղծել նոր կառույցներ, որոնցում կընդգրկվեն պայմանագրի ժամկետը չերկարացրած այն աշխատակիցները, ովքեր կանցնեն համապատասխան ատեստավորում: Սույն նախաձեռնությամբ քաղաքապետարանը նպատակ ունի օրենքով սահմանված կարգով առավել արդյունավետ դարձնել իրականացվող աշխատանքը եւ ոչ թե կրճատել առկա հաստիքները: »:

26 Առավոտ թերթի 03.02.2009թ. հրապարակումը (<http://www.Aravot.am /2009/02/03/357131/>) վերաբերում է Կապանի թիվ 1, 4, 8, 13 մանկապարտեզների տնօրենների՝ «քաղաքական հնչերանգ»-ով աշխատանքից ազատելուն, թեև քաղաքապետարանի կրթության բաժնի պատասխանատուները հերքեցին դա և վստահեցրին, որ տնօրենները իրենց դիմումի համաձայն են ազատվել աշխատանքից ու նրանց ոչ ոք չի ստիպել:

### **7.2.3.2. Ավագանու նիստեր և որոշումներ**

Կապանի ավագանու (արդեն նախկին ավագանու, քանի որ 02.10.2016թ. կայացել են ՏԲՄ ընտրություններ և նորընտիր ավագանին իր լիազորությունները ստանձնել է 13.11.2016թ.) 07.11.2016թ. թիվ 7 նիստի օրակարգային 3-7-րդ հարցերը վերաբերում էին մեր Ծրագրի թիրախային կազմակերպություններին, մասնավորապես.

1. Կապան քաղաքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
2. Կապան քաղաքի համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,
3. Կապան քաղաքի թիվ 2 երաժշտական դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածությանը համաձայնություն տալու մասին (տնօրեն նշանակվեց Ժ/պ Գայանե Հարությունյանը),
4. Կապան քաղաքի ակումբազրադարանային միավորում համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածությանը համաձայնություն տալու մասին (Շմավոն Մովսիսյանի անվան թանգարանն ընդգրկվեց Կապանի ակումբազրադարանային միավորման կազմում /օրակարգի 17-րդ հարցը/ և կառույցի նոր տնօրեն նշանակվեց թանգարանի նախկին տնօրեն Արմեն Գևորգյանը),
5. Կապան քաղաքի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածությանը համաձայնություն տալու մասին (տնօրեն նշանակվեց Ժ/պ Ջանիկ Գրիգորյանը):

Բացի այդ, Կապան համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանը նշեց, թե նախատեսվում են աշխատողների թվաքանակի կրճատումներ, սակայն 20 տոկոս կրճատումը չի ազդի կառույցների աշխատանքի որակի վրա (այդօրինակ հայտարարությունից հետևում է նաև, որ մինչ այժմ բազմաթիվ աշխատատեղերի անհրաժեշտությունը չի եղել, սակայն այդ հաստիքները չեն կրճատվել, իսկ մարդիկ շարունակել են աշխատել, հետևաբար, հարց է ծագում՝ ինչու՞ մինչ այդ չեն կրճատվել այդ «ավելորդ հաստիք»-ները, որոնց համար բյուջեից զգալի չափով գումարներ են հատկացվել աշխատավարձերի վճարման նպատակով<sup>27</sup>:

### **7.2.3.3. Թափուր հաստիքների և դրանց համալրման վերաբերյալ տեղեկատվություն**

(հայտարարությունների հասանելիություն)

Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի «Թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների հայտարարություններ» բաժնում վերջին թարմացումները վերաբերում են 09.03.2012թ., մինչդեռ հայտնի է, որ ցայսօր բազմաթիվ թափուր պաշտոններ են եղել, որոնք համալրվել են և բազմաթիվ մարդիկ են աշխատանքից ազատվել կամ կրճատվել, որոնց մասին տարբեր մեկնաբանություններով անդրադարձել է նաև մամուլը<sup>28</sup>:

**Թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների հայտարարություններ**

[Ընթացիկ](#)

Արխիվում եղած հայտարարությունների քանակը՝ 3


<sup>27</sup> Տե՛ս «Սոսի» հեռուստատեսության ինտերնետային կայքի 07.11.2016թ. «Ավագանու անդամների վերջին նիստը» խորագրով հրապարակումը՝ (<http://sosi-tv.com/2935--.html>, հեղինակ Շերմինե Միքայելյան)

<sup>28</sup> Սյունյաց երկիր, Թողարկված է 2014-04-23 17:37:13-ին ««Կարծիքը, թե իբր որդեգրել եմ կենսաթոշակառուներից ազատվելու գործելակերպ, չի համապատասխանում իրականությանը» խորագրով հրապարակումը ([http://syuniacyerkir.am/news\\_view.php?post\\_id=14462](http://syuniacyerkir.am/news_view.php?post_id=14462))

Պաշտոնը	Դրույքաչափը	Հիմնարկը	Հայտարարության վերջնաժամկետը
<a href="#">Քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ</a>	80000	Կապանի քաղաքապետարան	09/03/2012
<a href="#">Կրթության, մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ</a>	70000	Կապանի քաղաքապետարան	09/03/2012
<a href="#">Օրագրերի և արտաքին կապերի բաժնի առաջին կարգի մասնագետ</a>	60000	Կապանի քաղաքապետարան	28/10/2011
1			

### 7.2.3.4. Օրագրի Հարցազրուցավարների կողմից ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների, ՄԿ-ի աշխատողների ջրջանում իրականացրած մոնիթորինգի արդյունքներից


Գծապատկեր 4 (1) Հարցվողների ջրջանում աշխատանքի ընդունման ժամկետի պատկերը (արտահայտված %-ով)



Հարցման մասնակիցների 4,5%-ը նշել է, որ աշխատանքի է ընդունվել վերջին 3-ից 6 ամիսների ընթացքում, 3%-ը՝ վերջին մեկ տարվա ընթացքում, 24,3%-ը՝ վերջին չորս տարիների ընթացքում, 68,2%-ը՝ ավելի վաղ, այսինքն՝ չորս և ավելի տարի առաջ:

Հարցման մասնակիցների 100%-ը նշել է, որ ունի կնքված աշխատանքային պայմանագիր հաստատության հետ:

Գծապատկեր 5(2) Հարցվողների աշխատանքային պայմանագիր ունենալու պատկերը




Հաջորդ հարցի միջոցով պարզել ենք, որ հարցվողների 89,4%-ը աշխատանքային պայմանագիրը կնքել է աշխատանքի ընդունվելուց առաջ, իսկ 10,6%-ը՝ հետո:

Գծապատկեր 6(3) Աշխատանքի ընդունվելու համար պայմանագրերի կնքման ժամանակահատվածը (արտահայտված %-ով)




Գծապատկեր 7(4) ՆՈւՀ-երի և ԱԿՀ-ների խմբասենյակների և սանհանգույցների վիճակը գնահատելու պատկերը ըստ աշխատողների (արտահայտված %-ով)



Հարցման մասնակիցների 15,1%-ը ՆՈւՀ-երի և ԱԿՀ-ների խմբասենյակների ու սանհանգույցների վիճակը գնահատել է անբավարար, 45,5%-ը՝ բավարար, 19,7%-ը՝ լավ, 18,2%-ը՝ զերազանց, 1,5%-ը՝ դժվարացել է պատասխանել:

Այն հարցին, թե ունե՞ն արդյոք հաստատությունները անվտանգության կամ կողմնակի անձանց մուտքը հաստատություն արգելող աշխատակից՝ հարցվողների 62,1%-ը պատասխանել է՝ այո, 37,9%-ը՝ ոչ:

**Գծապատկեր 8(13) Հաստատությունների անվտանգության կամ կողմնակի անձանց մուտքն արգելող աշխատակիցներ<sup>29</sup> ունենալու մասին պատկերացումը հարցվողների շրջանում (արտահայտված %-ով)**



- ❖ Կապանի համայնքապետարանից հարցմանը մասնակցել են թվով 7 աշխատակից:
- ❖ Հարցվողներից 1-ը ընդունվել է աշխատանքի վերջին 4 տարիների ընթացքում, իսկ մնացած 6-ը ավելի վաղ:
- ❖ Այն հարցին, թե ունեն արդյոք կնքված աշխատանքային պայմանագիր՝ 6 հոգի պատասխանել է՝ այո, իսկ 1-ը՝ ոչ: Աշխատանքային պայմանագիր կնքած 6 աշխատողներից 3-ը նշել են, որ պայմանագիր կնքել են աշխատանքի ընդունվելուց անմիջապես առաջ, 3-ը՝ աշխատանքի ընդունվելուց անմիջապես հետո, իսկ 1 հարցվող նշել է, թե համայնքային ծառայող է (կամ տեղյակ չէ, որ այդ դեպքում ևս պայմանագիր է կնքվում կամ հարցը չի հասկացվել):
- ❖ Այն հարցին, թե ունեն արդյոք ՆՈւՀ-ներն անվտանգության կամ կողմնակի անձանց մուտքն արգելող աշխատակից՝ հարցվողներից 4-ը պատասխանել է այո, իսկ 3-ը՝ ոչ:
- ❖ Այն հարցին, թե ունեն արդյոք ԱԿՀ-ները անվտանգության կամ կողմնակի անձանց մուտքն արգելող աշխատակից՝ հարցվողներից 5-ը պատասխանել է այո, իսկ 2-ը՝ ոչ:

**7.2.4. Շենքային պայմաններով և անհրաժեշտ գույքով ապահովվածությունը (հարցումների և դիտարկման արդյունքներից)**

Թիրախային կազմակերպությունների շենքային պայմանների և անհրաժեշտ գույքով ապահովվածության վերաբերյալ հիմնական տեղեկությունները ստացվել են մեր Ծրագրի Հարցազրուցավարների կողմից:

Հարցազրուցավարները թիրախային հաստատություններում աշխատողների հետ հարցաթերթ լրացնելուն զուգընթաց փորձել են պարզել նաև, թե

1. ինչպիսի՞ շենքային և հարմարեցված պայմաններ (խմբասենյակներ, դահլիճներ, սանհանգույցներ, թեքահարթակներ և այլն), գույք ունեն թիրախային հաստատությունները (նյութատեխնիկական հագեցվածությունն՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարի 18.09.2012թ. թիվ 858-Ն հրամանի),
2. ՆՈւՀ-երում առկա՞ են արդյոք «Երեխաների շարժի մատյան»-ներ և լրացվա՞ծ են դրանք պատշաճ կերպով (ՀՀ ԿԳ նախարարի 28.07.2011թ. թիվ 870-Ն հրամանը),
3. առկա՞ են արդյոք թիրախային հաստատություններում տվյալ հաստատություններ հաճախող երեխաների ծնողների հետ կնքված՝ երեխաների ուսումնառության (խումբ, խմբակ, բաժին հաճախելու) պայմանագրերի օրինակները և այլ փաստաթղթեր:

Բացի այդ, թիրախային կազմակերպություններում առկա հիմնախնդիրների պարզման և այն անհրաժեշտ տեղեկատվությունը, որն ըստ մեզ հնարավոր չէր հարցաթերթերի միջոցով կամ դիտարկմամբ ստանալ (օրինակ՝ 2011-16թթ. մատակարարների, թափուր աշխատատեղերի, վերջին մեկ տարվա ընթացքում ծնողների կողմից հաստատություն ներկայացված դիմում-

<sup>29</sup> ՀՀ ԿԳ նախարարի 26.01.2007թ. «ՀՀ պետական և համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» թիվ 29-Ն հրամանի 21-րդ կետը (դրնապանի հաստիքի մասին)



բողոքների, առաջարկությունների, դրամահավաքության դեպքերի, այս տարի կենսաթոշակի տարիքը լրացող անձանց թվաքանակի և պաշտոնների, 2012թ. և 2016թ. ՏԻՄ ընտրությունների նախընտրական և հետընտրական ժամանակաընթացքներում աշխատանքից ազատված և նույն ժամանակաընթացքներում աշխատանքի ընդունված աշխատողների թվաքանակի, հաստատություն ընդունվելու նպատակով հերթագրված երեխաների թվաքանակի, վարձավճարների զեղչման արտոնություններից օգտվող երեխաների թվաքանակի, ԱԿՀ-ներում խմբակների, խմբակներ հաճախող երեխաների թվաքանակների, վարձավճարների մասին և այլ այնպիսի տեղեկատվություն, որի տրամադրումն արգելված չէ օրենքով), փորձել ենք ձեռք բերել տվյալ կազմակերպություններ գրություններ (Ե-16/3—Ե/16/26, 12.10.2016թ., թվով 24 գրություն) հասցեագրելով (փոստային ծառայության միջոցով ուղարկվել են 13.10.2016թ.)՝ ակնկալելով հնարավորինս սպառիչ պատասխաններ: Իսկ ս/թ նոյեմբերի 11-ին Ծրագրի մոնիթորինգի նախնական արդյունքների ամփոփման և թիրախային հաստատությունների ներկայացուցիչներից առաջարկներ լսելու նպատակով կազմակերպվեց հանդիպում-քննարկում, որի ժամանակ մի քանի մասնակիցների կողմից առաջարկություններ և հիմնախնդիրներ ներկայացվեցին: Քանի որ տեղեկատվություն հայցելու գրությունները մինչ օրս այդպես էլ մնացել են անպատասխան, ուստի ստիպված ենք ամբողջացնել այն, ինչը ստացվել է մինչ այժմ՝ 29.11.2016թ. իրականացված գործողությունների արդյունքում:

Ըստ այդմ՝ արձանագրվել է հետևյալը (էլ.փոստի հասցեները ավելացվել են գնումների հրավերներից՝ <https://www.azdarar.am>, <http://www.gnumner.am> ):

№	Հաստատություն	Հաստատության փաստաթղթերը	Դահլիճների, խմբասենյակների, սանհանգույցների վիճակը, թերահարթակների առկայություն
1	«Կապանի թիվ 1 ՆՈւՀ» ՀՈԱԿ (ք. Կապան, Շահումյան 20/1) <a href="mailto:kapani1nuh@mail.ru">kapani1nuh@mail.ru</a>	1.Լիցենզիա-փակցված է 2.Երեխաների շարժի մատյան-լրացվում է 3.Կարգացանկը-փակցված է 4.Պայմանագրերը 4.1.Ծնողների հետ կնքված-առկա 4.2.Աշխատողների հետ կնքվ.-առկա	1.Դահլիճ-բավարար, կարիք ունի վերանորոգման 2.Խմբասենյակներ- 3-ը վերանորոգված են, 3-ը ոչ 3.Սանհանգույցներ- 2-ը վերանորոգված են, 4-ը ոչ 4.Թերահարթակ- բացակայում է
2	«Կապանի թիվ 2 ՆՈւՀ» ՀՈԱԿ (ք. Կապան, Բաղաբերդ 11 ) <a href="mailto:nuh2kapan@rambler.ru">nuh2kapan@rambler.ru</a>	1.Լիցենզիա-փակցված է 2.Շարժի մատյան- լրացվում է 3.Կարգացանկը-փակցված է 4.Պայմանագրերը 4.1.Ծնողների հետ կնքվ.-առկա 4.2.Աշխատողների հետ կնքվ.- առկա	1.Դահլիճ-լավ վերանորոգված է, սակայն ունեն նաև այլ տարածք, որը վերանորոգվելուց հետո կարող է ծառահել որպես ֆիզկուլտուրայի (սպորտ) դահլիճ 2.Խմբասենյակներ- 1-ը վերանորոգված է, մյուսները ոչ 3.Սանհանգույցներ- 1-ը կարիք ունի վերանորոգման, մյուսները վերանորոգված են 4.Թերահարթակ- բացակայում է, 5. Բակը ենթակա է բարեկարգման
3	«Կապանի թիվ 4 ՆՈւՀ» ՀՈԱԿ (ք. Կապան, Շահումյան 42 ) <a href="mailto:tiv4nuh@mail.ru">tiv4nuh@mail.ru</a>	1.Լիցենզիա-տնօրենի աշխ.սենյակ 2.Շարժի մատյան- լրացվում է 3.Կարգացանկը-փակցված է 4.Պայմանագրերը 4.1.Ծնողների հետ կնքված-առկա 4.2.Աշխատողների հետ կնքվ.-առկա	1.Դահլիճ-լավ վերանորոգված է 2.Խմբասենյակներ- 4-ը վերանորոգված են, 3-ը ոչ 3. Սանհանգույցներ- 5-ը վերանորոգված են, 2-ը ոչ 4.Թերահարթակ- բացակայում է
4	«Կապանի թիվ 5 ՆՈւՀ» ՀՈԱԿ (ք. Կապան, Բաղաբերդ17 ) <a href="mailto:kapanitiv5nuh@mail.ru">kapanitiv5nuh@mail.ru</a>	1.Լիցենզիա-փակցված է 2.Շարժի մատյան- լրացվում է 3.Կարգացանկը-փակցված է 4.Պայմանագրերը 4.1.Ծնողների հետ կնքված-առկա 4.2.Աշխատողների հետ կնքվ.- առկա	1.Դահլիճ-լավ վերանորոգված է 2.Խմբասենյակներ- 3-ը նորոգված են, մյուսները ոչ 3. Սանհանգույցներ- 1-ը վերանորոգված է, 1-ը ոչ բարվոք և կարիք ունի վերանորոգման 4.Թերահարթակ- բացակայում է



5	«Կապանի թիվ 6 ՆՈւՀ» ՀՈԱԿ ( <i>ք. Կապան, Մ. Պապյան 14</i> ) <a href="mailto:nuh6kapan@rambler.ru">nuh6kapan@rambler.ru</a>	1. Լիցենզիա-տնօրենի աշխ. սենյակում 2. Շարժի մատյան-լրացվում է 3. Կարգացանկը-փակցված է 4. Պայմանագրերը 4.1. Ծնողների հետ կնքված-առկա 4.2. Աշխատողների հետ կնքվ.-առկա	1. Դահլիճ-բավ., կարիք ունի վերանորոգման 2. Խմբասենյակներ-3-ը վերանորոգված են, մյուսները կարիք ունեն վերանորոգման 3. Սանհանգույցներ- 3-ը վերանորոգված են, մյուսները կարիք ունեն վերանորոգման 4. Թեքահարթակ- բացակայում է
6	«Կապանի թիվ 7 ՆՈւՀ» ՀՈԱԿ ( <i>ք. Կապան, Գ. Նժդեհի 26</i> ) <a href="mailto:kapan.2013@mail.ru">kapan.2013@mail.ru</a>	1. Լիցենզիա-փակցված է 2. Շարժի մատյան-լրացվում է 3. Կարգացանկը-փակցված է 4. Պայմանագրերը 4.1. Ծնողների հետ կնքված-առկա 4.2. Աշխատողների հետ կնքվ.-առկա	1. Դահլիճ-բավ., կարիք ունի վերանորոգման 2. Խմբասենյակներ- բոլորը կարիք ունեն վերանորոգման 3. Սանհանգույցներ- բավ., կարիք ունեն վերանորոգման 4. Թեքահարթակ- բացակայում է, բակը ենթակա է բարելավման
7	«Կապանի թիվ 8 ՆՈւՀ» ՀՈԱԿ ( <i>ք. Կապան, Հ. Ավետիսյան 3</i> ) <a href="mailto:marinepetrosyan@rambler.ru">marinepetrosyan@rambler.ru</a>	1. Լիցենզիա-տնօրենի աշխ. սենյակում 2. Շարժի մատյան-լրացվում է 3. Կարգացանկը-փակցված է 4. Պայմանագրերը 4.1. Ծնողների հետ կնքված-առկա 4.2. Աշխատողների հետ կնքվ.-առկա	1. Դահլիճ-բավ., կարիք ունի վերանորոգման 2. Խմբասենյակներ- 1-ը վերանորոգված է, մյուսները կարիք ունեն վերանորոգման 3. Սանհանգույցներ- 2-ը վերանորոգված են, մյուսները կարիք ունեն վերանորոգման 4. Թեքահարթակ- բացակայում է
8	«Կապանի թիվ 9 ՆՈւՀ» ՀՈԱԿ ( <i>ք. Կապան, Շահումյան 6</i> ) <a href="mailto:kapan9nuh@gmail.com">kapan9nuh@gmail.com</a>	1. Լիցենզիա-փակցված է 2. Շարժի մատյան-լրացվում է 3. Կարգացանկը-փակցված է 4. Պայմանագրերը 4.1. Ծնողների հետ կնքված-առկա 4.2. Աշխատողների հետ կնքվ.-առկա	1. Դահլիճ-կիսով չափ նորոգված է /բարվոք/ 2. Խմբասենյակներ- 2-ը վերանորոգված են, 4-ը կարիք ունեն վերանորոգման 3. Սանհանգույցներ- 2-ը վերանորոգված են, 4-ը կարիք ունեն վերանորոգման 4. Թեքահարթակ- բացակայում է
9	«Կապանի թիվ 10 ՆՈւՀ» ՀՈԱԿ ( <i>ք. Կապան, Շինարարներ 10</i> ) <a href="mailto:NUH.HOAK.10.KAPAN@yandex.ru">NUH.HOAK.10.KAPAN@yandex.ru</a>	1. Լիցենզիա-փակցված է 2. Շարժի մատյան-լրացվում է 3. Կարգացանկը-փակցված է 4. Պայմանագրերը 4.1. Ծնողների հետ կնքված-առկա 4.2. Աշխատողների հետ կնքվ.-առկա	1. Դահլիճ-բավարար, կարիք ունի վերանորոգման 2. Խմբասենյակներ- բոլոր խմբասենյակները կարիք ունեն վերանորոգման 3. Սանհանգույցներ- բավարար, կարիք ունեն վերանորոգման 4. Թեքահարթակ- բացակայում է
10	«Կապանի թիվ 11 ՆՈւՀ» ՀՈԱԿ ( <i>ք. Կապան, թաղամաս Բարաբաթում</i> )	1. Լիցենզիա-տնօրենի աշխ. սենյակում 2. Շարժի մատյան-լրացվում է 3. Կարգացանկը-փակցված է 4. Պայմանագրերը 4.1. Ծնողների հետ կնքված-առկա 4.2. Աշխատողների հետ կնքվ.-առկա	1. Դահլիճ-լավ վերանորոգված է 2. Խմբասենյակներ- վերանորոգված են 3. Սանհանգույցներ- վերանորոգված 4. Թեքահարթակ- բացակայում է 5. Կա ջեռուցման չլուծված խնդիր
11	«Կապանի թիվ 12 ՆՈւՀ» ՀՈԱԿ ( <i>ք. Կապան, Հալիճոր 8</i> ) <a href="mailto:dgayane79@mail.ru">dgayane79@mail.ru</a>	1. Լիցենզիա-տնօրենի աշխ. սենյակում 2. Շարժի մատյան-լրացվում է 3. Կարգացանկը-փակցված է 4. Պայմանագրերը 4.1. Ծնողների հետ կնքված-առկա 4.2. Աշխատողների հետ կնքվ.-առկա	1. Դահլիճ-լավ վերանորոգված է 2. Խմբասենյակներ- բավարար, կարիք ունեն վերանորոգման, գույքով համալրման 3. Սանհանգույցներ- 2-ը վերանորոգված են, մյուսները կարիք ունեն վերանորոգման 4. Թեքահարթակ- բացակայում է, բակը ասֆալտապատման կարիք ունի (այն շենքի բակ է) Հաստատությունը ոչ տիպային է և գտնվում է 5 հարկանի բազմաբնակարան շենքի 1-ին հարկում
12	«Կապանի թիվ 13 ՆՈւՀ» ՀՈԱԿ ( <i>ք. Կապան, Չորր 8</i> ) <a href="mailto:tiv13nuhhoak@yahoo.com">tiv13nuhhoak@yahoo.com</a>	1. Լիցենզիա-տնօրենի աշխ. սենյակում 2. Շարժի մատյան- լրացվում է 3. Կարգացանկը-փակցված է 4. Պայմանագրերը 4.1. Ծնողների հետ կնքված-առկա 4.2. Աշխատողների հետ կնքվ.-առկա	1. Դահլիճ-լավ վերանորոգված է 2. Խմբասենյակներ- 2-ը կարիք ունեն վերանորոգման, մյուսները վերանորոգված են 3. Սանհանգույցներ- 1-ը կարիք ունի վերանորոգման, մյուսները վերանորոգված են 4. Թեքահարթակ- բացակայում է 5. Կարիք ունեն բակային տաղավարների և խմբասենյակի ավելացման /նորոգվելուց հետո/
13	«Կապանի թիվ 8 ՆՈւՀ» ՀՈԱԿ-ի «Կավարտ» մ/ճ ( <i>ք. Կապան, թաղամաս Կավարտ</i> )	1. Կարգացանկը-փակցված է 2. Շարժի մատյան- լրացվում է  Պայմանագրերը և լիցենզիան տնօրենի փոխանցմամբ գտնվում են «Կապանի թիվ 8 ՆՈւՀ» ՀՈԱԿ-ում	1. Դահլիճ-բավ. կարիք ունի վերանորոգման 2. Խմբասենյակներ- կարիք ունեն վերանորոգման 3. Սանհանգույցներ- վերանորոգված են 4. Թեքահարթակ- բացակայում է 5. Ջեռուցումը փայտե վառարանով 6. Տանիքից ջուր է կաթում

14	«Կապանի թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ ( <i>Ք. Կապան, Ռ. Մելիքյան 2</i> )	1.Լիցենզիա-առկա է միայն պետ. ռեզիստրի վկայական 2.Հաճախման մատյան-լրացվում է 3.Դասացուցակ-փակցված է պատին 4.Պայմանագրերը՝ 4.1.Ծնողների հետ կնքված-առկա 4.2.Աշխատողների հետ կնքվ.-առկա	1.Դահլիճ-լավ վերանորոգված է 2.Խմբասենյակներ- բոլորը վերանորոգված են 3. Սանհանգույցներ- վերանորոգված են 4.Թեքահարթակ- բացակայում է Ունեն ջեռուցման համակարգ, սակայն ֆինանսավորող չկա, որ շենքը ջեռուցվի ( <u>2014թ. կատարվել են 27522.6 հազ ՀՀ դրամի հիմնանորոգման աշխատանքներ</u> )
15	«Կապանի թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ ( <i>Ք. Կապան, Ռ. Մինասյան 18</i> )	1.Լիցենզիա-առկա է միայն պետ. ռեզիստրի վկայական 2.Հաճախման մատյան-լրացվում է 3.Դասացուցակ-առկա է փակցված է 4.Պայմանագրերը՝ 4.1.Ծնողների հետ կնքված-առկա 4.2.Աշխատողների հետ կնքվ.-առկա	1.Դահլիճ-բավ. կարիք ունի վերանորոգման 2.Խմբասենյակներ- կարիք ունեն վերանորոգման 3. Սանհանգույցներ- վերանորոգված են 4.Թեքահարթակ- բացակայում է 5.Ջեռուցումը փայտե վառարանով 6.Տանիքից ջուր է կայում, կարիք ունի վերանորոգման
16	«Կապանի թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ ( <i>Ք. Կապան, Չորքի 20</i> )	1.Լիցենզիա-առկա է միայն պետ. ռեզիստրի վկայական 2.Հաճախման մատյան- լրացվում է 3.Դասացուցակ-փակցված է 4.Պայմանագրերը՝ 4.1.Ծնողների հետ կնքված-առկա 4.2.Աշխատողների հետ կնքվ.-առկա	1.Դահլիճ-լավ վերանորոգված է 2.Խմբասենյակներ- բոլորը վերանորոգված են 3. Սանհանգույցներ- վերանորոգված են 4.Թեքահարթակ- բացակայում է
17	«Կապանի արվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ ( <i>Ք. Կապան, Թումանյան 14</i> )	Տնօրենը նշեց, թե բոլոր փաստաթղթերը առկա են, սակայն քանի որ նշված հաստատությունը հիմնանորոգվում է, ուստի փաստաթղթերը տեսնել չհաջողվեց	Հաստատությունը հիմնանորոգվում է <i>Ծայրահեղ վատ վիճակի մասին նշվեց այն ժամանակ, երբ արդեն սկսվեցին վերանորոգման աշխատանքները, իսկ մինչ այդ՝ փորձ էր արվում ամեն ինչ «մխիթարող» կերպով ներկայացվել:</i>
18	«Կապանի գեղարվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ ( <i>Ք. Կապան, Ռ. Մինասյան 18</i> )	1.Լիցենզիա-առկա է միայն պետ. ռեզիստրի վկայական 2.Հաճախման մատյան- լրացվում է 3.Դասացուցակ-փակցված է պատին 4.Պայմանագրերը՝ 4.1.Ծնողների հետ կնքված-առկա 4.2.Աշխատողների հետ կնքվ.-առկա	1.Դահլիճ-չունեն 2.Խմբասենյակներ- կարիք ունեն վերանորոգման 3. Սանհանգույցներ- կարիք ունեն վերանորոգման 4.Թեքահարթակ- բացակայում է
19	«Կապանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ ( <i>Ք. Կապան, Ռ. Մելիքյան 8</i> )	1.Լիցենզիա-առկա է միայն պետ. ռեզիստրի վկայական 2.Գրանցամատյան- լրացվում է 3.Դասացուցակ-փակցված է 4.Պայմանագրերը՝ 4.1.Ծնողների հետ կնքված-առկա 4.2.Աշխատողների հետ կնքվ.-առկա	1.Դահլիճ-բավ., կարիք ունի վերանորոգման 2.Խմբասենյակներ- կարիք ունեն վերանորոգման 3. Սանհանգույցներ- վերանորոգված են 4.Թեքահարթակ- բացակայում է
20	«Կապանի քաղաքապետարանի մշակույթի կենտրոն» ՀԲՀ ( <i>Ք. Կապան, Չարենցի 1</i> )	Հաստատության ղեկավարը թույլ չտվեց իրականացնել մոնիթորինգ հաստատության ներսում, իսկ աշխատողները հրաժարվեցին անգամ դրսում մասնակցել հարցմանը  ( <i>Տնօրենը պնդում է, թե ՀԿ-ները նման մոնիթորինգներ իրականացնելու իրավունք չունեն</i> )	Այդուհանդերձ, նշենք հետևյալը. 1.Դահլիճ-փոքր դահլիճը վերանորոգված է, մեծը՝ ոչ 2.Սանհանգույցներ-վերանորոգված են միայն առաջին հարկի սանհանգույցները, 3. Շենքը վերանորոգվում է ( <i>ընթացքի մեջ է, հատկացվել է 35836.748 հազ. ՀՀ դրամ՝ ըստ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում առկա տեղեկատվության</i> )
21	«Դավիթ Համբարձումյանի անվան Կապանի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ ( <i>Ք. Կապան, Մ.Պապյան 1ա</i> )	1.Լիցենզիա-առկա են պետ.ռեզիստրի վկայականը և մարզիչների սպորտի վարպետի վկայականները 2.Գրանցամատյան-լրացվում է 3.Պայմանագրերը՝ 3.1.Ծնողների հետ կնքված-առկա 3.2.Աշխատողների հետ կնքվ.-առկա	Հաստատության ներսում իրականացվում են վերանորոգման աշխատանքներ
22	«Կապանի աթլետիկայի»	1.Լիցենզիա-առկա են պետ. ռեզիստրի վկայականը և մարզիչների սպորտի	Հաստատության ներսում իրականացվում են վերանորոգման աշխատանքներ

	մանկապատանեկան մարզադպրոց» ՀԲՀ ( <i>ք. Կապան, Մ. Պապյան 1ա</i> )	վարպետի վկայականները 2. Գրանցամատյան- լրացվում է 3. Պայմանագրերը 3.1. Ծնողների հետ կնքված-առկա 3.2. Աշխատողների հետ կնքվ.-առկա	1. Կա ջեռուցման խնդիր. հանդերձարաններում ձմռանը ցուրտ է լինում 2. Տեխ. վարժությունների համար բազա (գույք) չկա 3. Մարզումների համար ռետինե ծածկ չկա 4. Սեպակոշիկների բացակայություն
23	«Կապանի մարմնամարզության դպրոց» ՀԲՀ ( <i>ք. Կապան, Թումանյան 5</i> )	Հատատության ղեկավարը թույլ չտվեց իրականացնել մոնիթորինգ հաստատության ներսում իսկ աշխատողները հրաժարվեցին անգամ դրսում մասնակցել հարցմանը ( <i>Տնօրենը պնդում է, թե ՀԿ-ները նման մոնիթորինգներ իրականացնելու իրավունք չունեն</i> )	Այդուհանդերձ, հաջողվեց պարզել հետևյալը. 1. Դահլիճ- վերանորոգման կարիք ունի, ջեռուցում չկա 2. Սանհանգույցներ-վերանորոգված են 3. Հանդերձարաններ-վերանորոգված են 4. Թեքահարթակ-բացակայում է
24	«Կապանի մանկական կենտրոն» ՀՈԱԿ ( <i>ք. Կապան, Մ. Պապյան 14</i> ) (թիվ 6 ՆՈւՀ-ի մասնաշենքում) mankakankentron@mail.ru	1. Լիցենզիա-առկա է միայն պետ ռեգիստրի վկայական 2. Շարժի մատյան- լրացվում է 3. Կարգացանկը-փակցված է 4. Պայմանագրերը 4.1. Ծնողների հետ կնքված-առկա 4.2. Աշխատողների հետ կնքվ.-առկա	1. Կենտրոնը բավարար կոսմետիկ վերանորոգված է, սակայն հատակը խիստ կարիք ունի վերանորոգման 2. Սանհանգույցը վերանորոգված է 3. Առկա է թեքահարթակ Համայնքապետարանը նախատեսել է <sup>30</sup> Կենտրոնին հատկացնել այլ տարածք՝ Կապանի թիվ 6 ՆՈւՀ-ի մասնաշենքից տեղափոխելով ՄՊՍԿ-ի (կետ 19) շենք


**Կապանի քաղաքապետարանի թվով յոթ աշխատողների շրջանում իրականացված հարցումների արդյունքներից**

- ❖ Հարցման մասնակիցներից 3-ը ՆՈւՀ-երի շենքային պայմանները գնահատել են բավարար, 3-ը՝ լավ, 1 հարցվող՝ դժվարացել է տվյալ հարցին պատասխանել: Հարցման մասնակիցներից 3-ը ՆՈւՀ-երի գույքի վիճակը գնահատել են բավարար, 3-ը՝ լավ, 1 հարցվող՝ դժվարացել է պատասխանել: Հարցման մասնակիցներից 3-ը ՆՈւՀ-երի սանհանգույցների վիճակը գնահատել են բավարար, 3-ը՝ լավ, 1-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցման մասնակիցներից 3-ը ՆՈւՀ-երի դահլիճների վիճակը գնահատել են բավարար, 3-ը՝ լավ, 1-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցման մասնակիցներից 3-ը ՆՈւՀ-երի խմբասենյակների վիճակը գնահատել են բավարար, 3-ը՝ լավ, 1-ը՝ դժվարացել է պատասխանել:
- ❖ Հարցման մասնակիցներից 3-ը ԱԿՀ-ների շենքային պայմանները գնահատել են բավարար, 2-ը՝ լավ, 1-ը՝ անբավարար, 1-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցման մասնակիցներից 3-ը ԱԿՀ-ների գույքի վիճակը գնահատել են բավարար, 2-ը՝ լավ, 1-ը՝ անբավարար, 1-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցման մասնակիցներից 3-ը ԱԿՀ-ների սանհանգույցների վիճակը գնահատել են բավարար, 2-ը՝ լավ, 1-ը՝ անբավարար, 1-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցման մասնակիցներից 3-ը ԱԿՀ-ների դահլիճների վիճակը գնահատել են բավարար, 2-ը՝ լավ, 1-ը՝ անբավարար, 1-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցման մասնակիցներից 3-ը ԱԿՀ-ների խմբասենյակների վիճակը գնահատել են բավարար, 2-ը՝ լավ, 1-ը՝ անբավարար, 1-ը՝ դժվարացել է պատասխանել:

**ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների, ՄԿ-ի աշխատողների շրջանում իրականացված հարցումների արդյունքներից**

***Գծապատկեր 9(4)ՆՈւՀ-երի և ԱԿՀ-ների խմբասենյակների և սանհանգույցների վիճակը գնահատելու պատկերը՝ ըստ աշխատողների (արտահայտված %-ով)***


<sup>30</sup> Նույն պատասխանն էր ստացվել դեռևս նախորդ տարի՝ երբ խնդիրը Կապան համայնքի 2016թ. բյուջեի հանրային լսմանը ներկայացվել էր «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի Կապանի ցերեկային կենտրոնի քաղաքացիական նախաձեռնությունների խմբի կողմից՝ 11.12.2015թ. (<https://www.facebook.com/media/set/?set-oa.1656401951307094&type=3>)



Հարցման մասնակիցների 15,1%-ը ՆՈւՀ-երի և ԱԿՀ-ների խմբասենյակների ու սանհանգույցների վիճակը գնահատել է անբավարար, 45,5%-ը՝ բավարար, 19,7%-ը՝ լավ, 18,2%-ը՝ գերազանց, 1,5%-ը՝ դժվարացել է պատասխանել:

**Ծնողների ջրջանում իրականացված հարցումների արդյունքներից.**

**Գծապ. 10(17) Հաստատությունների խմբասենյակների և սանհանգույցների վիճակի գնահատումն՝ ըստ ծնողների**



**Գծապ. 11(18) Վարձավճարի սահմանմանը մասնակցություն ունենալու պատկերը (արտահայտված %-ով)**




Հարցված ծնողների ընդամենը 20%-ն է հաստատությունների խմբասենյակների և սանհանգույցների վիճակը գնահատել անբավարար, 44%-ը՝ բավարար, 23%-ը՝ լավ, 12%-ը՝ գերազանց, 1%-ը՝ դժվարացել է պատասխանել:

Հարցվողների 10,5%-ը նշել է, թե մասնակցել է ծնողական և/կամ խմբակի վարձավճարի սահմանմանը, 82%-ը՝ չի մասնակցել, իսկ 7,5%-ը՝ չգիտեր, որ իրավունք ունի մասնակցելու այդ գործընթացին:


**Բնակչության ջրջանակներում իրականացված սոցիալական հարցումների արդյունքներից.**

**Գծապատկեր 12(34) ՆՈւՀ-երի պայմանների գնահատման պատկերը՝ ըստ հարցվողների**



Հարցման մասնակիցների 23,2%-ը ՆՈւՀ-երի շենքային պայմանները գնահատել է անբավարար, 42%-ը՝ բավարար, 23,2%-ը՝ լավ, 4,3%-ը՝ գերազանց, 7,3%-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցվածների 23,1%-ը ՆՈւՀ-երի գույքը գնահատել է անբավարար, 43,4%-ը՝ բավարար, 25%-ը՝ լավ, 5,7%-ը՝ գերազանց, 2,8%-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցվածների 31,9%-ը ՆՈւՀ-երի սանհանգույցների վիճակը գնահատել է անբավարար, 20,3%-ը՝ բավարար, 31,9%-ը՝ լավ, 8,7%-ը՝ գերազանց և 7,2%-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցվածների 11,6%-ը ՆՈւՀ-երի դահլիճների վիճակը գնահատել է անբավարար, 43,5%-ը՝ բավարար, 30,4%-ը՝ լավ, 10,2%-ը՝ գերազանց, 4,3%-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցվածների 19%-ը ՆՈւՀ-երի խմբասենյակների վիճակը գնահատել է անբավարար, 33,3%-ը՝ բավարար, 38%-ը՝ լավ, 7,2%-ը՝ գերազանց, 2,8%-ը՝ դժվարացել է պատասխանել:

**Գծապատկեր 13(35) ԱԿՀ-ների պայմանների գնահատման պատկերը՝ ըստ հարցվողների**



Հարցման մասնակիցների 33,3%-ը Կապանի ԱԿՀ-ների շենքային պայմանները գնահատել է անբավարար, 38%-ը՝ բավարար, 21,7%-ը՝ լավ, 2,9%-ը՝ գերազանց, 4,3%-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցման մասնակիցների 29%-ը ԱԿՀ-ների գույքը գնահատել է անբավարար, 42%-ը՝ բավարար, 22%-ը՝ լավ, 1,4%-ը՝ գերազանց, 5,8%-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցման մասնակիցների 32%-ը ԱԿՀ-ների սանհանգույցների վիճակը գնահատել է անբավարար, 23,2%-ը՝ բավարար, 33,3%-ը՝ լավ, 1,4%-ը՝ գերազանց, 10,1%-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցման մասնակիցների 14,4%-ը ԱԿՀ-ների դահլիճների վիճակը գնահատել է անբավարար, 49,2%-ը՝ բավարար, 22%-ը՝ լավ, 4,3%-ը՝ գերազանց, 10,1%-ը՝ դժվարացել է պատասխանել: Հարցման մասնակիցների 15%-ը ԱԿՀ-ների խմբասանականների վիճակը գնահատել է անբավարար, 49%-ը՝ բավարար, 28%-ը՝ լավ, 4%-ը՝ գերազանց, 4%-ը՝ դժվարացել է պատասխանել:

## **7.2.5. Բյուջե, ծնողական և ուսումնառության վարձավճարներ, դրամահավաքություն**

### **7.2.5.1.1. Բյուջետային հատկացումներն՝ ըստ Կապանի համայնքապետարանի կայքի**

Հավելված 2

Կապան քաղաքային համայնքի ավագանու

«21» դեկտեմբեր 2015թ. թիվ 97-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 6

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՄԿԱՐԳՄԱՆ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառույթի դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ա.7 +ա.8)	այդ թվում՝	
						վարչական մաս	ֆոնդային մաս

(հազար դրամներով)

2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2950)	568396,50	552866,50	15530,0
				այդ թվում՝			
2910	09	1	0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն	352778,90	337248,90	15530,0
				որից՝			

2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն	352778,90	337248,90	15530,0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	այդ թվում՝	352778,90	337248,90
				Ա.ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	այդ թվում՝	337248,90	337248,90
				1.4 ՍՈՒԲՄԻԴԻԱԼԵՐ		337248,90	337248,90
				այդ թվում			

				ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ)ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	337248,90	337248,90	
				որից՝			
				-Սուբսիդիաներ պետական (համայնքային)կազմակերպություններին	337248,90	337248,90	
				Բ.ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	15530,0		15530,0
				այդ թվում՝			
				1.1ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	15530,0		15530,0
				այդ թվում՝			
				ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	15530,0		15530,0
				որից՝			
				-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	15530,0		15530,0
				ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	0,0		0,0
				որից՝			
				-Այլ մեքենաներ և սարքավորումներ	0,0		0,0
2950	09	5	0	<b>Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն</b>	<b>215617,6</b>	<b>215617,6</b>	
				որից՝			
2951	09	5	1	<b>Արտադպրոցական դաստիարակություն /ՀՈԱԿ/</b>	<b>215617,6</b>	<b>215617,6</b>	
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	այդ թվում՝	215617,6	215617,6
				Ա.ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ	այդ թվում՝	215617,6	215617,6
				1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	215617,6	215617,6	
				այդ թվում			
				ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ)ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	215617,6	215617,6	
				որից՝			
				-Սուբսիդիաներ պետական (համայնքային)կազմակերպություններին	215617,6	215617,6	

( Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքից)

**Ծանոթություն:** Կապանի ավագանու 04.05.2016թ. որոշմամբ համայնքի 2016թ. բյուջեի հաստատման մասին Կապանի ավագանու 21.12.2015թ. թիվ 97-Ն որոշման Հավելված 2-ում *(բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման)* և կատարվել են փոփոխություններ և նախադպրոցական ու տարրական ընդհանուր կրթության ծախսերի չափ է նշվել 20000 հազ. ՀՀ դրամը, իսկ արտադպրոցական դաստիարակության ծախսերի՝ 15000 հազ. ՀՀ դրամը:

Կապանի ավագանու 29.06.2016թ. որոշմամբ համայնքի 2016թ. բյուջեի հաստատման մասին Կապանի ավագանու 21.12.2015թ. թիվ 97-Ն որոշման Հավելված 2-ում *(բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման)* և կատարվել են փոփոխություններ ու այս անգամ արդեն՝ նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթության ծախսերի նվազեցման թիվ է նշվել 9048.4 հազ. ՀՀ դրամը, իսկ արտադպրոցական դաստիարակության ծախսերի ավելացման՝ 4561.3 հազ. ՀՀ դրամը:

**7.2.5.1.2. Ոլորտին վերաբերելի բյուջետային հասկացումներն՝ ըստ Սյունիքի մարզպետարանի կայքի**

Միննույն ժամանակ, ըստ «ՀՀ Սյունիքի մարզպետի 2015թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին» հաշվետվության «Ֆինանսական բնագավառ» բաժնում առկա տվյալների՝ ՀՀ պետբյուջեից մարզի նախադպրոցական կրթության համար 2014թ. փաստացի



Ֆինանսավորվել է 62 42.4 , իսկ 2015թ.՝ 8533.6 հազ. ՀՀ դրամ: Ըստ նույն աղբյուրի՝ մարզում արտադարձական դաստիարակության համար պետությունից ֆինանսավորումը կազմել է 55186.0, իսկ 2005թ.՝ 70190.9 հազ. ՀՀ դրամ: Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարների փոխհատուցումը 2014թ. կազմել է 29911.5, իսկ 2015թ.՝ 41077.3 հազ ՀՀ դրամ: Նույն հաշվետվության «Քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառ» բաժնում նշված է, թե Արամ Խաչատրյանի անվան Կապանի թիվ 1 երաժշտական դպրոցում (Մեղրիի թիվ 1, Վ. Խոտանանի դպրոցների և Ազարակ քաղաքի դպրոցի նոր մասնաշենքի հետ միասին՝ 191.5 մլն ՀՀ դրամի չափով) կատարվել են 27522.6 հազ ՀՀ դրամի (պահուստային ֆոնդից) հիմնանորոգման աշխատանքներ<sup>31</sup>: Կապանի մշակույթի կենտրոնի մասնաշենքի վերակառուցման համար հատկացվել է 35836.748 հազ ՀՀ դրամ:

**Այլ ընդհանուր տեղեկություններն ըստ նույն կայքի.**

2015թ. տվյալներով մարզում հաշվառվել են նախադպրոցական տարիքի 6527 երեխա, սակայն մարզի 6 քաղաքային և 28 գյուղական համայնքներում գործող 54 հաստատություններում խմբավորված 171 խմբերում ընդգրկվել են 3871 երեխա, այսինքն՝ 59 %-ը:

Նույն հաշվետվության «Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցեր» բաժնի տեղեկությունների համաձայն՝ մարզի թվով 11 երաժշտական դպրոցների 154 սովորողներ ընդգրկված են պետության կողմից ուսման վարձավճարի փոխհատուցման ծրագրում:

**7.2.5.2. Ծնողական և ուսումնառության վարձավճարներ.**

Հարկ է նշել, որ մինչ մեր Ծրագրի մեկնարկը՝ ՆՈւՀ-երում, ԱԿՀ-ներում (ՄԿ-ի ծառայություններն անվճար են) ծնողական և ուսումնառության վարձավճարների դրույքաչափերը վերջին անգամ սահմանվել էին Կապանի ավագանու 25.12.2013թ. թիվ 138-Ն որոշմամբ: Նույն որոշմամբ՝ ՆՈւՀ-երում ծնողական ամսական վարձավճարի դրույքաչափը կազմել է 4000 ՀՀ դրամ (2007թ. փետրվարի 1-ից վճարի չափը 2000-ից դարձավ 3000 ՀՀ դրամ): Սակայն, հաշվի առնելով, որ մեր կողմից իրականացվող Ծրագրի ժամանակաընթացքում է Կապանի ավագանին համայնքային ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երի և ԱԿՀ-ների վարձավճարների դրույքաչափերը վերահաստատել (ավագանու 25.12.2013թ թիվ 138-Ն որոշմամբ սահմանված դրույքաչափերը չեն փոփոխվել) և նոր ծառայությունների մատուցման համար նոր դրույքաչափեր սահմանել (տե՛ս ավագանու 07.11.2016թ նիստի տեսանկյունը<sup>32</sup>), ուստի ներկայացվում է Կապանի ավագանու տվյալ որոշման տեքստն ամբողջությամբ.

<p><b>Ո Ր Ո Շ ՈՒ Մ</b></p> <p>07 նոյեմբերի 2016 թվականի N 58-Ն</p> <p>ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶՄՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ Դեկլարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19)-րդ կետով, համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, համայնքի ավագանին որոշում է.</p> <p>1. Համայնքի նախադպրոցական կրթության հաստատություններ հաճախող երեխաների պահպանման համար ծնողական /նրանց օրինական ներկայացուցիչների/ ամսական վճարի դրույքաչափը սահմանել 4000 դրամ:</p> <p>2. Արտադպրոցական դաստիարակության երաժշտական հաստատություններում սովորողների ամսական ուսման վճարը սահմանել ըստ բաժինների՝</p> <p>1) դաշնամուրային՝ 2500 դրամ</p>
--

<sup>31</sup> Մեր Ծրագրի մշտադիտարկման ժամանակ մեզ հաստատության որոշ աշխատակիցներ հայտնեցին, թե տանիքի վերանորոգման կարիք կա, թեև այն նորոգվել էր:

<sup>32</sup> «Սյունիք օնլայն» <http://syunikonline.am/9708.html>, «Սոսի» հեռուստատեսության 07.11.2016թ. «Լուրեր լրատվական»-ը <http://sosi-tv.com/2936--07112016.html>



- 2) լարային գործիքների /բացառությամբ թավջութակ և ալտ/ 2000 դրամ
- 3) փողային և հարվածային գործիքների /բացառությամբ շեփոր/ 1600 դրամ
- 4) երգեցողության 1600 դրամ
- 5) ժողովրդական գործիքներ, թավջութակ, ալտ և շեփոր անվճար
3. Պարարվեստի, թատերական արվեստի բաժիններում 1600 դրամ
4. Կերպարվեստի և դեկորատիվ կիրառական արվեստի բաժիններում 1600 դրամ
5. Երկրորդ գործիք, երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանել լրացուցիչ ուսման վարձավճար 500 դրամ
6. Առավել շնորհալի և երաժշտական կրթությունը շարունակելուն հակված շրջանավարտների համար սահմանել վարձավճար ըստ բաժինների՝
  - 1) դաշնամուրային 3000 դրամ
  - 2) լարային գործիքներ /բացառությամբ թավջութակ և ալտ/ 2500 դրամ
  - 3) փողային և հարվածային գործիքներ /բացառությամբ շեփոր/ 2000 դրամ
  - 4) երգեցողություն 2000 դրամ
  - 5) ժողովրդական գործիքներ, թավջութակ, ալտ և շեփոր անվճար
7. Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի և մշակույթի կենտրոնի խմբերում ընդգրկված սաների համար ամսական վճար սահմանել՝ 500 դրամ
- 7.1 Իրազեկ դպրոցական խմբերում ընդգրկված սաների համար՝ անվճար
8. Մարզադպրոցներում սաների ամսական ուսման վճար սահմանել 500 դրամ
9. Թեթև աթլետիկայի մարզաձևեր անվճար
10. Հայտարարված համաճարակային, բնակլիմայական և այլ պատճառներով ուսումնական պարապմունքները դադարեցնելու ընթացքում վճար չի գանձվում:
11. Համայնքային ենթակայության նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների վճարների դրույքաչափերի նկատմամբ սահմանել 100 % զեղչ՝ բնակչության առանձին խմբերի համար՝
  - ա. գոհված և վիրավոր ազատամարտիկների երեխաներ
  - բ. երկկողմ ծնողագուրկ երեխաներ
  - գ. Հաշմանդամ երեխաներ
  - դ. Չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքի երեխաներ
12. Թույլատրել համայնքի ղեկավարին՝
  - 1) ընդունել անհատական որոշումներ նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպություններ հաճախող անապահով ընտանիքների երեխաների համար վճարի դրույքաչափի 50 %-ի չափով զեղչ սահմանելու մասին:
  - 2) արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունների կողմից բնակչությանը վճարովի ծառայություններ մատուցելու դեպքում՝ հաստատել դրանց ցանկը, վճարների չափը և կարգը:
13. Վճարների գանձման ժամկետ սահմանել մինչև վճարման ամսվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ:
14. Ուժը կորցրած ճանաչել Կապան քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Կապան քաղաքային համայնքի համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 138-Ն որոշումը:

Իսկ, թե որքանով են գործում վերոնշյալում տեղ գտած վարձավճարների դրույքաչափերը, ապա կարելի է նշել, որ թե՛ հարցումները, թե՛ դիտարկումը, վկայում են այն մասին, որ ի տարբերություն ՆՈւՀ-երի՝ ԱԿՀ-ներում վարձավճարների հետ կապված վիճակը հեռու է բավարար լինելուց: ԱԿՀ-ներ հաճախող բազմաթիվ երեխաների ծնողներ նշել են, թե իրենց երեխաները ԱԿՀ-ներում տարբեր խմբակների (*հիմնականում արևելյան մարզաձևեր*) են հաճախում, որոնց համար վճարում են 500 ՀՀ դրամից ավելի չափով և տեղյակ չեն (*անգամ զարմացած են*), որ Կապանի ավագանու որոշմամբ մարզադպրոցներում խմբակների վարձավճարի առավելագույն դրույքաչափը 500 ՀՀ դրամ է, միաժամանակ, պետք է փաստենք նաև, որ ձևոսան ամիսներին մարզադպրոցները ապահովված չեն ջեռուցումով:

Պետք է նշել նաև, որ ի տարբերություն ԱԿՀ-ների բազմաթիվ բաժինների (*խմբակների*) վարձավճարների՝ տեղերում վճարման եղանակի, ՆՈւՀ-երի ծնողական վարձավճարները վճարվում են «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Կապան» մասնաճյուղում (*ավելորդ հերթեր, վճարման անորոշագրերի կամ դրանց պատճենների տրամադրում մանկապարտեզին և այլն*), սակայն դա կոչված է բացառելու ծնող-աշխատակից այդօրինակ շփումն ու դրանից բխող անհարմարությունները:

Մյուս կողմից, մինչ Ծրագիրը, դեռևս ամիսներ առաջ տեղեկացել էինք, թե մանկապարտեզներում ծնողական 4000 ՀՀ դրամից բացի, ծնողները երեխաների պարի կամ կերպարվեստի «խմբակ»-ի կամ այսպես ասած՝ առանձին, անհատական պարապմունքների համար, լրացուցիչ գումար են վճարում (1000 ՀՀ դրամ) և միաժամանակ, պարապմունքները կազմակերպվում են երեխայի մանկապարտեզում գտնվելու ժամերին: Ցավոք, ո՛չ մեր հարցումների ընթացքում, և ո՛չ էլ Ծրագրի ընթացքում մեր բազմաթիվ կոչերին ու հայտարարություններին (*այդ թվում՝ համացանցում, տեղական հեռուստաընկերությունների լուսաբանումներով և այլ*) արձագանքներ չեղան և լրացուցիչ վճար վճարելու հետ կապված տեղեկություններն այդպես էլ մնացին որպես առանձին կարծիքներ, որոնք հիմնավորելու բավարար ապացույցները բացակայում են, հետևաբար՝ մնում առանց հաստատման: Թերևս, նկատի առնելով դա, կարծում ենք, որ մանկապարտեզների նկատմամբ վերահսկողություն իրականացնող կառույցը, այս դեպքում՝ համայնքապետարանը, բավարար կամք և հնարավորություն կունենա պարզելու ծնողական վարձավճարից զատ՝ պարի և/կամ կերպարվեստի պարապմունքների համար լրացուցիչ գումարներ վճարելու փաստը, հատկապես, որ մանկապարտեզներում պետք է լինեն երեխաների զարգացման համար անհրաժեշտ պայմաններ<sup>33</sup>, ինչպես նաև և՛ պարուսույցներ, և՛ այլ աշխատակիցներ, ովքեր երեխաների հետ կազմակերպվող ընդհանուր զարգացմանը կոչված պարապմունքներից մի քանի բաղադրիչը պետք է հատկացնեն նկարելուն և պարելուն նաև (կերպարվեստին և պարարվեստին<sup>34</sup>):

Իսկ թե որքանով են մասնակցում ծնողները և/կամ կրթական հաստատությունների աշխատակիցները ծնողական և/կամ ուսումնառության վարձավճարների սահմանմանը՝ մեր Հարցազրուցավարները պարզել ենք հետևյալը՝



**ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների աշխատողների շրջանում իրականացված հարցումների արդյունքներից.**

*Գծապատկեր 14(5)Վարձավճարի սահմանմանը մասնակցություն ունենալու պատկերը (արտահայտված %-ով)*

*Գծապատկեր 15(6)Աշխատողների կարծիքների պատկերը հաստատությունների վարձավճարի չափի վերաբերյալ (արտահայտված %-ով)*

<sup>33</sup> Նկատի առնելով ՀՀ ԿԳՆ 18.09.2012թ. «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կյուրատեխնիկական հազեցվածության նորմատիվները («Փափուկ գույքի հազեցվածության նորմատիվները՝ ըստ նախադպրոցական ուսումնական հաստատությունների տեսակների և խմբերի») հաստատելու մասին» թիվ 858-Ն հրամանի և ՀՀ ԿԳՆ 30.03.2011թ. «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 247-Ն հրամանի դրույթները


<sup>34</sup> Նկատի առնելով ՀՀ ԿԳՆ 26.04.2011թ. «ՀՀ Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆատրակավորման բնութագրերը հաստատելու մասին» թիվ 416-Ն, ՀՀ ԿԳ նախարարի 26.01.2007թ. «ՀՀ պետական և համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» թիվ 29-Ն հրամանների դրույթներն ու, ընդհանրապես՝ մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները:




Աշխատողների շրջանում հարցվողների 13,7%-ը նշել է, թե մասնակցել է ծնողական և/կամ խմբակի վարձավճարի սահմանմանը, 84,8%-ը՝ չի մասնակցել, իսկ 1,5%-ը՝ չգիտեր, որ իրավունք ունի մասնակցելու այդ գործընթացին:

ՆՈւՀ-երում և ԱԿՀ-ներում սահմանված վարձավճարի չափն ըստ հարցվողների 16,7%-ի՝ ցածր է, 71,2%-ի համար՝ բավարար է, 3%-ի՝ բարձր է, իսկ 9,1%-ը՝ դժվարացել է պատասխանել:

**Գծապատկեր 16(11) Դիմում-բողոք կամ առաջարկություն հաստատությանը ներկայացրած լինելու պատկերը (արտահայտված %-ով)**




**Գծապատկեր 17(12) Դիմում-բողոք կամ առաջարկություն ՏԲՄ-ին ներկայացրած լինելու պատկերը (արտահայտված %-ով)**



Հարցվողների 22,7%-ը նշել է, որ ներկայացրել է դիմում-բողոք կամ առաջարկություն հաստատությանը, 77,3%-ը՝ ոչ:

Հարցվողների 12,1%-ը նշել է, որ ներկայացրել է դիմում-բողոք կամ առաջարկություն ՏԲՄ-ին, 87,9%-ը՝ ոչ:

**Գծապատկեր 18(19) Վարձավճարի չափի վերաբերյալ կածիքների պատկերը (արտահայտված %-ով)**




Այն հարցին, թե ինչ կարծիք ունեն ՆՈւՀ-երի և ԱԿՀ-ների համար սահմանված վարձավճարի չափի վերաբերյալ, հարցմանը մասնակցած ծնողների 11,4%-ը պատասխանել է, թե ցածր է, 77,1%-ը՝ բավարար է (ըստ իրենց՝ նկատի ունենալով ՆՈւՀ-երի վարձավճարը և այն խմբակների վարձավճարները, որոնց համար վճարում են 500 ՀՀ դրամից ավելի չափով, օրինակ՝ արևելյան մարզաձևերի դեպքում, պարի խմբակի դեպքում), 6,3%-ը՝ բարձր է, իսկ 5,2%-ը՝ օգտվում է զեղչից:

### 7.2.5.3. Դրամահավաքության դեպքեր

Հարցումների միջոցով Օրագրային Թիմը նպատակ ուներ նաև բացահայտել դրամահավաքության դեպքերն ու տարբերակված մոտեցումը, ինչպես նաև այլ երևույթների առկայությունը կամ բացակայությունը Կապանի ՆՈւՀ-երում, ԱԿՀ-ներում և ՄԿ-ում: Ըստ այդմ նշենք հետևյալը.

Կապանի քաղաքապետարանից հարցմանը մասնակցած թվով 7 աշխատողները նշել են, թե ընդհանրապես չեն հանդիպել դրամահավաքության դեպքերի Կապանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող ԱԿՀ-ներում և ՆՈւՀ-երում<sup>35</sup>:


**Գծապատկեր 20(7) Դրամահավաքության հանդիպելու պատկերը ծնողների շրջանում (արտահայտված %-ով)**      **Գծապ.21(8) Դրամահավաքության հանդիպելու հաճախականության պատկերը ծնողների շրջանում (արտահայտված %-ով)**



Այն հարցին, թե վերջին մեկ տարվա ընթացքում երբևէ՞ հանդիպել են (կամ տեղեկացել) դրամահավաքության դեպքերի ծնողների կողմից՝ հարցման մասնակիցների ընդամենը 9,1%-ն է պատասխանել է, որ հանդիպել է, 90,9%-ը պատասխանել է, որ չի հանդիպել:

Դրամահավաքության դեպքերի հանդիպած (տեղեկացած) հարցվողների 33,3%-ը նշել է, որ դրամահավաքության դեպքերը եղել են ամիսը մեկ անգամ, իսկ 66,7%-ը՝ վեց ամիսը մեկ կամ երկու անգամ: Հարցվողները խնդրել են ավելացնել, որ «դրամահավաքության» մասին գիտեն որպես հավաքվող «ֆոնդի գումար» կամ որպես հաստատություններ հաճախող երեխաների ծնողների կողմից դաստիարակների (դասակ, մանկավարժ և այլք), մարզիչների, տնօրենների նկատմամբ կամավոր կերպով «հոգատարության և ուշադրության դրսևորում» կամ միջոցառումների նյութերի ձեռք բերման համար:

**Գծապատկեր 22(9) Դրամահավաքության հանդիպելու պատկերը աշխատողների շրջանում (արտահայտված %-ով)**      **Գծապատկեր 23(10) Դրամահավաքության հանդիպելու հաճախականության պատկերը աշխատողների շրջանում**




Այն հարցին, թե վերջին մեկ տարվա ընթացքում երբևէ՞ հանդիպել են դրամահավաքության դեպքերի աշխատողների կողմից, հարցման մասնակիցների ընդամենը 9,1%-ը պատասխանել է, որ այո՝ հանդիպել է, 90,9%-ը պատասխանել է, որ չի հանդիպել:

Դրամահավաքության դեպքերի հանդիպած հարցվողների 50%-ը նշել է, որ ականատես է եղել դրամահավաքության դեպքերի վեց ամիսը մեկ կամ երկու անգամ, իսկ մյուս 50%-ը՝ վերջին մեկ տարվա ընթացքում մեկ անգամ: Հարցվողները, գրեթե բոլորը, խնդրել են նշել, որ գումարը հավաքվել է կամավորության սկզբունքով ու հիմնականում միջոցառումների համար նյութեր (օրինակ՝ մի քանիսը նշել են՝ փուչիկներ, զանգակներ, փայլեր և այլն) ձեռք բերելու կամ դաստիարակի (դասակ և այլք), մարզիչի կամ տնօրենի համար նվեր (ավելի շատ՝ ծաղկեփունջ) գնելու նպատակով:


<sup>35</sup> Մինչև դրամահավաքության դեպքերի և այլ խնդիրների մասին բազմաթիվ հրապարակումներ կան, որոնք վկայում են, որ դրանց մասին չէին կարող չլսել չորս և ավելի տարիներ աշխատած ու հատկապես կրթության ոլորտի հետ առնչություն ունեցող աշխատակիցները. ԹԻ ինտերնետային կայքի 17.12.2010թ. «Կաշառակերության անհաջող փորձ» խորագրով հրապարակումը (<http://transparency.am/hy/cases/view/4135>), [www.aravot.am](http://www.aravot.am) ինտերնետային կայքի 04.06.2011թ. «Դրամահավաքություն մանկապարտեզներում» խորագրով հրապարակման (<http://www.aravot.am/2011/06/04/333559/>) համաձայն՝ «...Կապանի մանկապարտեզներից մեկի ավարտական խմբի երեխաներից 3500-ական դրամ են հավաքել...: Ինչպես նաև՝ [www.hraparak.am](http://www.hraparak.am) ինտերնետային կայք, 17:16 - 9 / Հունիս / 2011 «Դրամահավաքությունը դպրոցներից հասել է նախակրթարան» խորագրով հոդվածում ([http://www.hraparak.am/?p=7172&l=am/dramahavaqutyuny+dprocneric+hasel\\_+e+naxakrtaran](http://www.hraparak.am/?p=7172&l=am/dramahavaqutyuny+dprocneric+hasel_+e+naxakrtaran)) նշվում է. «Դրամահավաքությունը դպրոցներից հասել է նախակրթարան... Կապանցիները կես կատակ-կես լուրջ որոշել են առաջարկել...: Նաև՝ [www.aravot.am](http://www.aravot.am) ինտերնետային կայքի 24.06.2011թ. «Քաղաքապետարանը զբաղվում է» խորագրով հրապարակումը (<http://www.aravot.am/2011/06/24/334303/>)

Իսկ ահա, պատահականության սկզբունքով ընտրված բնակիչները դրամահավաքության վերաբերյալ ունեն հետևյալ պատկերացումը.

**Գծապատկ. 24(30) Դրամահավաքության հանդիպելու պատկերը ծնողների շրջանում**




**Գծապատկ. 25(31) Դրամահավաքության հանդիպելու հաճախականության պատկերը ծնողների շրջանում**




Հարցման մասնակիցների 59,5%-ը ՆՈւՀ-երում և ԱԿՀ-ներում ծնողների կողմից վերջին մեկ տարվա ընթացքում հանդիպել կամ տեղեկացել է դրամահավաքության դեպքի, 36,2%-ը նշել է, որ չի հանդիպել, իսկ 4,3%-ը՝ հրաժարվել է այդ հարցին պատասխանել: Սակայն ըստ հարցվողների՝ դրամահավաքությունը «կամավոր, իրենց վերաբերմունքը և շնորհակալությունը հայտնելու» կամ «ֆոնդի ամենամսյա գումար հավաքելու» ձևով է արտահայտվել և առանց մարդկանց համաձայնության կամ թույլտվության՝ մարդկանցից ոչ ոք չի կարող գումար հավաքել:

Հաջորդ հարցի միջոցով փորձել ենք պարզել, թե դրամահավաքության դեպքերի հանդիպած բնակչության 59,5%-ն ինչ հաճախականությամբ է հանդիպել նման դեպքերի: Ըստ այդմ՝ հարցվածների 46,3%ը նշել է՝ ամիսը մեկ անգամ, 46,3%-ը՝ վեց ամիսը մեկ կամ երկու անգամ, իսկ 7,4%-ը՝ վերջին մեկ տարվա ընթացքում մեկ անգամ:

**Գծապ. 26(32) Դրամահավաքության հանդիպելու պատկերը աշխատողների շրջանում**



**Գծապատկ. 27 (33) Դրամահավաքության հանդիպելու հաճախականության պատկերը**



Հարցման մասնակիցների 29%-ն է ՆՈւՀ-երում և ԱԿՀ-ներում աշխատողների կողմից վերջին մեկ տարվա ընթացքում հանդիպել կամ տեղեկացել դրամահավաքության դեպքերի մասին, 66,7%-ը՝ չի հանդիպել, իսկ 4,3%-ը՝ հրաժարվել է պատասխանել:

Դրամահավաքության դեպքի հանդիպած բնակչության 29%-ից 37%-ը նշել է, որ դրամահավաքության դեպքեր եղել են ամիսը մեկ անգամ, 37%-ը՝ վեց ամիսը մեկ կամ երկու անգամ, իսկ 26%-ը՝ վերջին մեկ տարվա ընթացքում մեկ անգամ:

Իհարկե, գաղտնիք չէ, որ մեր երկրում ևս դրամահավաքությունը, որի մասին ոչ ոք չի ցանկանում բացեիբաց հանդես գալ, դպրոցներից<sup>36</sup> հասել է նաև նախակրթարան ու այդ մասին

<sup>36</sup> Civilnet.am ինտերնետային կայքի «Ահա վերջին գանգը՝ դրամահավաք» խորագրով տեսանյութից (<http://www.civilnet.am/news/2016/05/24/illegal-fundraising-corruption-school/293650> ) պարզ հասկացվում է, որ դրամահավաքության դեպքերի մասին հայտնողները չեն ցանկանում և/կամ վախենում են բացեիբաց հանդես գալ, սակայն չեն էլ ցանկանում լռել այդ մասին, և, փաստորեն, ստացվում է, որ «...բոլորն էլ փորձում են կրակից ուրիշի ձեռքով շագանակներ հանել...»:





միայն մենք չէ, որ բարձրաձայնում ենք<sup>37</sup> և, իհարկե, «Ֆոնդի համար» չնչին գումարներ հավաքելու մասին, փաստորեն չեն ժխտել անգամ Կապանի քաղաքապետարանի ոլորտի պատասխանատուները<sup>38</sup>: Իհարկե, անժխտելի է, որ պատասխանատու մարմինները միշտ էլ ուշադրության կենտրոնում են պահում նման դեպքերը<sup>39</sup> և դրանց կանխումը, սակայն, այն, որ քաղաքապետարանի ենթակայությամբ գործող կազմակերպություններում դրամահավաքության մասին ժամանակ առ ժամանակ ումանք համարձակվում են բարձրաձայնել<sup>40</sup>, ապա դա վկայում է, որ դրամահավաքությունն իր տարբեր պատճառներով

<sup>37</sup> [www.aravot.am](http://www.aravot.am) ինտերնետային կայքի 04.06.2011թ «Դրամահավաքություն մանկապարտեզներում» խորագրով հրապարակման (<http://www.aravot.am/2011/06/04/333559/>) համաձայն «...Կապանի մանկապարտեզներից մեկի ավարտական խմբի երեխաներից 3500-ական դրամ են հավաքել, որով պետք է հեռուստացույցի տակդիր գնեին, սակայն այս գումարով չեն բավարարվել եւ լրացուցիչ գումար էլ հավաքել են մանկապարտեզի աշխատակիցների համար նվերներ գնելու նպատակով: Ինչպես ծնողներն են ասում, իրենք դեմ չեն մանկապարտեզին օգնելուն, երեխաների համար անհրաժեշտ իրեր ձեռքբերելուն, բայց խոստովանում են, որ պարբերական ու պարտադիր դրամահավաքությամբ արդեն չարաշահվում է ծնողների համբերությունը: «Մենք օր երեխային ասում են վաղը 200 դրամ կբերես, էսքան գումար կբերես, տնից օձառ բեր, գուգարանի թո՛ւղթ ես բերել, որ գուգարան ես ուզում գնալ եւ այլն: Էլ չեմ խոսում դաստիարակների վերաբերմունքից ու գործածած բառերից, ուղարկում ենք մանկապարտեզ կրթելու համար, բայց դաստիարակներից վատ բառեր սովորած տուն է գալիս», - ասում է ծնողներից մեկը, ով չցանկացավ ներկայանալ...»:

<sup>38</sup> [www.hraparak.am](http://www.hraparak.am) ինտերնետային կայքի, 17:16 - 9 / Շունիս / 2011 «Դրամահավաքությունը դպրոցներից հասել է նախակրթարան» խորագրով հոդվածում (<http://www.hraparak.am/?p=%7172&l=am/dramahavaquutyuny+dprocneric+hasel+e+naxakrtaran>) նշվում է. «Դրամահավաքությունը դպրոցներից հասել է նախակրթարան Կապանցիները կես կատակ-կես լուրջ որոշել են առաջարկել քաղաքապետարանին անցկացնել մանկապարտեզների տնօրենների ատեստացիա: Եվ արդյունքում շարունակի աշխատել այն տնօրենը, ում ախորժակը փոքր է: Մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողները դժգոհում են, որ ավարտական խմբերում դաստիարակների ու տնօրենների համար նվերներ գնելու նպատակով փող են հավաքում: Նույնիսկ պատմում են, որ տնօրեններից մեկը դժգոհել է, որ իր նվերն էժան է դաստիարակի համեմատ: Իհարկե, ողջ ուսումնական տարվա ընթացքում երեխաներից ամսական 200-ական դրամ են հավաքում մանր-մունր բաներ գնելու համար: Ասենք՝ գրենական պիտույքներ, տնտեսական իրեր: Ծնողները դեմ չեն մանկապարտեզներին օգնելու մեր երեխաների համար ենք անում: Սակայն դժգոհում են դաստիարակների վերաբերմունքից՝ անբարեհամբույր են: Կապանի քաղաքապետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի բաժնի պետ Անուշ Միմոնյանը լրագրողների հետ զրույցում ասաց, որ մանկապարտեզներում արգելված է դրամահավաքությունը: «Նախկինում ֆոնդի համար 100-ական դրամ էին հավաքում, իսկ հիմա, Կապանի քաղաքապետի որոշմամբ, այդ գումարը տալիս է քաղաքապետարանը: Ավելին, մանկապարտեզներն ունեն հովանավորներ, ուստի զարմանալի է, որ նման բաներ կան», - ասաց տիկին Միմոնյանը...»:

<sup>39</sup> [www.aravot.am](http://www.aravot.am) ինտերնետային կայքի 24.06.2011թ. «Քաղաքապետարանը զբաղվում է» խորագրով հրապարակումը (<http://www.aravot.am/2011/06/24/334303/> )

<sup>40</sup> Տե՛ս սույն հաշվետվության մեջ տեղ գտած ըստ հղումների՝ գծանշումից ներքև, մեկնաբանությունների 20-րդ և նախորդող 35-39-րդ կետերը, ինչպես նաև [armllur.am](http://armllur.am) -ի (ժողովուրդ) ինտերնետային կայքի «Քաջություն ունեցեք խոսելու ճշմարտության մասին» խորագրով հրապարակումը (<http://armllur.am/303722/> ), ըստ որի. «Մյուսիքի մարզի Կապանի քաղաքապետը, «հավատարիմ» մնալով ՀՀ օրենսդրությանը, «Ակումբագրադարանային միավորում» հիմնարկի աշխատողներին թոշակի է ուղարկել լրությամբ, առանց գնահատելու կամ մեծարելու, մինչդեռ այդ մարդիկ ունեն երկար տարիների վաստակ: Առանց հաշվի առնելու այնպիսի աշխատողների, որոնք արժանացել էին պատվոգրերի, շնորհակալագրերի, դիպլոմների, ինչպես նաև՝ «Ոսկե մեդալի»: Նաև հաշվի չի առնվել առաջին կարգի հաշմանդամ, միակողմանի ծնողագուրկ երեխայի ծնողը, որը նաև արժանացել է պատվոգրերի, ինչպես նաև՝ հայրենիքին մատուցած ծառայության համար «Վազգեն Սարգսյան» կառավարական մեդալին: Քաղաքապետ Ա. Հայրապետյանը, որին դիմել էր այս ընտանիքը նյութական խնդրանքով, աջակցություն չէր ցուցաբերել: Օրենքը պետք է տարածվի բոլորի վրա, սակայն, ցավոք, սրտի քաղաքապետի հարգարժան գոքանչը, որը տարիներ առաջ էր կենսաթոշակի անցնել, աշխատում է քաղաքի նախակրթարաններից մեկում, տնօրենի հաստիքով: Իսկ պատվարժան նրա հայրը, որը յոթանասուններեք տարեկան է, աշխատում է մի այլ ոլորտում: Կապանի «Ակումբագրադարանային միավորում» հիմնարկի տնօրենը, բարեբախտաբար, յոթանասունինգ տարեկան է: Նա այնքան «վատ» է ապրում, որ տարվա մեջ աշխատողներից պարբերաբար գումար է հավաքում, իսկ այն գումարները, որոնք տրամադրվում են «Արևիկոմի» կամ քաղաքապետարանի կողմից, հեշտությամբ լվանում ու յուրացնում է: «Չգոյատեւող» տնօրենը տարին մեկ անգամ առողջարան է գնում, արձակուրդայինից բացի՝ ստանում է աշխատավարձ, իբրև այդ օրերին աշխատել է: Ի զարմանս բոլորի՝ 2015թ. Նոր տարին էլ դիմավորել է դուրբայներում: Դեռ ավելին՝ Կապանի Բաղաբերդ թաղամասի ակումբավարի փոխարեն աշխատում է նրա յոթանասուն տարեկան մայրը՝ Մ. Նուրիջանյանը, իսկ նրա աղջիկը միաժամանակ աշխատում է Կապանի «փոերից» մեկում՝ որպես հացթուխ: Այս մասին տեղյակ է պահվել Կապանի քաղաքապետին, տեղակալին, ու ոչ մի միջոց չի ձեռնարկվել, հանուն «հարկահավաք» տնօրենի տիկին Ս. Գեւորգյանի: Դեռ չեմ ասում, որ հարգարժան տնօրենը չորս տարի է քաղաքապետարանին անվանում է «քաղսովետ», հաճախակի գրադարաններին «մանկապարտեզ»:

խորն արմատներ ունի մեր մտածողության մեջ, իսկ դրա դեմ պայքարելը՝ դեռևս «կյառուզա» պիտակն է կրում:

## **7.2.6. Մատակարարներ, սնունդ, խոհանոց**

**7.2.6.1.** Հասկանալի պատճառներով, մեր մշտադիտարկման ընթացքում մենք ՆՈւՀ-երի խոհանոցներ չենք մտել, իսկ ԱԿՀ-ները և ՄԿ-ն չունեն խոհանոցներ (*միաժամանակ, հարկ է նշել, որ կողմնակի անձանց մուտքը խոհանոցներ արգելվում է և մենք ևս պարտավոր ենք հետևել այդ ցուցումին՝ ելնելով երեխաների շահերից*), ուստի կարող ենք միայն նշել այն տեղեկատվությունը, ինչ հաջողվել է գտնել համացանցում ու հարցումների ընթացքում:

**7.2.6.1.1.** ՀՀ գյուղատնտեսության սննդի անվտանգության պետական ծառայությունը դեռևս 2015թ. ստուգումներ էր կատարել հանրապետության բազմաթիվ նախադպրոցական ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ Կապանի և արդյունքում որոշ նախակրթարաններում արձանագրվել են խախտումներ<sup>41</sup> :

**7.2.6.1.2.** Իսկ ըստ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի «Թափանցիկ նախակրթարաններ» ծրագրի Ձեկույցի՝ Կապանի մանկապարտեզներին սննդամթերք և այլ ապրանքներ մատակարարող կազմակերպությունները 2015թ. դրությամբ եղել են «Զանգեզուր-Հասկ» ՍՊԸ-ն (հաց), «Կամպատ» ՍՊԸ-ն և «ՄԱՍ ԱՐ» ՍՊԸ-ն (*հաց և այլ սննդամթերք*), որոնք ապրանքներ են մատակարարել Կապանի թվով 12 ՆՈւՀ-երի (*տե՛ս նույն Ձեկույցի 22-րդ էջը կամ սույն հաշվետվության 12-րդ էջը՝ 7.1.2.1-րդ կետը*):

## **7.2.7. Տեղեկատվության տրամադրումը՝ որպես գործելաճ՝ և կարիքների գնահատման գործիք**

*(այն առանձնացվել է մեր կողմից՝ հաշվի առնելով, որ մեր կողմից հայցվող տեղեկատվությունը չի տրամադրվել թիրախային կազմակերպությունների կողմից)*

### **7.2.7.1. Տարբերակված մոտեցում (երբ հայցվող կազմակերպությունը նույնն է, իսկ հայցող կազմակերպություններն իրենց կազմակերպա-իրավական ձևով և ուղղվածությամբ ՀԿ-ներ են)**

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից հրապարակվող թերթերից մեկում՝ 13.06.2016թ. «Հավելված N 8»-ի 4-րդ էջում տեղ գտած հոդվածի և նույն կազմակերպության ինտերնետային կայքի 09 Հունիս , 2016 02:06 «Որքանո՞վ են թափանցիկ աշխատում մանկապարտեզն ու համայնքապետարանը» խորագրով հրապարակման համաձայն Կապանի թվով 12 մանկապարտեզները հայցվող տեղեկատվությունը տրամադրել են սահմանված ժամկետում<sup>42</sup>:

Գրադարանների՝ մասնագետ գրադարանավարների համար շատ վիրավորական է, երբ նրանց աշխատանքային պլանները հաստատում է ոչ մասնագետը: Հարգարժան տնօրենը, չիմանալով այդ ոլորտի հիմնական խնդիրները, մեծ տեղ է տալիս «տաշի-տուշիներին»: Հետևություն. Կապանի քաղաքապետ Ա. Հայրապետյանն այս ոլորտում ձեռք է բերել «առաջընթաց»՝ «հավատարիմ» մնալով ՀՀ օրենսդրությանը: Հոգու սափորի դատարկության պատճառով Կապան քաղաքը կորցրել է իր հիշողությունը: Ն. Ավետիսյան Կապան քաղաքի մտավորական 077736854 », ինչպես նաև՝

<sup>41</sup> Վերջին ստուգումներով Կապանի թիվ 5, 9 մանկապարտեզներում հայտնաբերվել են ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N34-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի պահանջի խախտումներ. այն է՝ խոհանոցում սննդամթերքի հետ անմիջապես շփման մեջ գտնվող սեղանների երեսպատումները կառուցված չեն եղել հիգիենայի պահանջները բավարարող նյութից, իսկ թիվ 10 և 12 մանկապարտեզներում՝ նույն որոշման նույն կետի խախտում հետևյալ կերպ. խոհանոցն ապահովված չի եղել անհրաժեշտ գույքով, մասնավորապես օգտագործվող մաքուր դանակների, պատառաքաղների և գդալների պահպանման պահարաններով: [http://www.asparez.am/news-hy/haytnabervac\\_xaxtumner\\_mankaparteznerum-hy/](http://www.asparez.am/news-hy/haytnabervac_xaxtumner_mankaparteznerum-hy/)

<sup>42</sup> [http://www.asparez.am/news-hy/armavir\\_mankapartezner-hy/#more-87347](http://www.asparez.am/news-hy/armavir_mankapartezner-hy/#more-87347)...Կապանի թվով 12 մանկապարտեզի տնօրենն էլ հնարավորինս մանրամասն ուղարկել են պահանջված տեղեկությունները՝ օրենքի սահմանված ժամկետում. 1-2 օր ուշացման դեպքում հեռախոսազանգով տեղեկացրել են: Կապանի քաղաքապետարանի

Մինչդեռ, մեր՝ գրավոր հարցումներին նույն կազմակերպություններից ոչ մեկը չի դեռևս (30.11.2016թ. դրությամբ) պատասխանել, և, միաժամանակ թիրախային կազմակերպություններից ոչ մեկը չի պահպանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում տեղեկացնելու պահանջն այն մասին, որ գրավոր հարցման պատասխանը կտրամադրվի ուշացումով:

## **7.2.7.2. Անպատասխան մնացած գրություններ՝ չտրամադրված տեղեկատվություն**

### **7.2.7.2.1. Կապանի համայնքապետարանի հասցեագրված**

Մեր՝ 12.10.2016թ. Ե-16/3 գրությամբ դիմել ենք Կապանի քաղաքապետարան և առաջնորդվելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 34-րդ, 42-րդ, 51-րդ, «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ, 6-րդ, 9-րդ, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 26-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-3-րդ, 13-րդ, 14-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 9-րդ, 16-րդ, 28-րդ, 32-րդ, 33.1-րդ, 41-րդ հոդվածների, ինչպես նաև «Կրթության մասին» և «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրության դրույթներով՝ խնդրել ենք հավաստող փաստաթղթերի տրամադրմամբ տալ տեղեկատվություն հետևյալի մասին.

1. ՆՈւՀ-երի և ԱԿՀ-ների կարիքների գնահատման (*առանձին-առանձին և ժամանակի հստակ նշումով*), անհրաժեշտ ծախսերի և բյուջեից միջոցներ հատկացնելու գործընթացի ու դրանում նշված կառույցների և բնակչության մասնակցությունն ապահովելու մասին (*կցելով ստացված առաջարկությունների, քննարկումների արձանագրությունների, գնահատման արդյունքների պատճենները*),
2. 2012թ. նոյեմբերի 15-ից մինչև 2013թ. հունվարի 15-ը և 2016թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2016թ. հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում ՆՈւՀ-երի և ԱԿՀ-ների՝ աշխատանքից ազատված կամ պայմանագիրը չերկարացված տնօրենների (*դեկլարանտների*) և նույն ժամանակահատվածում աշխատանքի ընդունվածների թվաքանակի (*առանձին-առանձին՝ ժամանակի ու պատճառների/հիմքերի նշումով*),
3. ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երում և ԱԿՀ-ներում դրամահավաքության հետ կապված հարցերով քաղաքացիներից ստացած դիմում-բողոքների, արձանագրված, ընթացք ստացած դեպքերի և դրանց փաստական ու իրավական հետևանքների (*եթե այդպիսի դեպքեր եղել են*),
4. ՆՈւՀ-երում և ԱԿՀ-ներում ծնողական և խմբակներում ուսումնառության վարձավճարների սահմանման գործընթացում բնակչության ներգրավվածությունն ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցների և ապահովված լինելու (*կցելով ստացված առաջարկությունների, քննարկումների արձանագրությունների, վարձավճարները սահմանելու մասին որոշումների պատճենները*),
5. 2011-2016 թվականներին նշված հաստատություններում վերանորոգման աշխատանքներ կատարած և ապրանքներ մատակարարած տնտեսվարող սուբյեկտների / կազմակերպությունների (*առանձին-առանձին նշելով, թե որ կազմակերպությունների կողմից որ հաստատություններն են վերանորոգվել և ովքեր ու ինչ ապրանքներ են մատակարարել*):

Գրությամբ խնդրել ենք նաև ՆՈւՀ-երը և ԱԿՀ-ները ղեկավարող անձանց (տնօրեններին) հանձնարարել և/կամ առաջարկել, որպեսզի պայմաններ ստեղծվեն (*ուսումնական գործընթացը չխաթարվելու նպատակով*) և թույլատրվի մեր Ծրագրի հարցազրուցավարներին իրականացնելու մշտադիտարկում վերոնշյալ հաստատությունում, մասնավորապես հետևյալ նպատակով.

6. խմբասենյակների, դահլիճի, սանհանգույցների վիճակի պարզման,
7. երեխաների շարժի մատյանին և ծնողների հետ կնքված երեխաների ուսումնառության պայմանագրերի ՆՈւՀ-ում և ԱԿՀ-ներում առկա օրինակներին ծանոթանալու,
8. աշխատողների (*ընտրությունը կկատարվի տեղում*) հետ հարցաթերթ լրացնելու:

Միաժամանակ, քաղաքապետարան հասցեագրված գրությամբ տեղեկացրել ենք, որ առանձին գրություններով նշված հաստատություններից խնդրելու ենք տրամադրել իրենց գործունեությանը վերաբերող տեղեկատվություն՝ ակնկալելով իր քաղաքապետի, հանձնարարականը, ինչպես նաև հաշվետվողականություն, թափանցիկություն և աջակցելու պատրաստականություն:

### **7.2.7.2.2. Կապանի ՆՈւՀ-եր հասցեագրված**

Մեր՝ 12.10.2016թ. Ե-16/4 – Ե-16/16 գրություններով դիմել ենք Կապանի թիվ 12 ՆՈւՀ-եր (*թիվ 8 ՆՈւՀ-ի «Կավարտ» մ/ձ՝ առանձին գրություն*) և առաջնորդվելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 34-րդ, 42-րդ, 51-րդ, «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ, 6-րդ, 9-րդ, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 26-րդ հոդվածների, ինչպես նաև «Կրթության մասին» և «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի «Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա նախադպրոցական կրթության կազմակերպման ծախսերը ֆինանսավորելու մասին» թիվ 1427-Ն որոշման, ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. հունվարի 26-ի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքների, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» թիվ 29-Ն հրամանի, ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. հուլիսի 28-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա «Նախադպրոցական ուսումնական հաստատություններ երեխաների շարժի մատյանի ձևաթուղթը, գործածության և վարման կարգը» հաստատելու մասին» թիվ 870-Ն հրամանի, ՀՀ ԿԳ նախարարի 2012թ. սեպտեմբերի 18-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական հագեցվածության նորմատիվները (*«Փափուկ գույքի հագեցվածության նորմատիվները՝ ըստ նախադպրոցական ուսումնական հաստատությունների տեսակների և խմբերի»*) հաստատելու մասին» թիվ 858-Ն հրամանի դրույթներով՝ խնդրել ենք պայմաններ ստեղծել (ուսումնական գործընթացը չխաթարվելու նպատակով) և թույլատրել մեր Ծրագրի հարցազրուցավարներին իրականացնելու մշտադիտարկում իրենց հաստատություններում, մասնավորապես նշելով հետևյալ նպատակները.

1. խմբասենյակների, դահլիճի, սանհանգույցների, վիճակի պարզման,
2. երեխաների շարժի մատյանին և ծնողների հետ կնքված երեխաների ուսումնառության պայմանագրերի ՆՈւՀ-ում առկա օրինակներին ծանոթանալու,
3. աշխատողների (*ընտրությունը կկատարվի տեղում*) հետ հարցաթերթ լրացնելու:

Միաժամանակ խնդրել ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

4. 2016-2017 ուս. տարում ՆՈւՀ ընդունվելու համար դիմում ներկայացրած երեխաների թվաքանակի, այդ թվում՝ ՆՈւՀ ընդունված և խմբերի հագեցվածության (*համալրված լինելու*) պատճառով ՆՈւՀ ընդունված երեխաների,
5. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թվաքանակի,

6. ՆՈւՀ ընդունվելու համար դիմած երեխաների հաշվառման և/կամ հերթագրման իրականացման ընթացակարգի (վարման կարգի և բնույթի),
7. ծնողական վարձավճարի (երեխայի ուսումնառության վճար) գեղչերից օգտվող երեխաների թվաքանակի՝ աձանձնացնելով թվերն ըստ արտոնություն սահմանող կարգավիճակների (օր՝ ծնողագուրկ և/կամ Արցախյան ազատամարտում զոհվածների երեխաներ),
8. վերջին մեկ տարվա ընթացքում ծնողների կողմից ՆՈւՀ ներկայացված դիմում-բողոքների կամ առաջարկությունների բնույթի և թվի (ինչ հարցով, քանի դիմում),
9. դրամահավաքության վերաբերյալ արձանագրված, ընթացք ստացած դեպքերի և դրանց փաստական ու իրավական հետևանքների (եթե այդպիսի դեպքեր եղել են),
10. 2012թ. նոյեմբերի 15-ից մինչև 2013թ. հունվարի 15-ը և 2016թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2016թ. հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատված կամ պայմանագիրը չերկարացված աշխատողների և նույն ժամանակահատվածում աշխատանքի ընդունված աշխատողների թվաքանակի (առանձին-առանձին՝ ժամանակի նշումով),
11. 2016-2017 ուս. տարվա ընթացքում կենսաթոշակի տարիքը լրացող աշխատակիցների թվաքանակի և պաշտոնի (հաստիքի),
12. ՆՈւՀ-ում ներկայումս առկա թափուր հաստիքների,
13. 2011-2016 թվականներին մատակարարների (առանձին-առանձին նշելով, թե ովքեր և ինչ ապրանքներ են մատակարարել),
14. Փաստաթղթաշրջանառության արխիվացման առկայության կամ բացակայության պատճառների,
15. ՆՈւՀ կողմնակի անձանց մուտքն արգելելու նպատակով ձեռնարկվող միջոցառումների և անվտանգությունն ապահովող աշխատակցի առկայության, վերջինիս հմտությունների և պատրաստվածության:

Գրություններով խնդրել ենք նաև պատասխան գրություններին կից տրամադրել ՆՈւՀ-երի կանոնադրությունների և կրթական գործունեության լիցենզիաների պատճենները:

**7.2.7.2.3. Կապանի ԱԿՀ-ներ հասցեագրված**

Մեր՝ 12.10.2016թ. Ե-16/17 – Ե-16/26 գրություններով դիմել ենք Կապանի ԱԿՀ-ներ և առաջնորդվելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 34-րդ, 42-րդ, 51-րդ, «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ, 6-րդ, 9-րդ, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 26-րդ հոդվածների, ինչպես նաև «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրության դրույթներով՝ խնդրել ենք պայմաններ ստեղծել (ուսումնական գործընթացը չխաթարվելու նպատակով) և թույլատրել մեր Ծրագրի հարցազրուցավարներին իրականացնելու մշտադիտարկում իրենց հաստատություններում, մասնավորապես հետևյալ նպատակով.

1. խմբասենյակների, դահլիճների, սանհանգույցների, վիճակի պարզման,
  2. ծնողների հետ կնքված՝ երեխաների ուսումնառության (խմբակ հաճախելու) պայմանագրերի ԱԿՀ-ում առկա օրինակներին ծանոթանալու (եթե այդպիսիք առկա են),
  3. աշխատողների (ընտրությունը կկատարվի տեղում) հետ հարցաթերթ լրացնելու:
- Միաժամանակ խնդրել ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.
4. 2016-2017 ուս. տարում ԱԿՀ ընդունվելու (հաճախելու) համար դիմում ներկայացրած երեխաների թվաքանակի, այդ թվում՝ ԱԿՀ ընդունված (ըստ խմբակների՝ առանձին-առանձին) և խմբերի (խմբակների) հագեցվածության (համալրված լինելու) պատճառով ԱԿՀ չընդունված երեխաների,
  5. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թվաքանակի,

6. ԱԿՀ ընդունվելու համար դիմած երեխաների հաշվառման և/կամ հերթագրման իրականացման ընթացակարգի (*վարման կարգի և բնույթի*),
7. խմբերի (*խմբակների*) վարձավճարի (*երեխայի ուսումնառության վճար*) գեղչերից օգտվող երեխաների թվաքանակի՝ աձանձնացնելով թվերն ըստ արտոնություն սահմանող կարգավիճակների և խմբակների (*օր՝ ծնողագուրկ և/կամ Արցախյան ազատամարտում զոհվածների երեխաներ՝ պարի խմբակում*),
8. վերջին մեկ տարվա ընթացքում ծնողների կողմից ԱԿՀ ներկայացված դիմում-բողոքների կամ առաջարկությունների բնույթի և թվի (*ինչ հարցով, քանի դիմում*),
9. դրամահավաքության վերաբերյալ արձանագրված, ընթացք ստացած դեպքերի և դրանց փաստական ու իրավական հետևանքների (*եթե այդպիսի դեպքեր եղել են*),
10. 2012թ. նոյեմբերի 15-ից մինչև 2013թ. հունվարի 15-ը և 2016թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2016թ. հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատված կամ պայմանագիրը չերկարացված աշխատողների (*խմբակավարներ, մարզիչներ, մանկավարժներ*) և նույն ժամանակահատվածում աշխատանքի ընդունված աշխատողների թվաքանակի (*առանձին-առանձին՝ ժամանակի նշումով*),
11. 2016-2017 ուս. տարվա ընթացքում կենսաթոշակի տարիքը լրացող աշխատակիցների թվաքանակի և պաշտոնի (*հաստիքի*),
12. ԱԿՀ-ում ներկայումս առկա թափուր հաստիքների,
13. 2011-2016 թվականներին մատակարարների (*առանձին-առանձին նշելով, թե ովքեր և ինչ ապրանքներ են մատակարարել*),
14. Փաստաթղթաշրջանառության արխիվացման առկայության կամ բացակայության պատճառների,
15. ԱԿՀ կողմնակի անձանց մուտքն արգելելու նպատակով ձեռնարկվող միջոցառումների և անվտանգությունն ապահովող աշխատակցի առկայության, վերջինիս հմտությունների և պատրաստվածության:

Խնդրել ենք նաև պատասխան գրություններին կից տրամադրել իրենց՝ հայցվող կազմակերպությունների, կանոնադրությունների և կրթական գործունեության լիցենզիաների պատճենները:

## VIII. Եզրակացություն-ամփոփում

Ծրագրային Թիմի կողմից իրականացված հարցումների, դիտարկման, ներկայացված առաջարկությունների և համացանցի ուսումնասիրության միջոցով (*արդյունքում*) ձեռք բերված տեղեկատվության ընդհանրացումը վկայում է հետևյալի մասին.

- ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և ռազմավարության իրականացման միջոցառումների 2015-2018թթ ծրագրում բացակայում են հստակ դրույթներ՝ նախադպրոցական և արտադպրոցական կրթության ոլորտի կոռուպցիոն խնդիրների ու դրանց լուծումների վերաբերյալ,
- Կապանում ՏԻՄ ընտրությունները չեն դարձել կադրերի փոփոխության (*«կադրային ջարդ»*) շարժառիթ կամ առիթ<sup>43</sup>,
- Կապանի համայնքապետարանի և համայքապետարանի ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների, ՄԿ-ի կրթության ոլորտում (*և ընդհանրապես*) իրականացրած գործունեությունը բնակչության լայն շերտերի համար մնում է դեռևս չլուսաբանված, հետևաբար՝ ոչ թափանցիկ ու ոչ հաշվետվողական, քանի որ Կապանի համայնքապետարանի կայքում այդ

<sup>43</sup> Նշվում էր հակառակի մասին՝ Երկիր Մեդիա, (<http://www.yerkir.am/news/view/114016.html>)--28 Սեպտեմբերի 2016, 17:35: «Գնում են ընտրությունների՝ կապանցիների մի ստվար զանգվածի պահանջով» խորագրով հարցազրույցը: **Բայց և մեզ համար անհասկանալի է**, որ 07.11.2016թ. իր դիմումով աշխատանքից ազատվել է Կապանի թիվ 4 ՆՈւՀ-ի տնօրենը (պատճառները պարզել չհաջողվեց), իսկ համայնքային ենթակայությամբ գործող կազմակերպություններում մինչև 20% կրճատումներ պետք է լինեն:



հնարավորությունը չի ապահովվում, համայնքապետարանի ենթակայությամբ գործող թիրախային կազմակերպությունները դեռ չունեն առանձին կայքեր ունենալու հնարավորություն, Մյունիքի մարզպետարանի և համապատասխան նախարարությունների կայքերում Կապանի ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների (*բացակայում է տեղեկատվությունը ՄԿ-ի մասին*) վերաբերյալ տվյալները ստացվում են (*պետք է ստացվեն*) Կապանի համայնքապետարանից և թարմացված չեն կամ սխալ են լրացված (*պայմանավորված՝ տրամադրված տեղեկատվությամբ*),

- հանրությունը թիրախային կազմակերպություններում առկա շենքային (*այդ թվում՝ դահլիճներ, խմբասենյակներ, սանհանգույցներ և այլն*) վատ, ծայրահեղ ու անտանելի պայմանների և այլ խնդիրների մասին տեղեկացվում է ՋԼՄ-ների միջոցով և միայն այն դեպքերում, երբ այլևս հնարավոր չէ թաքցնել կամ արդեն իսկ սկսվում են վերանորոգման աշխատանքները (*դրա վառ ապացույցը՝ Կապանի արվեստի մանկական դպրոցը*),
- թիրախային կառույցների և քաղաքացիական հասարակական կազմակերպությունների ու դրանց ներկայացուցիչների միջև շարունակում են գոյություն ունենալ անվստահությունը և համագործակցության առավելապես տեսական մակարդակի բանակցումը կամ, լավագույն դեպքում, համատեղ տոնական (*ժամանցային*) կամ այլ նմանաբնույթ միջոցառումների կազմակերպումը (*այդ են վկայում նաև թիրախային որոշ կազմակերպությունների տնօրենների (կամ համայնքապետարանի ոլորտային որոշ պատասխանատուների) կողմից իրենց աշխատակիցների (ենթակաների) խոսքի, կարծիք հայտնելու ազատությունը սահմանափակելն ու հարցումներին մասնակցելու արգելքը, ինչպես նաև՝ տվյալ աշխատակիցների՝ իրենց իրավունքներին իրազեկ չլինելը և/կամ իրավունքները չիրացնելը*),
- մեզանում դեռևս շարունակում են արմատացած մնալ «դրամահավաքության» և «կոռուպցիոն ռիսկեր պարունակող» այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են «մաղարիչաբանություն»-ն ու «շնորհակալագիտություն»-ը. մարդկանց պատկերացումներում ՆՈւՀ-ի, ԱԿՀ-ի և/կամ ՄԿ-ի աշխատակիցը կատարում է ավելին ու աշխատավարձից զատ արժանի է նաև «նյութականացված վերաբերմունքի»: Հարցումները ցույց տվեցին, որ հասարակության մի մասը դեռ պատկերացում չունի, թե ինչպիսի դրսևորումներով կարող է արտահայտված լինել կոռուպցիան<sup>44</sup> և կոռուպցիոն ռիսկը կրթության ոլորտում, հետևաբար, դեռ հեռու են այն

<sup>44</sup> Օրինակ, մեր Օրագրի Հարցազրուցավարներին ծնողներից ոչ ոք չըողորբեց, թե ինքը ստիպված է մանկապարտեզում իր երեխային պարի կամ կերպարվեստի խմբակ ընդգրկելու համար լրացուցիչ գումար վճարել, սակայն այն, որ որոշ մանկապարտեզներում երեխաների՝ մանկապարտեզում գտնվելու ժամերին, լրացուցիչ կերպով պարի կամ կերպարվեստի «խմբակ»-ում (լրացուցիչ և անհատական պարավունքներ) ընդգրկվելու համար լրացուցիչ գումար է վճարվում՝ մենք լսել էինք դեռևս ամիսներ առաջ: Եվ իրականում, խնդիրն այն է, որ հանրությունը ևս անտարբեր է նման դրսևորումների նկատմամբ ու չի վստահում ՔՀԿ սեկտորի ներկայացուցիչներին այնպես, որպեսզի անկեղծորեն նշի դրամահավաքության մասին և հարկ եղած դեպքում պնդի, ապացուցի իր հայտնած տեղեկությունը: Ավելին, շատերը հրաժարվում, լռում և փորձում են շրջանցել դրամահավաքության, կոռուպցիայի և այլ նմանատիպ տեքստով հարցերը դա համարելով անարդյունավետ «հողմադացների դեմ պայքար»: Մենք փորձեցինք դրամահավաքության կամ ուսումնառության վարձավճարից ավելին վճարելու մասին հստակ և հարկ եղած դեպքում՝ պարզաբանվող տեղեկատվություն ստանալ գոնե ֆեյսբուքյան հարթակում հայտարարություն գետեղելով, սակայն այս դեպքում ևս, ոչ ոք չցանկացավ արձագանքել և բարձրաձայնել խնդիրների մասին (մեկնաբանություններ չեղան, բացի հավանումները) (<https://www.facebook.com/photo.php?fbid=515624735314005&set=a.130041827205633.1073741831.100005994482128&type=3&theater> «Լռել՝ նշանակում է անտեսել...»)

*Հարզելի՝ կապանցիներ,*  
*Որքա՞ն...ու՞մ...որտե՞ղ և ինչպես եք Դու՞ք վճարում ծնողական կամ խմբակի ուսումնառության վարձավճարը:*  
*Բախվե՞լ էք արդյոք դրամահավաքության դեպքերի կամ այլ խնդիրների՝ Կապանի մանկապարտեզներում կամ արտադպրոցական կրթական (դաստիարակության) հաստատություններում...*  
*«Օրենքը՝ հանուն իրավունքի գերակայության» հասարակական կազմակերպությունն իրականացնում է «Մատչելի կրթություն՝ առանց կոռուպցիոն ռիսկերի և տարբերակված մոտեցման» ծրագիրը, որի նպատակն է վեր հանել համայնքային ենթակայությամբ գործող կրթական հաստատությունների հիմնախնդիրները:*  
*Կապանի ավագանու 25.12.2013թ. N 138-Ն որոշման համաձայն.*

.....  
*Դուք կարող եք Ձեզ մտահոգող խնդիրների մասին ոչ միայն բարձրաձայնել, այլև՝ լուծել դրանք մեր միջոցով:*  
*Հարգանքով՝ Օրագրային Թիմ*  
*30Вы, Лиана Согомоян, Lusine Gevorgyan и еще 27*  
*31 публикация*  
*Комментарии: 1*  
*Комментарии*

պատկերացումները, թե ինչպես պետք է «աչք փակել»-ու փոխարեն՝ պայքարել դրա դեմ ու կանխել այն *(խնդիրների մասին գիտեն շատերը, սակայն բարձրաձայնում, իրապես ներկայացնում ու դրա դեմ պայքարելուն պատրաստ են քչերը. մի երևույթ, որն անխոս խրախուսվում և/կամ ընդունվում է հասարակության լայն շերտերի կողմից)*,

- հանրության զգալի մասն իրագեկված չէ, որ իրավունք ունի մասնակցել ՆՈւՀ-երի և ԱԿՀ-ների վարձավճարների դրույքաչափերի սահմանման գործընթացին, ներկայացնել առաջարկություններ և ընդհանրապես լսված լինել,
- թիրախային հաստատություններում թափուր աշխատատեղերի համալրման գործընթացը մնում է «հույժ գաղտնի»՝ չապահովելով թափուր աշխատատեղերի համալրման մատչելիությունն ու մրցութային կարգով սահմանված պահանջներին բավարարող յուրաքանչյուրի՝ մրցույթի մասնակցելու և/կամ աշխատանքի ընդունվելու հնարավորությունը *(այդ պահանջը չի ապահովվում անգամ համայնքապետարանի կողմից)*,
- անհրաժեշտ է ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների, ՄԿ-ի հիմնախնդիրները լուծել ըստ առաջնահերթության կամ հնարավորություն ստեղծել, որպեսզի բարերարների *(գործարարների)* կողմից ներդրումները նույնպես այդ սկզբունքով նպատակին հասցվեն *(բացառությամբ այն դեպքերի, երբ բարերարը կոնկրետ հաստատության է ցանկանում օգնել<sup>45</sup> տեղեկանալով հանդերձ, որ կան այլ խնդիրներ)*,
- տեղեկատվության հայցումն ու տրամադրումը դիտարկվում են որպես երևույթներ, որոնք պարտադիր վատ հետևանքների պետք է հանգեցնեն, մինչդեռ տեղեկատվության հայցումը մեր դեպքում՝ ակնհայտորեն կոչված էր խնդիրները վեր հանելուն և դրանց լուծման նպատակով առաջարկություններ ներկայացնելուն, հասկապես, որ մեր կողմից հայցվող տեղեկատվության տրամադրումն արգելված չէ օրենքով և արդեն իսկ պետք է պատրաստի լիներ, հետևաբար բավարար կլիներ այն ամբողջացնել ու տրամադրել հաշված օրերի ընթացքում՝ հաշվի առնելով, որ հայցվող կազմակերպությունների աշխատանքն ամենօրյա և շարունակական բնույթի է *(կարծում ենք առկա տեղեկատվությունը պետք է միայն պարբերաբար թարմացվի)*:

**Մեր Ծրագրային Թիմի և Ծրագրի վերաբերյալ հատուկ կարծիքը**—Ակնհայտ է, որ նման ուղղվածությամբ, նույնաբնույթ նպատակներով, այդչափ ծավալով աշխատանքների իրականացման (կազմակերպման) համար երկու ամիս ժամանակը շատ կարճ է, իսկ նմանատիպ ծրագրերի իրականացումը մարդկային լրացուցիչ ռեսուրսներ է պահանջում: Միաժամանակ, կարճ ժամանակաընթացքում հնարավոր չի լինում պարզել բոլոր այն համակարգային հիմնախնդիրները, որոնց մասին շատերը չեն ցանկանում խոսել. հանրությունը հակակոռուպցիոն միջոցառումներին և ծրագրերին դժվարությամբ է արձագանքում: Նշվածից ելնելով՝ Ծրագրային Թիմի աշխատանքը հաջողված ենք համարում:

## **IX. Առաջարկություններ**



*Հրայր Խաչատրյան...գարմանայի ու անհասկանալի է, որ քչերն են մեր Թիմի հետ կապ հաստատում...կարծում էի մենք կապանցիներս, ավելի ակտիվ ենք, երբ խոսքը վերաբերում է այնպիսի հարցերի, որոնք օբյեկտիվություն և հետևողականություն են պահանջում...)*

<sup>45</sup> Օրինակ, գաղտնիք չէ, որ «Դանդի փրիշու մեթալ-Կապան» ՓԲԸ-ն որոշ մանկապարտեզների և այլ կազմակերպությունների պարբերաբար աջակցություն է ցուցաբերել, մինչդեռ նույն այդ ժամանակ եղել են այլ մանկապարտեզներ, ինչպես նաև արտադարձական կրթական հաստատություններ կամ այլ կառույցներ (օրինակ՝ Կապանի մարմնամարզության մարզադպրոցը, Կապանի արվեստի դպրոցը. Կապանի մանկական կենտրոնը, Կապանի թիվ 10 ՆՈւՀ-ը և այլ), որոնցում ավելի հրատապ լուծումներ պահանջող խնդիրներ են եղել, սակայն դրանց վերաբերյալ գուցե և չի բարձրաձայնվել կամ ներկայացվել (այդ հարցին կարող են պատասխանել տվյալ կազմակերպությունների պատասխանատուները):

Ելնեով վերոգրյալում տեղ գտած իրողության ամփոփ անդրադարձից՝ Ծրագրային թիւը Կապան համայնքի ղեկավարին և համայնքային ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների, ՄԿ-ի տնօրեններին, ինչպես նաև Սյունիքի մարզպետին, ՀՀ կրթության և գիտության նախարարին, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին **առաջարկում և խնդրում է** հանձնարարել, որպեսզի իրականացվեն *(իրագործվեն)* հետևյալ առաջարկությունները.

**Առաջարկություն և խնդրանք՝ Կապան համայնքի ղեկավարին, ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների, ՄԿ-ի տնօրեններին.**

- անհրաժեշտ է ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների և ՄԿ-ի անվանումներով ցուցանակներ տեղադրել *(փակցնել)* նշված կազմակերպությունների տարածքների *(բակերի)* մուտքերի մոտ *(շենքերի մուտքերից չհանելով առկա ցուցանակները)*,
- անհրաժեշտ է ապահովել տեղեկատվության մատչելիություն<sup>46</sup> և Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքը կատարելագործել *(հնարավորություններ ավելացնել)* կամ դարձնել այնպիսին<sup>47</sup>, որպեսզի կայքը հնարավորություն ընձեռնի տեղեկանալ համայնքային ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների, ՄԿ-ի առկայության, կազմակերպա-իրավական ձևի (կարգավիճակի), գործունեության, գտնվելու վայրի, խմբերի և հաճախող երեխաների թվաքանակի, ՆՈւՀ-երի դեպքում՝ երեխաների ընդունման հնարավորության առավելագույն թվի և հաճախելու նպատակով արդեն իսկ հերթագրված երեխաների թվի *(ցանկալի է, որ ՆՈւՀ-երը հերթագրվողների տվյալներն իրար փոխանցեն կամ դա կենտրոնացված ցուցակով արվի, որպեսզի բացառվի կրկնակի հերթագրումը՝ իր հետևանքներով հանդերձ)* վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կապ հաստատել նշված կազմակերպությունների հետ, ինչպես նաև՝ տեղեկանալ հաստատություններից յուրաքանչյուրում առկա խնդիրների վերաբերյալ ու հարկ եղած դեպքում՝ աջակցություն ցուցաբերել *(նշված լինի բանկային Հ/Հ)* և տեսնել աջակցության արդյունքը *(կատարված աշխատանքը)*, իհարկե հնարավորության դեպքում ցանկալի է, որ ՆՈւՀ-երը, ԱԿՀ-ները և ՄԿ-ն իրենց կայքերն ունենան, որպեսզի անհրաժեշտ տեղեկատվությունը զետեղվի այդտեղ, իսկ մինչ այդ՝ ցանկալի է, որ վերանայվեն գոնե ֆեյսբուկյան պրոֆիլները (եջ, խումբ), որոնք ներկայումս ապահովում են կազմակերպությունների «պաշտոնական» լուսաբանումը,
- Կապանի համայնքապետարանի կայքում տեղ գտած այն տեղեկատվությունը, որը վերաբերում է համայնքի մանկապարտեզ կամ երաժշտական դպրոց դիմելուն՝ կարիք ունի շտկման (Չարենցավանի փոխարեն նշվի Կապան), վարձավճարների դրույքաչափերը կարիք ունեն համապատասխանեցման, մատուցվող ծառայությունները թվարկման և բնութագրման,
- անհրաժեշտ է մատչելի, թափանցիկ և հաշվետվողական դարձնել համայնքապետարանում, ՆՈւՀ-երում, ԱԿՀ-ներում, ՄԿ-ում թափուր աշխատատեղերի, դրանց համալրման

<sup>46</sup> Ապահովվեն գոնե «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նվազագույն պահանջները, այսինքն՝ հնարավորինս սեղմ ժամկետում և պարբերաբար Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքում, ՆՈւՀ-երի ԱԿՀ-ների, ՄԿ-ի տեսանելի տեղերում փակցված ցուցատախտակներին տեղեկատվություն տնօրինողները տարին առնվազն մեկ անգամ հրապարակեն իրենց գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկություններն ու դրանցում կատարված փոփոխությունները, մասնավորապես. **1)** հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները ու դրանց դրույքաչափերը, **2)** երեխաների հերթագրման, ընդունելության, երեխաներ ընդունելու առավելագույն հնարավորության (տեղերի) թիվը և անհրաժեշտ (պահանջվող) փաստաթղթերի ցանկը, **3)** առկա խմբերի (խմբակներ, բաժիններ) և հաճախող երեխաների թվաքանակը, **4)** բյուջեն, **5)** գրավոր հարցումների, դիմում-բողոքների և առաջարկությունների ձևանմուշները, դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները, **6)** հաստիքացուցակները, ինչպես նաև պատասխանատուների կոնտակտները (անուն-ազգանուն, պաշտոն, աշխատանքի վայրի հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և այլ), **7)** աշխատանքի ընդունման կարգը, առաջադրվող պահանջները և թափուր աշխատատեղերը, **8)** քաղաքացիների ընդունելության կարգը (այդ թվում՝ օր, ժամ և վայր), տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը, **9)** ստացված հարցումների, դիմում-բողոքների և առաջարկությունների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը, **10)** նախորդող կետերում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները և այլն:

<sup>47</sup> Հաջողված փորձը, ինչպես նշվել էր արդեն՝ Երևանի համայնքապետարանի պաշտոնական կայքը:

ընթացակարգերի, կադրերի համալրման և վերապատրաստման վերաբերյալ տեղեկատվությունը,

- անհրաժեշտ է կրթական հաստատությունների հաստիքացուցակները համապատասխանեցնել օրինակելի հաստիքացուցակներին, իսկ կադրերին (*աշխատողներին և առավելապես՝ ոլորտների պատասխանատուներին*)՝ վերապատրաստման, փոխարինման կամ այլ ձևով՝ ներկայացվող պահանջներին, որպեսզի առավելապես բացառվեն նաև լրացուցիչ պարապմունքների անվան տակ պարի, կերպարվեստի և այլ դասընթացների կազմակերպումը՝ երեխաների մանկապարտեզում գտնվելու ժամանակաընթացքի հաշվին (*թեև այս տեղեկատվությունը հարցումներին մասնակցած ծնողների կողմից չվստահվեց /չբարձրաձայնվեց/ մեր հարցազրուցավարներին, այդուհանդերձ, նախկինում մեր ունեցած տեղեկատվությունն անգամ բավարար է, որպեսզի խնդրի ուսումնասիրման և հարկ եղած դեպքում՝ միջամտության նպատակով քայլեր ձեռնարկվեն և պարզաբանումներ լինեն*),
- անհրաժեշտ է, որ ՆՈւՀ-երում, ԱԿՀ-ներում և ՄԿ-ում լինեն անվտանգության աշխատակիցներ կամ կողմնակի անձանց մուտքն արգելող աշխատակիցներ (*օրինակ՝ ՆՈւՀ-երի դեպքում՝ դոնապանի հաստիքը սահմանված է ՀՀ ԿԳ նախարարի 26.01.2007թ. թիվ 29 հրամանով հաստատված օրինակելի հաստիքացուցակով, սակայն որոշ ՆՈւՀ-երի միջանցքներում սկսեցին աշխատակիցներ երևալ մեր գրությունները ստանալուց հետո միայն*): Կարիք չկա նշելու, որ Կապանի ՆՈւՀ-երում չկա նաև ֆիզկուլտուրայի հրահանգիչ (*և պարուսույց*), թեև ֆիզիկական կուլտուրան առողջ ապրելակերպի գրավականն է, իսկ կրթությունը սկսվում է մանկապարտեզից: Հաշվապահի, հոգեբանի, սոցիալական աշխատողի հաստիքների բացակայության մասին կարող ենք չնշել, քանի որ Կապանի համայնքապետարանն այդ տեսանկյունից առավել արդյունավետ լուծումներ է առաջարկել՝ ստեղծելով հաշվապահական գրասենյակ և մանկական կենտրոն (*ապահովելով կենտրոնացվածություն*),
- անհրաժեշտ է, որ Կապանի համայնքապետարանը (ՆՈւՀ-երը, ԱԿՀ-ները, ՄԿ-ն) ՀՀ Սյունիքի մարզպետարան, ՀՀ կրթության և գիտության, ինչպես նաև սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություններ պարբերաբար թարմացված տեղեկատվություն տրամադրի՝ նշված կառույցների պաշտոնական կայքերում ևս շտկումների և տեղեկատվությունն ամբողջացնելու նպատակով,
- անհրաժեշտ է համայնքապետարանի, ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների, ՄԿ-ի աշխատակիցների համար կազմակերպել կոռուպցիոն դրսևորումների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու վերջիններիս ենթակայությամբ գործող կրթական հաստատությունների և քաղաքացիական հասարակության դերակատարության, տեղեկատվության ազատության, ինչպես նաև՝ աշխատողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկումներ (*սենսիտիվներ, քննարկումներ, դասընթացներ և այլն*)՝ հաշվի առնելով տեղեկատվություն ստանալուն ուղղված մեր ջանքերն ու անհարկի և չհիմնավորված հակազդեցությունները,
- անհրաժեշտ է ուժեղացնել հսկողությունն ու զգայուն դարձնել արձագանքը՝ դրամահավաքության դեպքերի նկատմամբ և այդ նպատակով աշխատանքներ տանել թե՛ ծնողների շրջանում, թե՛ աշխատողների շրջանում (*և թե՛ երեխաների շրջանում՝ ԱԿՀ-ների դեպքում, ելնելով երեխայի տարիքից*),
- անհրաժեշտ է իրազեկել հանրությանը (*հաստատություններ հաճախող երեխաների ծնողներ, աշխատողներ, երեխաներ՝ ելնելով երեխայի տարիքից, ինչպես նաև՝ ընդհանրապես բնակչությանը*) և ստեղծել հնարավոր նպաստավոր պայմանները, որպեսզի հանրությունը մասնակիցը լինի ՆՈւՀ-երի և/կամ ԱԿՀ-ների վարձավճարների դրույքաչափերի սահմանման գործընթացին, և առհասարակ՝ ուսումնադաստիարակչական գործընթացներին (ծնողները):

**Առաջարկություն և խնդրանք՝ ՀՀ Սյունիքի մարզպետին, ՀՀ ԿԳ նախարարին, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին**

- Առաջարկել պատկան մարմիններին, որպեսզի Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների հաջորդիվ ծրագրում ներառնվեն նաև նախադպրոցական և արտադպրոցական կրթության ոլորտում կոռուպցիոն խնդիրների և դրանց համար առաջարկվող լուծումների վերաբերյալ հստակ դրույթներ,
- հանձնարարել, որպեսզի Կապանի համայնքապետին և համայնքապետարանի ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երի, ԱԿՀ-ների, ՄԿ-ի տնօրեններին ներկայացված առաջարկությունների կատարման արդյունքում անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացվի նաև Սյունիքի մարզպետարան, ՀՀ ԿԳՆ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն համապատասխան կայքերում տեղեկատվությունը թարմացնելու, շտկելու և ուղղելու համար,
- հանձնարարել, որպեսզի Կապանի համայնքապետարանի և համայնքապետարանի ենթակայությամբ գործող թիրախային հաստատությունների կողմից ապահովվեն տեղեկատվության ազատության, մատչելիության և գործելակերպի թափանցիկության ու այլ հիմնարար սկզբունքները, իսկ չլիցենզավորված հաստատությունները ժամանակին լիցենզավորվեն (*հաշվի առնելով Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի սույն հաշվետվությամբ վկայակոչված զեկույցը, որտեղ նշվում է, թե Կապանի մանկապարտեզները չունեն լիցենզիա*),
- հանձնարարել, որպեսզի սույն Ձեկույցի կապակցությամբ ապահովվի հետադարձ կապը, իսկ բարձրաձայնված խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված միջոցառումները նկատելի լինեն հանրության լայն շերտերի համար նաև:

**Առաջարկություն և խնդրանք՝ առկա հիմնախնդիրների լուծման հարցում հնարավորություն և աջակցելու ցանկություն հայտնած անձանց (ֆիզիկական և իրավաբանական)**

Ծրագիրն իրականացրած Թիմն առաջարկում է համայնքային ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երին, ԱԿՀ-ներին և/կամ ՄԿ-ին նյութական աջակցություն ցուցաբերելու ռեսուրսների առկայության դեպքում՝ այդ ռեսուրսների հասցեականությունն ընտրել նկատի առնելով առկա հիմնախնդիրների հրատապությունն ու ըստ այդմ՝ առաջնայնության հերթականությունը, քանի որ ըստ Ծրագրային Թիմի՝ խոսքն այդ դեպքում ոչ թե այս կամ այն ՆՈւՀ-ի, ԱԿՀ-ի կամ ՄԿ-ի խմբասենյակը, դահլիճը կամ սանհանգույցը վերանորոգելու կամ հիմնանորոգելու, այլ վերանորոգման (նորոգման) կամ հիմնանորոգման առավել կարիք ունեցող և չվերանորոգված կամ չհիմնանորոգված խմբասենյակը, դահլիճը կամ սանհանգույցը որոշակի ժամանակ ևս նույն վիճակով երեխաներին թողնելն է:

Լիահույս ենք, որ մեր կողմից իրականացված Ծրագրի արդյունքները օգտակար կլինեն և հնարավորություն կտան ըստ հասցեականություն առավել արդյունավետ ու նպատակային ընտրություն կատարել Կապանի ՆՈւՀ-երին, ԱԿՀ-ների և ՄԿ-ին աջակցություն ցուցաբերելիս:

**X. Հաշվետվությունը և Ձեկույցը՝ ըստ հասցեականության**

Ծրագրի շրջանակներում կազմված «Մատչելի կրթություն՝ առանց կոռուպցիոն ռիսկերի և տարբերակված մոտեցման» ծրագիր-«Ձեկույց-2016»-ը 03.12.2016թ. ՕՀԻԳ-ի էլ.փոստի [iravung.oreng.2016@gmail.com](mailto:iravung.oreng.2016@gmail.com) էլ.հասցեից ուղարկվել է հետևյալ հասցեականությամբ

- ՀՀ կրթության և գիտության նախարարություն ([info@edu.am](mailto:info@edu.am)), ԿԳՆ ընդհանուր բաժին (պատասխանատու՝ Գյուլնարա Հովհաննիսյան- [secretariat@edu.am](mailto:secretariat@edu.am), [gyulnara.hovhannisyan@edu.am](mailto:gyulnara.hovhannisyan@edu.am) ), ԿԳՆ նախադպրոցական և միջնակարգ կրթության բաժին (պատասխանատու՝ Սուսաննա Ազատյան - [susanna.azatyan@edu.am](mailto:susanna.azatyan@edu.am) ), ԿԳՆ նախադպրոցական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժին (պատասխանատու՝ Սյուզաննա Մակյան- [syuzanna.makyan@edu.am](mailto:syuzanna.makyan@edu.am)), ԿԳՆ մարզառազմական և արտատուսմանական դաստիարակության վարչություն (պատասխանատուներ՝ Արկադի Պետրոսյան, Արմինե

Բարսեղյան-a\_petrosyan@edu.am , armine.barseghyan@edu.am ), ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն (պատասխանատու՝ Արթուր Բաղդասարյան- a\_baghdasaryan@edu.am ),

- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն (տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, պատասխանատու՝ Աստղիկ Մարտիրոսյան - msy@msy.am ), նախարարության մարզական կազմակերպությունների և մանկապատանեկան սպորտի քաղաքականության վարչություն (վարչության պետ՝ Վաղինակ Գալուստյան, պատասխանատուներ՝ Գևորգ Մանուկյան, Գոհար Թադևոսյան--gevorg\_manukyan@msy.am, tadevosyan\_1960@mail.ru)
- ՀՀ Սյունիքի մարզպետարան (syunik@mta.gov.am ), մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն (պատասխանատու՝ Հովիկ Ալեքսանյան - syunik.krtutyun@mta.gov.am ), մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին (պատասխանատու՝ Աննա Ոսկանյան - syunik.yntaniq@mta.gov.am), մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին (պատասխանատու առայժմ չկա՝ syunik.press@mta.gov.am ),
- Կապանի համայնքապետարան (kapan.syuniq@mta.gov.am, mayor@kapan.am , info@kapan.am ), համայնքապետարանի ընդհանուր բաժին (secretariat@kapan.am), համայնքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժին (պատասխանատու՝ Անուշ Սիմոնյան -edu@kapan.am ), համայնքապետարանի վարչաիրավական բաժին (պատասխանատու՝ Աննա Գաբրիելյան- legal@kapan.am ),
- Կապանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մանկական կենտրոն (տնօրեն՝ Ս. Միրզոյան, mankakankentron@mail.ru ) և նախադպրոցական ուսումնական հետևյալ հաստատությունները. թիվ 1 (տնօրեն՝ Ք. Սողոմոնյան, kapan1nuh@mail.ru), թիվ 2 (տնօրեն՝ Ս. Ավանեսյան, nuh2kapan@rambler.ru), թիվ 4 (տնօրեն՝ Ժ/պ Գ. Սարգսյան, tiv4nuh@mail.ru), թիվ 5 (տնօրեն՝ Ն. Գլաստյան , kapanitiv5nuh@mail.ru), թիվ 6 (տնօրեն՝ Բ. Կոստանյան, nuh6kapan@rambler.ru), թիվ 7 (տնօրեն՝ Ռ. Հարությունյան, kapan.2013@mail.ru), թիվ 8 (տնօրեն՝ Մ. Պետրոսյան, marinepetrosyan@rambler.ru), թիվ 9 (տնօրեն՝ Ռ. Թումանյան, kapan9nuh@gmail.com), թիվ 10 (տնօրեն՝ Ռ. Դադայան, NUH.HOAK.10.KAPAN@yandex.ru), թիվ 11 (տնօրեն՝ Լ. Սարգսյան), թիվ 12 (տնօրեն՝ Լ.Սարգսյան, dgayane79@mail.ru), թիվ 13 (տնօրեն՝ Ա. Ստեփանյան, tiv13nuhhoak@yahoo.com),
- «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ (info@zcmc.am ), «Պոլիմետալ» ԲԲԸ (hr@polymetal.ru, ir@polymetalinternational.com, Կապան, հասարակայնության հետ կապերի պատասխանատու՝ Գ. Թադևոսյան, gayane.tadevosyan@polymetal.am ):

*Կից ներկայացվում է «Մատչելի կրթություն՝ առանց կոռուպցիոն ռիսկերի և տարբերակված մոտեցման» ծրագրի Զեկույցը՝ որպես սույն հաշվետվության Հավելված 1, ինչպես նաև՝ Հավելված 2-ը (էջեր՝ 49-50), որպես ֆինանսական բովանդակային հաշվետվություն:*

«Օրենքը՝ հանուն իրավունքի գերակայության» հասարակական կազմակերպություն  
Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, թ. Արամ Մանուկյան, 1-ին նրբանցք, շ. 2, բն. 12  
Էլ.փոստ. iravunq.orenq.2016@gmail.com, hrayr.khachatryan.1981@mail.ru  
հեռ. (+374 94) 50 20 86

ՕՀԻԳ ՀԿ Ծրագրային Թիմ

ՕՀԻԳ ՀԿ նախագահ, Ծրագրի ղեկավար՝

Հ. Խաչատրյան

«02» դեկտեմբեր, 2016թ.

**Հավելված-2**

50



## **Ֆինանսական հաշվետվություն**

«Օրենքը՝ հանուն իրավունքի գերակայության» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մատչելի կրթություն՝ առանց կոռուպցիոն ռիսկերի և տարբերակված մոտեցման» ծրագրի «Իրավաբանների հայկական ասոցացիա» հասարակական կազմակերպության կողմից հաստատված բյուջեն եղել է հետևյալ կերպ.

1. Ծրագրային Թիմի աշխատավարձ՝ 370 000 ՀՀ դրամ
2. Տրանսպորտային ծառայությունների համար՝ 39 000 ՀՀ դրամ, որից՝
  - 1) Կապան-Երևան-Կապան՝ 24 000 ՀՀ դրամ
  - 1) Կապանում՝ հարցումների կազմակերպման համար՝ 15 000 ՀՀ դրամ
3. Գրասենյակային պարագաներ՝ 25 000 ՀՀ դրամ,
4. Հրապարակման/հրատարակման համար՝ 45 000 ՀՀ դրամ, որից՝
  - 1) Զեկույցի տպագրություն՝ 30 000 ՀՀ դրամ,
  - 2) Տպիչի քարտրիջի լիցքավորում՝ 15 000 ՀՀ դրամ,
5. Այլ ուղղակի ծախսեր՝ 20 000 ՀՀ դրամ, որից՝
  - 1) Դասընթացների կազմակերպման համար՝ 15 000 ՀՀ դրամ,
  - 2) Հան. քննարկման համար՝ 5000 ՀՀ դրամ,
6. Թիրախային կազմակերպություններ գրությունների ուղարկման՝ 8740 ՀՀ դրամ,
7. Երևանում գիշերակաց և օրապահիկ՝ 40 000 ՀՀ դրամ

Այսպիսով, **ԻՀԱ-ի հայցվող գումարի չափը կազմել է՝ 547 740 (հինգ հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ, իսկ ՕՀԻԳ-ի ներդրումը կլինի գրասենյակի, հանրային քննարկման ձևաչափով ծրագրի արդյունքների ներկայացման համար դահլիճի, էլ.տեխնիկայի (համակարգիչ, տպիչ), կոմունալ ծախսերի (ջուր, էլ.էներգիա, հեռախոս), ինտերնետ կապի, գրենականի տեսքով:**

Ծրագրի իրականացման ընթացքում բյուջեով նախատեսված 547740 /հինգ հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր քառասուն/ ՀՀ դրամից ՕՀԻԳ-ին փոխանցված 492966 /չորս հարյուր իննուսունինը հազար ինը հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ գումարը ծախսվել է համաձայն /չնչին՝ 10%-ը չգերազանցող փոփոխություններով/ բյուջեի տողերի, ինչպես նաև ՕՀԻԳ-ի կողմից կատարվել են որոշ ծախսեր՝ համաձայն ԻՀԱ և ՕՀԻԳ-ի միջև կնքված ենթադրամաշնորհային EU-2015/20 պայմանագրի: Արդյունքում Ծրագրի իրականացման համար ծախսվել է 516120 /հինգ հարյուր տասնվեց հազար հարյուր քսան/ ՀՀ դրամ:

Բյուջեից շեղումներ եղել են հետևյալ կերպ.

1. Բյուջեի 2.1 ենթակետում նշված՝ Կապան-Երևան-Կապան ուղևորափոխադրումների համար նախատեսված 24 000 /քսանչորս հազար/ ՀՀ դրամ գումարից ծախսվել է ընդամենը 12 000 /տասներկու հազար/ ՀՀ դրամը, այսինքն՝ մեկ անգամ Կապան-Երևան-Կապան ուղևորափոխադրման համար՝ սեպտեմբերի 30-ին ԻՀԱ-ի հետ ենթադրամաշնորհային պայմանագիր կնքելու նպատակով: Մնացած 12 000 ՀՀ դրամի ծախսման անհրաժեշտությունը չի եղել, քանի որ հաշվետվությունների ներկայացման համար Կապան-Երևան-Կապան ուղևորափոխադրման գումարի վճարումն իր վրա է վերցրել ԻՀԱ-ն:
2. Բյուջեի 5.4 ենթակետով Երևանում գիշերակացի և օրապահիկի համար նախատեսված 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամից նույն նպատակի համար գումար չի ծախսվել: Սեպտեմբերի 30-ին ԻՀԱ-ն ՕՀԻԳ միջև պայմանագիր կնքելու օրվա գիշերակացի և օրապահիկի համար նախատեսված 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամն այդ կերպ տնտեսվել է և հնարավորություն տվել այն ծախսել այլ նպատակով, իսկ մնացած 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամը ծախսելու անհրաժեշտությունը չի եղել, քանի որ վերջնական հաշվետվությունը ներկայացնելիս՝ Երևանում գիշերակացը հոգալու պատրաստակամություն է հայտնել ԻՀԱ-ն:

3. Բյուջեի 3-րդ կետում ավելացվել է 3.2 ենթակետ, որի համաձայն՝ նոր քարտրիջի ձեռք բերման համար ծախսվել է 13 000 /տասներեք հազար/ ՀՀ դրամ (տպիչի քարտրիջը օգտագործել հնարավոր չի եղել և ստիպված ենք եղել նոր քարտրիջ գնել, հաշվի առնելով, որ գիշերակացի համար նախատեսված գումարից տնտեսած գումար ունենք):
4. Բյուջեի 4.1 ենթակետով Ձեկույցի՝ 30 օրինակից տպագրման համար նախատեսված 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամի փոխարեն ծախսվել /վճարվել/ է 37000 /երեսունյոթ հազար/ ՀՀ դրամ, քանի որ ի սկզբանե նախատեսվել էր, որ Ձեկույցը կլինի 12 էջանոց և յուրաքանչյուր օրինակի համար կվճարվի 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ, սակայն Ձեկույցն ավելի ծավալուն է կազմվել (*այդ մասին նշվել էր նաև այն ժամանակ, երբ Ձեկույցը տպագրելուց առաջ ուղարկվել էր ԻՀԱ-ին՝ նշվելով, որ այն նախատեսվածից ավելի ծավալուն է դարձել*) և ստիպված ենք եղել 20 էջանոց 30 օրինակից տպագրված Ձեկույցի համար վճարել 37000 ՀՀ դրամ, այսինքն՝ յուրաքանչյուր օրինակի համար՝ 1233, 3333 /մեկ հազար երկու հարյուր երեսուներեք/ ՀՀ դրամ:
5. Բյուջեի 5.3 ենթակետով նախատեսված 8740 /ութ հազար յոթ հարյուր քառասուն/ ՀՀ դրամի փոխարեն ծախսվել է 9120 /ինը հազար հարյուր քսան/ ՀՀ դրամ, քանի որ գրություններ են ուղարկվել ոչ թե 23 կազմակերպություն, այլ 24 կազմակերպություն (յուրաքանչյուր գրության ուղարկման համար՝ 380 ՀՀ դրամ):

Այսպիսով՝ Ծրագրի 547740 ՀՀ դրամից ծախսվել է 516120 ՀՀ դրամ, իսկ ԻՀԱ-ի կողմից փոխանցվել է 492966 ՀՀ դրամ, այսինքն՝ 23154 ՀՀ դրամ ավելի է ծախսվել ՕՀԻԳ-ի կողմից: Փաստորեն բյուջեի 10 % -ից՝ 54774 ՀՀ դրամից, պետք է ՕՀԻԳ-ին փոխանցվի ընդամենը 23154 ՀՀ դրամ, իսկ մնացած՝ 31620 ՀՀ դրամը փոխանցելու անհրաժեշտությունը չկա:

ՕՀԻԳ ՀԿ Ծրագրային Թիմ  
 ՕՀԻԳ ՀԿ նախագահ, Ծրագրի ղեկավար՝

Հ. Խաչատրյան

«02» դեկտեմբեր, 2016թ.